

891.99
U. 94

due.

9.79

2073

ox = 96.3

N^o 963

ԱՄՈՒՍԻՆԵՐ

ԿՕՄԵԴԻԱ

Առաջին անգամ ներկայացված է լուսելուսներից՝ Թիֆլել և Ար-
տաշիստ թաղապահում, 1890 լուսի Յունիսի 29-ին, յօդուա-
չայոց Պատմաբիուսն Ընկերութեան:

891.542-1
0-94

un
day

979

ԵՐԱԿԱՆԻ ՆԵՐ


ԿՈՄԵԳԻԱՆ ՀԻՆգ ԱՐԱՐՈՒԵՃԱ-ԱՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

✓
0.202

Дозволено цензурою. Тифлисъ, 27-го февраля 1893 года.



ወተዋሮች

1892. ՅՈՎՀԱՆՆԵԼՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
Տիպոգրաֆիя И. Мартиросиана. Тифлисъ, Орб. ул., д. 1-2.

1893

Ամենայն իրաւունք վերապահուած է:

ՏԻԿԻՆ ՍԱՓԻԸ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻՆ

Անգուղական իմ Աօֆի.

«Ամուսիններ» կօմեդիայիս բնագիրը ես
նուիրեցի Քեզ մեր ամուսնութեան քսանևհինգ-
ամեալ տարեգարձին:

Այժմ Հասարակաց սեպհականութիւն դարձ-
նելով այս երկը, ես թոյլ եմ տալիս ինձ վերըս-
տին Քո անարատ անունով զարդարել սրան:

Թող Քո մաքուր կենցաղը պաշտպանէ գրուած-
քիս իմաստն ու նպատակը և թող Քո բարե-
կըթութեան ճառագայթը լուսազարդէ այն
պատկերները, որ ես նկարագրել եմ սրա մէջ:

Քո Գաբրիէլ:



979-2013

14.974

ԿՈՒ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐԿԱԴԻ ՍԱՄՍՈՆԵԱՆ, Կշանա-
Հոր պաշտօնեայ Պ. Պ. ՔՈԼԱՆԹԱՐԵԱՆ
ՄԱՐԳԱՐԻՏ, սրա կինը Օր. Ե. ՆԱԶԱՐԵԿԵԱՆ
ԱԲԵԼ ՄԱՍԱԿԵԱՆ, Սամանեա-
Նի սառըագեալ Պ. Ա. ՄԱՆԴԻՆԵԱՆ
ԷԼԻԶ, սրա կինը Օր. Շ. ԽԻԹԱՐԵԱՆ
ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՐՎԱՐԵԱՆ, այ-
բե կին Տ. Մ. ԽՈՍՔՈՎԵԱՆ
ՀԵՂԻՆԵԱՆԹԱՌԱՄ, ուրբ աղ-
ջեկ, վարժուհի Տ. Հ. ԱԻԹԱՆԴԻՆԵԱՆ
ԱՐՏՈՉԵՍ ԱՐԱՄԵԱՆ, աղայ . . Պ. Վ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ
ԼԵՒՈՆ ՇԻՐԱԿԵԱՆ, գիւղա-
տնակա Պ. Լ. ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԱՆՈՒԾ | մի խումբ Օր. Մ. ԲՈՒՂՅԱՆԵԱՆ
ՆՈՒՆՈՒԾ | որիորդներ Օր. Ա. Մ. Ա.ՍԻԼԵԱՆ
ՀՈՒՓՍՈ | օրիորդներ Օր. Ն. ՂԱԼՈՒՄԵԱՆ
ՍԵՍԻԼ, աղախին Օր. Մ. Մ. ԱՍԻԼԵԱՆ
ԱՆԱՀԻՑ, մի ուրիշ աղախին . . Օր. Ա. ՀԵԶՈՒԹԵԱՆ
ՍՊԱՍԱՐՈՐ Պ. Գ. ՄԻՐԱԴԵԱՆ *)

Առաջին արարուածը կատարվում է «Ժողովաճանի» այգում,
երկրորդն ու երրորդը Սամաննեանի տանը, իսկ չորրորդն
ու հինգերորդը Մարգարտի և Հեղինեի կացարանում:

Անցքը պատահում է Թիֆլիզում:

*) Առաջին ներկայացմանը մասնակցել են նաև Օր.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՅ ՀԱՍՏԿ

Ըրկադի՝ 42 տարեկան:
Մարդարիտ՝ 25 տ.
Աբէլ՝ 50 տ.
Էլիզ՝ 27 տ.
Վարդուհի՝ 30 տ.
Հեղինէ՝ 22 տ.
Արտաշէս՝ 30 տ.
Լևոն՝ 28 տ.
Ահսիլ՝ 20 տ.
Անահիտ՝ 30 տ.
Սպասաւոր՝ 45 տ.
Անուշ, Նունուշ, Հոխիսօ՝ 18—20 տ.

Ամենքն Էլ եւրոպական հագուստով:

Վ. ԴՈՒԼԻԶԱՆԵԱՆԻ և Օր. Ե. ՍՈՒՐԳՈՒԵԱՆԻ մէ տե-
սէլ մէջ, որ այժմ բաց է թողուած:

Ա.ՐԱ.ՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է «Թիֆլիսի ժողովարանի» այգին, ըն-
տանեկան երեկոյթի ժամանակ։ Աջ ու ձախ, ծառերի
տակ, նատարածներ, խորքումը ուսունդ, ուր ժամանակ
առ ժամանակ պարում են։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԷԼԻԶ, ԱՐԿԱԴԻ, ԳԱԼԻՆ ԻՆ չափ էրշմբյալ:

ԷԼԻԶ

Ես ինչպէս տեսնում եմ, դու ոչ միայն կնոջդ ես
խարում, այլ ինձ էլ ես խարում, պարոն։

ԱՐԿԱԴԻ

Մեղք չէ հոգուդ, որ ացդպէս ես խօսում։

ԷԼԻՑ

Ուզիղ խօսելը որ մեղք է, ուրեմն քո արարմուն-
քը կը լինի արդար, համար։

ԱՐԿԱԴԻ

Կարելի է շատ էլ մեղաւոր եմ, բայց քո առաջ,
Ելիզ, երկինք վկայ, միշտ արդար եմ եղել։

ԷԼԻՑ

Ինչպէս այսօր, զիտեմ, զիտեմ։

ԱՐԿԱԴԻ

Այսօր էլ, վաղն էլ, միշտ և յաւիտեան:
ԷԼԻԶ

Սուս, սուս. այսօր էլ, վաղն էլ, միշտ և յաւիտեան
էլ սուտ ես իմ առաջ, սուտ, միշտ սուտ:

ԱՐԿԱԴԻ

Հոգեակս:

ԷԼԻԶ

Ճշմարիտն ասա, քանի անգամ ասացիր նրան ացդ
խօսքն այս գիշեր... Դու կարծում ես չտեսայ...

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ, ի՞նչ:

ԷԼԻԶ

Անիրաւ:

Նստամ է յոն իռջը:

ԱՐԿԱԴԻ, նստեցաւ հօրը:

Էլիզ:

ԷԼԻԶ

Թւ-թւել տուած, որ գնում էիք այս րոպէիս...
ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ անենք որ...

ԷԼԻԶ

Այնպէս էիք յափշտակուել միմեանցով, որ ձեզ
միայն թւեր էր պակաս երկինք թռչելու:

ԱՐԿԱԴԻ

Է՞հ, զարմանալի ես, ճշմարիտ:

ԷԼԻ>Z

Ճըմ, անօրէն, թող մէկ էլ տեսնեմ:

Հովուառով սովորում է:

ԱՐԿԱԴԻ

Լաւ, լաւ, դու ինձ այն ասա, ընթրիքը հօ միա-
սին ենք ուտելու այստեղ:

ԷԼԻ>Z

Եթէ արժան կը համարես, պարոն:

ԱՐԿԱԴԻ

Տերիք է, խնդրում եմ:

ԷԼԻ>Z

Ինչի, կարելի է նրա հետ աւելի անուշ է թվում քեզ,
ԱՐԿԱԴԻ

Եթէ չես վերջացնելու, գիշեր բարի:

Կամենաւ է գնալ:

ԷԼԻ>Z, բանելու:

Լաւ, լաւ, այս մէկ անգամ ներում եմ. համեցէք
ընթրենք միասին... Բայց կինդ ի՞նչ կ'ասէ:

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ պիտի ասէ:

ԷԼԻ>Z

Այս քանի ժամանակ է, հետո թթուած է, չգի-
տեմ ի՞նչ եմ արել:

ԱՐԿԱԴԻ

Է՞հ, դու նրա կապրիզներին ի՞նչ ես ուշք դարձնում,
ԷԼԻ>Z

Ա՞խ, Արկադի, այդ ի՞նչ ես ասում, ես նրան այն-
պէս եմ սիրում, ինչպէս իմ հարազատ քրոջս. Երե-
խայ ժամանակ միասին ենք մեծացել, ես չեմ ուզում
վշտացնել նրան:

ԱՐԿԱԴԻ

Աստուած բարի վայելումն տայ:

ԷԼԻԶ

Դու այդպէս ասա, բայց ես կարծում եմ, թէ մահապարտ եմ նրա առաջ, երեսին ուղիղ նայել անգամ չեմ կարողանում... Եւ այս ամենը քեզ համար, քո սիրոց համար, իսկ դու այլ ես ինձ չես սիրում:

ԱՐԿԱԴԻ

Դարձեալ:

ԷԼԻԶ

Մի նեղանար, Արկադի, խնդրում եմ, մի նեղանար. ինչ անեմ, որ սիրոս վստահ չէ քեզ վրայ: Ասա, ասա, որ սիրում ես ինձ, էլի այնպէս ես սիրում, ինչպէս առաջ: Դու չիտես, թէ ինչքան քաղցր է ինձ համար քո բերանից լսել այդ խօսքը:

ԱՐԿԱԴԻ

Ի հարկէ սիրում եմ. քեզ որ չեմ սիրում, հապահումն եմ սիրում:

ԷԼԻԶ

Եւ բացի ինձանից էլ ուրիշ ոչ ոքի:

ԱՐԿԱԴԻ

Ոչ ոքի, ոչ ոքի, վկայ է Աստուած:

ԷԼԻԶ, նոյսու է այս ու այն էռոշ:

Ալս, Արկադի, հոգիս, իմ աստուածը դու ես:

ԱՐԿԱԴԻ

Թէ, արի ու մի սիրիր. ինչպէս կարելի է չսիրել քեզ:

ԷԼԻΖ

Ճատ ես սիրում ինձ, շատ:

ԱՐԿԱԴԻ

Ճատ, օ, շատ. արես վկայ, շատ:

ԷԼԻԶ

Արեիդ մեռնի ելիզը:

ԱՐԿԱԴԻ

Ուրեմն թող իմ արեը մեռնի, եթէ բացի քեզանից ես կարողանամ ուրիշին սիրել:

ԷԼԻԶ

Ալս, ինչպէս պինդ կը համբուրէի քեզ այժմ:

ԱՐԿԱԴԻ, Քը լուչւռ:

Մա, գալիս են:

ԷԼԻԶ, յեր նոյնէլու:

Ալս, ամուսինս:

Գնում է ունիկ Աբէլը, որ գուշին է ոչ իռուց, եռ: Աբէմտին ծածրուն ունում է գնում զան իռուց:

ՏԵՍԻԼ Բ

ԷԼԻԶ, ԱԲԷԼ

ԷԼԻԶ

Այս որտեղ ես, երանի գիտենամ. Ճնկներս թուլացան քեզ պտրտելով:

ԱԲԷԼ

Վա, ես էլ քեզ եմ պտրտում. ում հետ էիր այստեղ:

ԷԼԻԶ

Բարեկամ աղջկերք կային, միասին ման էինք զալիս:

ԱԲԷԼ

Ով գիտէ քանիսի տունը շինեցիք, քանիսինը քանդեցիք:

ԷԼԻԶ

Ե՞ն, խօսում էինք Էլի:

ԱԲԵԼ

Դուք ու ձեր խօսելը. մի քանի աղջկերք որ հաւաք-
վում էք, էլ պերջ չի լինում ձեր ասակօսէին:

ԷԼԻԶ

Խակ տղամարդիկդ հօ խօսել չգիտէք, խեղճեր,
մեղքս գալիս էք:

ԱԲԵԼ

ՄԵՆՔ որ խօսում ենք, ելիզ, բան ենք խօսում,
ապրուստի միջոց ենք որոնում, ձեզ համար ենք մը-
տածում... Խակ ձեր խօսելն ի՞նչ է, բոլորը դատար-
կաբանութիւն, միշտ ճօշալ ու բամբասել:

ԷԼԻԶ

Դէ, լաւ է հա, ոչ էլ դուք էք մի շատ բարի
պտուղը, ձեզ էլ եմ ճանաչում... (Թւառ առաջական) Արի
մէկ ինձ ուստօնդի կողմը տար, տեսնեմ այնտեղ ի՞նչ
կայ:

ԱԲԵԼ

Այնքան բազմութիւն կայ հաւաքուած այնտեղ,
ելիզ, որ ասեղ գցելու տեղ չկայ. մի ինչ որ վրացի
իշխանուհի է եկել նոր, ասում են հիանալի լե գ-
ղերէն է պար գալիս:

ԷԼԻԶ

Գնանք, գնանք:

ԱԲԵԼ

Առանց ինձ չես կարող գնալ, ի՞նչ է: Ես ուզում
եմ նորին վսեմութեանը տեսնեմ. ասացին այս կողմն
է ման գալիս... հօ չես տեսել:

ԷԼԻԶ

Կարծեմ որ նա էր, աչքովս ընկաւ, մէկի հետ գը-
նում էր շատ տաք-տաք խօսելով... Յետ էլ չնայեց
նորին վսեմութիւնը, որ գլուխ տացի:

ԱԲԵԼ

Հէնց միշտ քեզ վրայ է մտածում... Պարդն աշ-
խարհքի գործ ունի, ով է ինանում պիխումն ինչեր
է պտոյտ գալիս:

ԷԼԻԶ

Զէ, ինչ ուզում ես ասա, Աբէլ, բայց նա էլ
աչն չէ:

ԱԲԵԼ

Ախար, հոգիս, այն մարդը հօ չի կարող միշտ մեր-
յետևից ման գալ... Ելի փառք Աստուծոյ, որ ժամա-
նակ է գտնում երբեմն մեզ ես մտաբերելու. հազար
դորձի տէր է, ասում եմ:

ԷԼԻ>Z

Աստուած տայ իր բանն աջողայ... Ահա, նա է,
այս կողմն է գալիս:

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ

ԱԲԵԼ, Առաջական էլեւին:

Սպասիր: (Աքարհին:) Ձերդ վսեմութիւն, մէկ ժամ է-
ձեզ եմ որոնում:

ԱՐԿԱԴԻ

Ա, բարե, պ. Աբէլ. Ես էլ ձեզ էի որոնում...

Բարեւ ձեզ, յարգելի տիկին. այս ուր էք, չէք երեւում. նոր եկաք:

ԷԼԻԶ

Ձեզ ասացէք, պարոն. մօտիցս անցնում էք ու վրաս էլ չէք նայում:

ԱՐԿԱԴԻ

Այդ երբ:

ԷԼԻԶ

Այ, փոքր ինչ առաջ, զդիտեմ ում հետ էլ խօսակցելով գնում էիք:

ԱՐԿԱԴԻ

Չեմ տեսել, ճշմարիտ, եթէ ոչ ինչպէս չէի բարեւիլ ձեզ:

ԷԼԻԶ

Բայց և այնպէս, էլ առաջուայ նման ուշադիր չէք դէպի մեզ: Առաջ շաբաթ չէր անցնիլ, որ մէկ անգամ գոնէ չհանդիպէլիք մեզ, իսկ այժմ ամիսներ է անցկենում, շնորհ չէք բերում մեր տունը:

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ անեմ, տիկին, ներեցէք, խնդրում եմ... Դուք զիտէք, որ ես ձեզ շատ եմ յարգում ու պատվում, միայն սաստիկ զբաղուած եմ. մի նեղանաք, խընդրում եմ:

ԷԼԻԶ

Դուք զիտէք:

ԱՐԿԱԴԻ

Հաւատացէք, տիկին, ինչ եղել եմ, միշտ էլի նոյնն եմ ձեզ համար:

ԱԲԻ

Ճերդ վսեմութիւն, դուք էլ որ կիսարմատի խօսքը բանի տեղ էք դնում, զարմանում եմ, ճշմարիտ... Միթէ կարելի է սրանց ասածին նշանակութիւն տալ:

ԷԼԻԶ, ԱԲԻ

Ճատ շնորհակալ եմ, պարոնս:

ԱՐԿԱԴԻ

Ինչի, պ. Աբէլ, տիկինոցը ես շատ եմ պատվում, դուք էլ լաւ զիտէք, և բնաւ չէի ցանկանալ, որ զուր տեղն ինձանից նեղանար:

ԱԲԻ

Ճերդ վսեմութիւն, մենք հօ այսօրուայ բարեկամներ չենք. թէ դուք մեր խաթրն ու պատիւն ունիք, մենք էլ ձերը պակաս չունինք՝ ոչ ես, ոչ էլ սա, հաւատացէք, և ինչ որ ասում է, այն էլ ձեզ յարգելուցն է ասում, լաւ իմանաք:

ԷԼԻԶ

Ի հարկէ սրտանց յարգում եմ, և հէնց դրա համար եմ նեղանում, որ ուշ-ուշ ենք հանդիպում:

ԱՐԿԱԴԻ

Ճատ շնորհակալ եմ, տիկին. կը գամ, կը գամ, մի նեղանաք:

ԷԼԻԶ

Կը տեսնենք... Առ այժմ մնաք բարեաւ, գուցէ դուք այստեղ առանձին գործ ունիք, ես մի գնամ տեսնեմ այն կողմն ինչ կաց. Անշուշտ այս երեկոյ դարձեալ պատիւ կ'ունենամ ձեզ տեսնելու:

ԱՐԿԱԴԻ

Անտարակոյս, տիկին, անտարակոյս:
Էւհւ քնում է, առշորութեամբ յէս նայելով Արքունին, յէսոյ
դադահելով մի խոյն չառաց, նրանց հետ հետահառ է:

ՏԵՍԻԼ Դ

ՆԲԱՆՔ, առանց իլիջի

ԱՐԿԱԴԻ

Հրամացեցէք, Աբէլ-աղա:
ԱԲԻԼ

Հրամանքդ շատ... Աղան էլ դուք էք, ձերդ
վսեմութիւն, պարոնն էլ, ես միայն ձեր խոնարհ.
Ճառան եմ, միշտ պատրաստ ձեր հրամանները կա-
տարելու... Դուք ինչ էիք կամենում ասել:

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ արիք, տեսաք այն պարոններին, ժամա-
նակն անցնում է:

ԱԲԻԼ

Այո՛, ձերդ վսեմութիւն, այս օրերս բոլոր գործը
կը վերջացնեմ և ամբողջ գումարն անձամբ կը ներ-
կայացնեմ ձեզ... Միայն հիմա մէկ ուրիշ բան ու-
նիմ ասելու, բայց չնեղանաք, աղաջում եմ:

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ է պատահել:

ԱԲԻԼ

Գիտե՞ք ինչ է, ձերդ վսեմութիւն, ես ձեր լաւ
բարեկամն եմ և ձեզ էլ իմ լաւ բարեկամն եմ հա-

մարում... (Լուսական) Ներեցէք, աղաջում եմ... Այ-
լեզուիս ծայրին պտոյտ է գալիս, բայց չեմ համար-
ձակվում ասելու, սակայն (Յոյ ոռոշ իրարեւ) այստեղ
է հասել:

ԱՐԿԱԴԻ

Վախեցնում էք ինձ, սիրելի բարեկամ:
ԱԲԻԼ

Ո՛չ, ոչ, ձերդ վսեմութիւն, դեռ վախենալու
բան չկայ և իմ ջանքն էլ հէնց այն է, որ վերջը
վախենալու չգառնայ:

ԱՐԿԱԴԻ, ԳՈՒՄԱՆԴԻ:

Բոլորովին շուարուեցայ,
ԱԲԻԼ

Ձեր արեք, ոչ ոք չէր համարձակուի այս բանը ձեզ
ասելու, բայց էլ ինչի՞ բարեկամ եմ, եթէ սև օրին
պէտք չգամ և ուղղակի երեսիդ չասեմ ամեն բան:

ԱՐԿԱԴԻ

Դէ, ասացէք ու վերջացրէք էլի:
ԱԲԻԼ

Ասացէք ու վերջացրէք... Լեզուն էլ պիտի զօրէ
ախար թէ ոչ... Երի ու ասա... Ճեշտ բան է, կար-
ծում էք. մարդ մարդու կնոջ վրայ բան ասէ:

ԱՐԿԱԴԻ

Ում կնոջ, ինչ էք ասում:
ԱԲԻԼ

Ձեր կնոջ, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱԴԻ, ՀԱՐԺԱԿԱԾ:

Իմ կնոջ... Ես կարծեցի դուք ձեր կնոջ մասին էք
ասում:

ԱԲԵԼ

Ի՞նչպէս թէ ի՞մ կնոջ... Աստուած մի արասցէ, էլ մէկ օր տանը չէի պահիլ... Զգո՞յց եղէք, ձերդ վըսեմութիւն: Մի ինչ որ նոր զինուորական է եկել, էլ պոկ չեն գալիս մէկ մէկուց. հա խօսում են ու խօսում... Այս զիշեր ամենքն էլ նրանց վրայ դարձրին իրանց ուշադրութիւնը. իսկ դուք, ով զիտէ, ինչ կարևոր խնդիրների մասին էլիք մտածում այստեղ... Զգուշացէք, ձերդ վսեմութիւն, ապա թէ ոչ, կինարմատը եթէ մտքումը մի բան դնի, էլ ոչ ոք նրա հախիցը չի կարող գալ. նա իր ուզածը կ'անէ, անպատճառ կ'անէ... Այս էր, եղբայր, իմ բարեկամութիւնը, և յոյս ունիմ, որ ձերդ վսեմութիւնը չի նեղանաց ինձանից... Ես աւելի լաւ համարեցի աչքիցդ ընկնել, քան վաղը միւս օրը ձեր խայտառակութիւնը տեսնել... Հիմա դուք զիտէք, ձերդ վսեմութիւն:

ԱԲԿԱԴԻ

Ջատ, շատ շնորհակալ եմ, սիրելիս: (Ձեռան առանձնութեան) Յատուկ պարտաւորեցրիք:

Գոտողով ժնուած է դեռի առանձնութեան:

ԱԲԵԼ, առանձնութեան:

Խեղճ մարդ... Ձեր կնոջ, ասում է... Նրա համար է ասած, որ մարդ իր աչքի գերանը չի տեսնիլ է... Կառանը շարժելով ժնուած է խոռոչնեած ճարդիունց հետ ու առայս լուսուած:

ՏԵՍԻԼ Ե

ՎԱՐԴՈՒՀԻ, ԱԲԿԱԴԻ

ՎԱՐԴՈՒՀԻ, Քաղաք չունի իրավուց, ինչուած է Արմենիան, Տիգրեան ու Բարձրանուած է առաջնորդ առափանի վրայ:

Փ. Արկադի, պ. Արկադի... Սպասեցէք, սպասեցէք:
ԱԲԿԱԴԻ

Այս, դուք էք դարձեալ, աննման իմ տիկին:
ՎԱՐԴՈՒՀԻ:

Այդ ուր էք շտապում այդպէս:
ԱԲԿԱԴԻ

Ուզում էի կնոջս գտնել:
ՎԱՐԴՈՒՀԻ:

Ի՞նչ է պատահել... Ահա նայեցէք, նա այնտեղ կանանց շրջանի մէջ նստած խօսում է:
ԱԲԿԱԴԻ

Այս, ճշմարիտ էք ասում:
ՎԱՐԴՈՒՀԻ:

Ի՞նչպէս թէ ճշմարիտ եմ ասում, ես Երբ եմ սուտ խօսել:

ԱԲԿԱԴԻ

Պէտք, հրաշալի տիկին, ինձ այնպէս ասացին, որ իբր կինս շարունակ մի զինուորականի հետ է խօսում, և յանկարծ զարմացաց, երբ կանանց մէջ տեսայ նրան:
ՎԱՐԴՈՒՀԻ:

Ի՞նչ կայ այստեղ զարմանալու... Հինց ասենք թէ շարունակ մի զինուորականի հետ է խօսում, ձեզ

ի՞նչ փոյթ. չէ որ մի քանի րոպէս առաջ ասում էիք, թէ նրան չէք սիրում: (Քառականութեան հոգութով սողունում է:)

Նախանձնու:

ԱՐԿԱԴԻ

Ի հարկէ չեմ սիրում, սակայն այստեղ պատուի խնդիր է:

ՎԱՐԴՈՒՅԻ, ՏԻՇԱՌԱՅԻ:

Ինչիդ է պէտք նրա պատիւը, երբ իրան չէք սիրում:

ԱՐԿԱԴԻ

Ես իմ պատիւն եմ ասում:

ՎԱՐԴՈՒՅԻ, ՏԻՇԱՌԱՅԻ:

Հիանալի է, հիանալի... Ահա այդպէս էք տղամարդիկդ, ամենքդ էլ այդպէս էք... Ճեզ ամեն բան ներելի է. խօսել՝ ում հետ կամենաք, ժամանակ անցկացնել՝ ինչպէս կամենաք, բայց հէնց որ խեղճ կինն սկսի մէկի հետ խօսել, խակոյն ձեր աչքերը վառվում է Օթէլլօի նախանձով... Պատիւս, ասում է... Թողէք խնդրեմ, մենք ձեր ստրուկներն ենք, ինչ է:

ԱՐԿԱԴԻ

Օ՛հ, աննման իմ տիկին, ոչ թէ ստրուկ, դուք երկնային հրեշտակ էք ինձ համար:

ՎԱՐԴՈՒՅԻ:

Դարձեալ... Ես ձեզ քանիցս անգամ արգելել եմ ինձ հետ այդ ձեռվ խօսել:

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ անեմ, տիկին, որ չեմ դիմանում... Ես ձեզ սիրում եմ, դուք գիտէք, որ սաստիկ սիրում եմ ձեզ:

(10/10
Ա/3/2)

Օ/9-28/3

ՎԱՐԴՈՒՅԻ:

Լոեցէք, խնդրեմ, ես ձեզ չեմ հաւատում և կարիք էլ չունիմ հաւատալու... Սիրել ուզում էք, սիրեցէք ձեր կնոջը, նա բատ ամենայնի արժանի է ջերմ սիրոց, բայց դուք նրան գնահատել չէք իմանում:

ԱՐԿԱԴԻ:

Միթէ մեղաւոր եմ, տիկին, որ ես ձեզ եմ սիրում:

ՎԱՐԴՈՒՅԻ:

Ա՛խ, բաւական է, խնդրեմ, դուք ինձ ձանձրացնում էք վերջապէս:

ԱՐԿԱԴԻ

Բարկացէք, տիկին, բարկացէք, բայց ես դարձեալ յոյս ունիմ, որ մի օր քաղցր աչքով կը նայէք վրաս:

ՎԱՐԴՈՒՅԻ:

Ի՞նչպէս չէ, հաստատ պահեցէք այդ յոյսը:

ԱՐԿԱԴԻ

Յոյսը լաւ բան է, տիկին:

ՎԱՐԴՈՒՅԻ:

Դուք անուզզելի էք, պարոն:

ԱՐԿԱԴԻ:

Ես կ'ուղղուիմ, տիկին, երբ դուք սկսէք մի փոքր սիրել ինձ:

ՎԱՐԴՈՒՅԻ:

Հաւատացէք, պ. Արկադի, ես ձեզ վերջին անգամն եմ ասում, որ եթէ գուք չէք դադարիլ այդ լեզուով խօսել հետս, յաւիտեան կը գրկուիք իմ բարեկամութիւնից:

ԱՐԿԱԴԻ

Տէրը մի արասցէ, աւելի հեշտ է ինձ գլխիցս զըր-

2



կուլի, գոնէ այն ժամանակ կը խղճաք ինձ: (Վ. բրու-
հին ծիծաղում է:) Ծիծաղեցէք, ծիծաղեցէք, տիկին,
իսկ ես հաւատացած եմ, որ դուք այն ժամանակ
դառնապէս լաց կը լինիք, թէ ինչու ինձ այսքան
տանջեցիք:

ՎԱՐԴՈՒԽԻ, ՀԵԼԻ և ծիծաղում:

ԱԿ' էլ կը հագնեմ, այնպէս չէ:

Ծարունակում և ծիծաղում:

ԱՐԿԱԴԻ

Ի հարկէ կը հագնէք:

ՎԱՐԴՈՒԽԻ

Լաւ, լաւ, վերջ դնենք այս կատակներին... (Թ. ա-
ստանէլով) Բարեհաճեցէք ինձ ոօտօնդի կողմը տանել:
ի դէպ, դուք կամենում էիք ձեր կնոջը տեսնել:

ԱՐԿԱԴԻ

Աշխ, տիկին, խելքից հանում էք մարդու և դար-
ձեալ ինձ էք մեղադրում:

ՎԱՐԴՈՒԽԻ, Առաջել Արտեհեռ և Առաջեալ:

Ուրեմն ցտեսութիւն:

Ծիծաղում դուրս է ժաման չափ իրավուց:

ԱՐԿԱԴԻ

Տիկին, տիկին... Եղաչում եմ, լսեցէք...

Հերթակում և արտակում:

ՏԵՍԻԼ Զ

ՕՐԻՈՐԴՆԵՐ՝ ԱՆՌՈՒՋ, ՆՈՒՆՈՒՋ, ՀՈՒՓՍՈ, ԳՈՂԵ-
ԿԱ առաջնորդից:

ԱՆՌՈՒՋ

ՕՇ, յոգնեցայ:

Նորում է և հայուրում:

ՆՈՒՆՈՒՋ

Իմ օրումն այսքան չեմ պարել:
ՀՈՒՓՍՈ

Ես էլ... Ի՞նչ հիանալի է պարում:
ՆՈՒՆՈՒՋ

Եւ որչափ գեղեցիկ է:

ԱՆՌՈՒՋ, ՀՕՐԵԿԱՆՈՎ

Ո՞վ է գեղեցիկ, ում մասին էք խօսում:
ՆՈՒՆՈՒՋ

Պ. Անոնի, որ մեզ հետ պարում էր այժմ:
ԱՆՌՈՒՋ

Եյո, նա բաւականին գեղեցիկ է, միւնոյն ժամա-
նակ լաւ երիտասարդ և շատ էլ գործունեաց:

ՆՈՒՆՈՒՋ

Դու նրան ճանաչում ես, Անուշ:

ԱՆՌՈՒՋ

Ի՞նչպէս չէ, Նունուշ ջան, նա մեզ ազգական է:
ՄԻՒՍՆԵՐԻ, Տիպով:

Միթէ,

ԱՆՈՒԾ

Այս:

ՀԹԻՓՍՅ

Ինչով է պարապում նա:

ԱՆՈՒԾ

Գիւղատնտես է:

ՀԹԻՓՍՅ

Ի՞նչ ես ասում... Ո՞վ կը կարծէր:

ԱՆՈՒԾ

Այս, այս, հոփիսօ ջան, դու պէտք է տեսնես նրան աշխատելիս, որ հիացած մնաս: Այստեղ մէկ մօտիկ գիւղում... ա'ս, անունը մոռացալ... հոգեր ունի վարձած: Ի՞նչ վար ու ցանք, արտեր, այգիներ. գիւղացիք բոլորն էլ նրա արևովն են երդվում: Միշտ նրանց մօտ է, նրանց սովորեցնում է իր գիտութիւնը... Մէկ րոպէ հանգիստ չէ մնում. փորում է, կտրում է, ցետոյ գալիս՝ կարդում, գրում. մէկ խօսքով՝ հազար ու մէկ բան է շինում, և երբ այստեղ է լինում, այդպէս էլ գեղեցիկ պարում է:

ՆՈՒՆՈՒԾ

Իրաւ որ հիանալի երիտասարդ է եղել... Իսկ այն միւսն նով է, Անուշ ջան, որ նրա հետ խօսում է, արդեօք չփիտե՞ս:

ԱՆՈՒԾ

Ո՞րը, այն զինուորականը:

ՆՈՒՆՈՒԾ

Այս, ես առաջին անգամ եմ տեսնում նրան այստեղ:

ԱՆՈՒԾ

Միթէ դեռ չգիտես, Նունուշ. նա մեր յայտնի

վիպասան Արտաշէս Արամեանն է, որի քնքուշ գըրուածքները մենք այնքան սիրով կարդում ենք:

ՆՈՒՆՈՒԾ

Միթէ նա է, ինչ ես ասում, Անուշ. երեխ դու սխալվում ես, հոգիս:

ԱՆՈՒԾ

Ո՞չ, ոչ, Նունուշ, նա ինքն է, հաւատած. ինձ Լեռնն ասաց. նրա սրտակից բարեկամն է:

ՆՈՒՆՈՒԾ

Զարմանալի բան, զինուորական ու այդպէս գեղցիկ գրող:

ԱՆՈՒԾ

Ի՞նչ կայ, սիրելիս, զարմանալու, ում տուած է, տուած է:

ՆՈՒՆՈՒԾ

Ի հարկէ, բայց այնուամենայնիւ, ինձ համար անսպասելի էր:

ՀԹԻՓՍՅ

Կացիր, Անուշ, յինք թէ դա այն Արամեանն է, որի համար մի քանի տարի առաջ ասում էին, իբր թէ պատերազմում սպանել են:

ԱՆՈՒԾ

Այս, հէնց նա է, հոփիսօ ջան, մի գիտնական յանձնաժողովի ղեկավար է նշանակուած այստեղ:

ՀԹԻՓՍՅ

Միթէ:

ԱՆՈՒԾ

Այս, ինձ Լեռնը պատմում էր, լաւ չհասկացավ...



Աշխարհագրական թէ ազգագրական ինչ որ հետա-
զոտութիւններ, չգիտեմ:

Գիտում է ասպառում:

ՀԹԻՓՍՈ

Ափսոս չէր, որ դրան սպանած լինէին... Ահա գե-
ղեցիկ, թէ ուզում ես, նունուշ ջան, դա է:
ՆՈՒՆՈՒՃ

Ես պ. Աւոնին աւելի եմ հաւանում:

ՀԹԻՓՍՈ

Պ. Աւոնը որտեղ, նա որտեղ:

ՆՈՒՆՈՒՃ

Ոչ, ոչ, նրան միայն զինուորականի զգեստն է
փայլ տալիս:

ՀԹԻՓՍՈ

Այս, ինչ ես ասում; Նունուշ, գեղեցիկ մարդուն
ինչ էլ հազցնես, նա դարձեալ գեղեցիկ կ'երեայ:
ՆՈՒՆՈՒՃ

Դու ինչ ուզում ես, ասա, հոխիսօ, պ. Աւոնն ա-
ւելի գեղեցիկ է:

ՀԹԻՓՍՈ

Ոչ, ոչ, զինուորականն է գեղեցիկ:

ԱՆՈՒՃ, ասպառում:

Ի՞նչ էք կովում. Եկէք ես ձեզ հաշտեցնեմ:
ՆՈՒՆՈՒՃ

Անուշ ջան, թէ արեգ կը սիրես, ուղիղն ասա. ով
է աւելի գեղեցիկ՝ պ. Աւոնը թէ այն նոր եկած
զինուորականը:

ՀԹԻՓՍՈ

Տես, Անուշ, առանց կողմնապահութեան:

ԱՆՈՒՃ

Ի հարկէ... Ասեմ՝ ով է աւելի գեղեցիկ:
ՄԻՒՍՆԵՐԸ, մասնաւ:

Այն, այն:

ԱՆՈՒՃ

Ասեմ...

ՄԻՒՍՆԵՐԸ, մասնաւ:

Խնդրում ենք:

ԱՆՈՒՃ

Ուղիղը:

ՄԻՒՍՆԵՐԸ, մասնաւ:

Յատուկ խնդրում ենք:

ԱՆՈՒՃ

Այն երկուսից աւելի գեղեցիկը նա է, ով որ...
ՆՈՒՆՈՒՃ

Ով որ...

ՀԹԻՓՍՈ

Ով որ ինչ...

ԱՆՈՒՃ

Ով որ... ով որ մէկն ու մէկիդ ուզէ:

Փախչում է:

ՆՈՒՆՈՒՃ, ասպառում:

Այս, փուճ փճանալու:

ՀԹԻՓՍՈ, այնպէս:

Թող քեզ ուզէ, անպիտան...

Բոլորեւեան ծիծառէլ վաղում են. Անուշը հրանում է առաջնորդ,
իսկ Նունուշը ու Հարիսօն, պարուհելով մի խռամք էրիրո-
սորդների, նրանց հետ իսուցելով իսմայիլանց դուրս են գը-
նում ոչ իսլամ:

ՏԵՍԻԼ Է

ՄԱՐԴԱՐԻՏ, պարսկացին հարգալուաշար հանեա՛, ԱՐ-
ԱՎԹԻ. գողիս էն յան հոշեց:

ՄԱՐԴԱՐԻՏ

Նա իմ վաղեմի ծանօթն է:
ԱՐԿԱԴԻ

Վաղեմի ծանօթ:

ՄԱՐԴԱՐԻՏ

Այս, դեռ քեզ չէի էլ տեսել, որ նրան ճանաչում
էի:

ԱՐԿԱԴԻ

Ինձ զարմացնում ես, սիրելիս:

ՄԱՐԴԱՐԻՏ

Միամիտ եղեր, այստեղ զարմանալու ոչինչ ջայ...
Պ. Արամեանը մեզ դրացի էր, երեխայ ժամանակ
միասին ենք մեծացել և ես դեռ տասնուհինդ տա-
րեկան հասակում ուսումն շարունակում էի, որ նա
իր ուսման ընթացքն այստեղ աւարտելով՝ գնաց հա-
մալսարան...

ԱՐԿԱԴԻ, ՀՅԴԻԾԵՄ

Եւ չկարողանալով շարունակել համալսարանական
ուսումը, հարկաւ վոնդուեցաւ այնտեղից և մտաւ
զինուրական ծառացութիւն:

ՄԱՐԴԱՐԻՏ

Սխալվում ես, պարոն, սխալվում, դու միայն քեզ
ես կարծում ընդունակ..., Եթէ դու փոքրիշատէ

ընթերցասէր լինէիր ու մէկ անգամ գոնէ աչքի անց-
նէիր նրա գեղեցիկ հեղինակութիւնները, էլ այդպէս
չէիր խօսիլ... Ինչեմիցէ, տասը տարի կը լինի, որ
մենք բաժանուել ենք և ահա այսօր առաջին ան-
դամն ենք տեսնում միմեանց:

ԱՐԿԱԴԻ

Ճատ բարի, բայց ինչ էլք խօսում իրար հետ ծանր
ու բարակ այսքան բազմութեան մէջ:

ՄԱՐԴԱՐԻՏ

Առանձին ոչինչ, ես իմ անցկացրած օրերն էի-
պատմում նրան, նա էլ իրանը: Նա շատ ազնիւ
մարդ է:

ԱՐԿԱԴԻ

Հաւատում եմ, բայց այնքան երկար խօսելով նրա
հետ, դու ամենքի ուշադրութիւնը քեզ վրայ դարձրիր:

ՄԱՐԴԱՐԻՏ

Ում ինչ գործն է, որ ես իմ բարեկամի հետ խօ-
սում եմ:

ԱՐԿԱԴԻ

Բարեկամ:

ՄԱՐԴԱՐԻՏ

Եց, բարեկամ. զարմանում ես թէ նախանձում,
չգիտեմ:

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ զարմանում եմ, ոչ նախանձում. ես նեղանում
եմ միայն, որ հասարակութեանն ի գուր առիթ ես
տալիս վրադ խօսելու:

ՄԱՐԴԱՐԻՏ

Ո՞վ է ինձ վրայ խօսողը:

ԱՐԿԱԴԻ

Երեխ խօսողներ կան, որ ասում եմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞վ, ո՞վ. ասա, խնդրեմ, ո՞վ է խօսում:
ԱՐԿԱԴԻ

Ես քեզ ասում եմ, որ խօսում են. իսկ եթէ ինձ
չես հաւատում, կարող ես բարեկամիս հարցնել, տես
ինչ է ասում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այսինքն:

ԱՐԿԱԴԻ

Պ. Աբելին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Խնդրեմ, խնդրեմ, նա թող իր գլխին տիրութիւն
անէ:

ԱՐԿԱԴԻ, գոյն անդոծ:

Դրանով ինչ ես ուզում ասել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչինչ...

Աչք ուշակ նայում է ամսանում:

ԱՐԿԱԴԻ, առաջին:

Միթէ կասկածում է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ ինչ կը վերաբերի քո նախանձելուն, կամ ա-
ւելի ճիշդն ասած, նեղանալուն, ինչպէս ինքդ ես
ասում, այդ, ցիրաւի, ինձ զարմացնում է... Որպէս
թէ ես քեզ համար որեւէ նշանակութիւն ունիմ և
կամ սիրելի եմ քեզ:

ԱՐԿԱԴԻ, ուրախ ուեց ապահովով:

Ի հարկէ որ սիրելի ես:

ՄԱՐԳԱՐԻՏ, հետաքեն:

Եւ շատ ես սիրում ինձ:

ԱՐԿԱԴԻ

Ջատ, այո, շատ:

ՄԱՐԳԱՐԻՏ, դաստիարակ:

Եւ բացի ինձանից էլ ուրիշ ոչ ոքի չես սիրում
ի հարկէ:

ԱՐԿԱԴԻ

Ոչ ոքի, վկայ է երկինքը:

ՄԱՐԳԱՐԻՏ, լուս շորժում է գործել և իրան դաստիարակ:

Նայիր վերև, նայիր և տես, թէ քանի վկայ կայ
այնտեղ... Նայիր, նայիր, մի վախենար, աստղերը
ձայն չունին. նրանց լեզուն ամեն մարդ միայն ինքն
է հասկանում, և եթէ մի բան ասեն այժմ, մենակ
քեզ կ'ասեն:

ԱՐԿԱԴԻ

Ինչեր ես ասում, ես ոչինչ չեմ հասկանում: Եթէ
բան դիտես, կամ մի մարդ սուտ լուրեր է հաղորդել
քեզ իմ մասին, այն ասա:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչ ոք ինձ բան չէ ասել և ոչ էլ ես ուրիշի խել-
քով կամ խօսքով եմ ման գալիս: Ինչ որ գիտեմ, ինձ
ու ինձ գիտեմ և հաստատ էլ համոզուած եմ, որ
դու իմ մասին այնքան ես մտածում, որքան Զինաս-
տանի մասին:

ԱՐԿԱԴԻ

Ուրիշ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ուրիշ ոչինչ... (Առաջինները) Ես քեզ սիրում եմ, առում է...

Տեսնելով Հեղեղեն, որ շրադակ տուշ է ժամկ ող հողմեց,
Տեծ շրմանք է արդայութուն:

ԱՐԿԱԴԻ,

Աստուած այս կնոջը կատարեալ պատիժ է ստեղծել ինձ համար:

Դուրս է ժամանակ հողմեց:

ՏԵՍԻՆ Հ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԻ

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս ուժն եմ տեսնում:

ՀԵՂԻՆԻ

Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

ՀԵՂԻՆԻ:

ՀԵՂԻՆԻ

Հոգիս:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս ինչպէս, այս երբ:

ՀԵՂԻՆԻ

Այսօր, հէնց այսօր եմ եկել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Առաւոտուայ գնացքով ի հարկէ:

ՀԵՂԻՆԻ

Այս:

ՄԱՐԳԱՐԻՏ

Յետով միթէ չէիր կարող իմաց տալ, որ գայի քեզ
դիմաւորելու:

ՀԵՂԻՆԻ

Հէնց դրա համար էլ չուզեցի իմաց տալ, որ քեզ
անհանգիստ չանեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչեր ես ասում, հեղինէ, ինչպէս թէ անհանգիստ
անել: Միթէ ացպէս է:

ՀԵՂԻՆԻ

Գիտեմ, գիտեմ, անգին իմ Մարգարիտ, որ դու
էլ ինձ այնպէս ես սիրում, ինչպէս ես քեզ և պատ-
ճառն էլ հէնց այդ մեր սէրն էր, որ ես չուզեցի
առաւոտեան անուշ քունդ խանգարել... Այս, իմ
հրեշտակ Մարգարիտ, վերջապէս նորից արժանացայ
տեսութեանդ և այս անգամ յոց ունիմ մէկ օր էլ
չմնամ առանց քեզ տեսնելու:

ՄԱՐԳԱՐԻՏ

Միթէ... Այս, հեղինէ, Աստուած քեզ ինձ հա-
մար է ուղարկել... Ուրեմն այնտեղ պաշտօնդ թո-
ղթէ ես:

ՀԵՂԻՆԻ

Այս, ընդմիշտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բայց վերջին նամակումդ հակառակն էիր դրում:

ՀԵՂԻՆԻ

Ուղիղ է, բայց այնպիսի մի անակնկալ հանգա-

մանք պատահեցաւ, որ պաշտօնս էլ թողի, քաղաքն էլ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ ես ասում, չեղինէ, ի՞նչ պատահեցաւ արդեօք:
չԵՂԻՆՔ

Ոչինչ, մի շատ սովորական բան... Նոր հոգաբարձուք մտան ուսումնարան, մենք միմեանց չհասկացանք, և աշահ ես այստեղ եմ... Ես կը պատմեմ քեզ, Մարգարիտ, բոլորը կը պատմեմ, առ այժմ թող մնայ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Թող մնայ, հոգեակս... Բաց ուր Էիր այսօր ամբողջ օրը, որ առաջին անգամ այստեղ ենք տեսնըփում... Ում մօտ ես իջել, ում գերադասեցիր - ինձանից: (Դժկուհի) Սպասիր դեռ:

չԵՂԻՆՔ

«Կովկաս» հիւրանոցում... Մի փոքրիկ սենեակ եմ վարձել, մինչև տեսնեմ գործ ինչպէս է գնում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչ ասացիր, ինչ ի՞նչպէս թէ հիւրանոցում... Ուրեմն ես այսես քո Մարգարիտը չեմ: Խսկոյն, խսկոյն, հէնց այս գիշեր տեղափոխուիր ինձ մօտ:

չԵՂԻՆՔ

Որ մենակ լինէիր, իմ անգին Մարգարիտ, ինչու չէ, մեծ ուրախութեամբ, բաց կարելի է ամուսնուդ հաճելի չթուի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ կողմից դու բոլորովին հանգիստ եղիր: Ես ինձ համար իմ առանձին սենեակներն ունիմ: Մի

վախենար, ես քեզ այնպէս կը պահեմ, որ դու կարողանաս լիովին վայելել քո ազատութիւնը:

չԵՂԻՆՔ

Հաւատացած եմ, հոգիս, բոլորովին հաւատացած և շատ շնորհակալ եմ, միայն թէ... բաց...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչինչ չեմ ընդունում, ոչինչ, ոչ քո միայն թէ-ն և ոչ էլ բաց-ը. Ես քեզ հիւրանոցում թողնողը չեմ... Եկ, Եկ, յատուկ խնդրում եմ, Եկ, հետո ընկերութիւն արա, կեանքս էլ այնպէս ծանր չի երևալ... Դու զիտես, չեղինէս, թէ ի՞նչ մեծ բարութիւն արած կը լինիս ինձ. անչափ, անչափ կը պարտաւորես:

չԵՂԻՆՔ

Եթէ այդպէս է, ի հարկէ պէտք է գամ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այսօր միանգամից ես երկու ուրախութեան արժանացաց: Այս գիշեր մինչեւ քեզ տեսնելս, հէնց այստեղ ում պատահեցաց, ի՞նչ ես կարծում, մեր վիպասան Արտաշէսս...

չԵՂԻՆՔ

Արտաշէս Արամեանին...

ՄԱՐԳԱՐԻՏ

Եյ՛:

չԵՂԻՆՔ

Քո մանկութեան ընկերնչը:

ՄԱՐԳԱՐԻՏ

չէնց նրան:

չԵՂԻՆՔ

Միթէ: Ի՞նչ ուրախութիւն... Քանի-քանի անգամ

մենք խօսել ենք նրա մասին։ Նա հիմա հասուն
տղամարդ կը լինի դարձած։

ՄԱՐԳԱՐԻՏ

Աւելացրու նաև՝ կտրիճ զօրական... Գնանք, գլ-
նանք, ես քեզ ծանօթ այնեմ նրա հետ։

Թու-լուի ոռուն դռւրու են ժնուած ոջ իռջից։

ՏԵՍԻԼ ԹՇ

ԱՐՏԱՃԵՍ, շինուարականի շգեստով, իրծին ժաջու-
թեան պարուանշան, ԼԵԽՈՆ, հասարակ շգեստով։
Գալիս են հայտառի իրշեց։

ԱՐՏԱՃԵՍ

Այն, Լեռն, ես քեզ մեծ ապագայ եմ գուշակում։
ԼԵԽՈՆ

Ընորհակալ եմ, Արտաշէս, ես այժմ էլ գոհ եմ իմ
վիճակից, և ճշմարիտն ասեմ, ես լիովին երջանիկ կը
լինէի, եթէ ունենայի կեանքիս մի լծակից, որ իր
բարեմասնութիւններով կարողանար նեցուկ լինել
ինձ իմ աշխատութեանս ժամանակ։

ԱՐՏԱՃԵՍ, ԹԻՐՈՒ:

Որոնիր, եղբայր, գուցէ գտնես։
ԼԵԽՈՆ

Այն, բաց մինչև այսօր դեռ ես չպատահեց մինը,
որի մասին կարողանայի ասել՝ ահա նա, առանց
որի կեանքը կեանք չէ ինձ համար։

ԱՐՏԱՃԵՍ

Միայն թէ ընտրածիկ ուրիշը չառնէ, կամ, որ ա-
ւելի վատն է, ուրիշի կինը զինի քո սիրածը։
ԼԵԽՈՆ

Ի՞նչ ես ուզում ասել... (Արբանքու երրւ յունոց է հա-
նում) Դու տիսուր ես, Արտաշէս, փոքր ինչ առաջ
ացդակէս չէիր։

ԱՐՏԱՃԵՍ

Այն, ես շատ զղջում եմ, որ այս երեկոյ Ժողովա-
րան եկայ։

ԼԵԽՈՆ

Զղջում ես։

ԱՐՏԱՃԵՍ

Սաստիկ, թէ միենոյն ժամանակ ուրախութեանս
սահման չկայ։ (Լուսպէտն) Այն, կարծում եմ շուտով
ճանապարհ եմ ընկնելու կրկին։

ԼԵԽՈՆ

Ի՞նչ ես ասում, եղբայր, և դէպի ուր։

ԱՐՏԱՃԵՍ

Դէպի գաւառները։

ԼԵԽՈՆ

Ի՞նչի։

ԱՐՏԱՃԵՍ

Ես քեզ պատմել եմ արդէն. Աշխարհագրական Ըն-
կերութեան յանձնարարութիւնը...։

ԼԵԽՈՆ

Այն, այն, զիտեմ։ Բաց գու կամենում էիր դեռ
ևս մի քանի ամիս մնալ այստեղ։

ԱՐՏԱՃԵՍ

Ճատ անգամ հանգամանքներն շտապեցնում են գործը: Ես հէնց վաղը կը գրեմ գործակիցներիս, որ ինձ սպասեն... Այն, պէտք է գնալ, ուրիշ կերպով սթափուել անկարող եմ:

ԼԵԽՈՆ

Ես քեզ չեմ հասկանում. ասա, ի՞նչ է պատահել:

ԱՐՏԱՃԵՍ

Ո՞հ, Լևոն, դու չգիտես, թէ որքան անբաղդ եմ: ԼԵԽՈՆ

ԱՆԲԱՂԴ... ԴԻԼ...

ԱՐՏԱՃԵՍ

Թողնենք, խնդրեմ:

ԼԵԽՈՆ

Բայց ի՞նչ կայ վերջապէս:

ԱՐՏԱՃԵՍ, գոտի շառավեհց յեպոյ:

Ես... սիրում եմ...

ԼԵԽՈՆ

Սիրում ես:

ԱՐՏԱՃԵՍ

Այո, և անցոյս:

ԼԵԽՈՆ

Ի՞նչ, միթէ ծնողները...

ԱՐՏԱՃԵՍ

Ո՞չ, ո՞չ, բոլորովին ուրիշ արգելք... Նա ամուսնացած է:

ԼԵԽՈՆ

Ամուսնացած է... Ո՞հ, թշուառդ... Եւ նա էլ փոխադարձաբարի...

ԱՐՏԱՃԵՍ

Այո, բայց ինչպէս իր եղբօրը... Հրեշտակային անմեղ սիրով է սիրում նա ինձ... Իսկ զգացմունքներիս մասին ոչինչ չգիտէ:

ԼԵԽՈՆ

Նա Թիֆլիզումն է:

ԱՐՏԱՃԵՍ

Այո, և այժմ իսկ այս Փողովարանում... Դու տեսար ինձ նրա հետ խօսելիս:

ԼԵԽՈՆ

Նրա հետ...

ԱՐՏԱՃԵՍ

Այո... Տիկին Սամսոնեանի:

ԼԵԽՈՆ

Տիկին Սամսոնեան...

ԱՐՏԱՃԵՍ

Այո:

ԼԵԽՈՆ

Պ. Արկադիի կինը:

ԱՐՏԱՃԵՍ

Այո:

ԼԵԽՈՆ, Էրեմ շառավեհց յեպոյ:

Արտաշէս, Արտաշէս, դու խելքդ կողցրել ես բոլորովին:

ԱՐՏԱՃԵՍ

Տասը տարի էր, Լևոն, օ, տասը երկար տարիներ, հասկանում ես դու, մենք բաժանուած էինք, և բաւական էր այս գիշեր մէկ անգամ տեսնել նրան, որ սրտիս մէջ անթեղած կրակը նորից բորբոքուէր իր

բոլոր ոյժով... Պիտի իմանսաս, թէ փոքր ինչ առաջ ինչ պատահեցաւ ինձ, երբ որ յանկարծ նրա ձեռքն զգացի իմ ձեռքիս մէջ... Ճշմարտութիւնը վկայ, կեռն, ես երբէք այնպէս չեմ ցնցուել... Կարծեմ ինքն էլ նկատեց այդ և իսկոյն յետ քաշեց ձեռքը... Օ՛, ազնիւ Մարդարիտս, անգին Մարդարիտս...

ԼԵԽՈՆ

Իրաւ, շատ ազնիւ կին են ասում:

ԱՐՏԱՋԷԽԸ

Հաւատան ինձ, կեռն, եթէ գրուածքներիս մէջ պատահում է մի բարի, ազնիւ, առաքինի, վեհ կին, ես միշտ նրան եմ ունեցել աչքիս առաջ... (Լուսավորիչ) Այն, այն, պէտք է շուտով կորչեմ այստեղից... Այդ կինը կեանքիս մէջ միշտ վճռական դեր է խաղացել, և երեւ պիտի խաղայ, քանի շունչ կայ բերանումս... Նրա սէրն էր որ ինձ մղեց դէպի կրակը, դէպի գոռ պատերազմները:

ԼԵԽՈՆ

Ի՞նչպէս:

ԱՐՏԱՋԷԽԸ

Այն կողմը գնանք, ականջ զդնեն: (Դաշտուն) Իմ սէրը՝ դէպի այդ աննման էակը սկսվում է այն օրերից, երբ ես գեռ ուսանում էի այստեղ... Վենք միևնույն տանն էինք կենում, համարեա միասին ենք մեծացել... Զգիտեմ ինչպէս եղաւ, ես նրան սիրեցի, սիրեցի, եղբացը, որպէս մի խելագար, ինչպէս և սիրում եմ մինչեւ այսօր... Ես ուխտեցի վերջապէս կեանքս յաւիտեան կապել նրա հետ. նրա համար ասքել, նրա համար մեռնել... Սկսեցի աշխատել, անդուլ աշխա-

տել, որ թէ գիտութեամբ և թէ դիրքով կարողանամ արժանի գտնուել իրան... Եւ ահա սնուցանելով ինձ քաղցր յոյսերով ես վերջացրի ուսումս այստեղ և գնացի համալսարան... Նա այն ժամանակ տասն և հինգ տարեկան էր... (Խորը յուշւոց հոնելով:) Այն...

ԼԵԽՈՆ

ՅԵՄՈՒ

ԱՐՏԱՋԷԽԸ

Թէ որպիսի տաժանելի տարիներ եմ անցկացրել համալսարանում շարունակ ծփալով յուսոյ և երկիւղի մէջ, շարունակ մաքառելով մի կողմից գիտութիւնների, միւս կողմից սրտիս մէջ վառուող բուռն զգացմունքների հետ, անհնարին է ինձ, կեռն, մի առ մի նկարագրել... Բայց երևակացիր թէ այս ամենի վերջը ինչ սոսկալի հարուած է հասնում ինձ... Երբ մօտեցել էի գրեթէ նպատակիս, յանկարծ լուր եմ ստանում, որ իմ հրեշտակ Մարդարտին մարդու են տալիս... Եւ այդ ուղիղ վերջին քննութեանս նախընթաց օրը համալսարանում... Ախ, կեռն, որպիսի ծանր, որպիսի զարհուրելի րոպէ էր դա ինձ համար:

ԼԵԽՈՆ, յէ-տէ բանելով:

Հասկանում եմ, Արտաշէս, քո դրութիւնը... Զարհուրելի է:

ԱՐՏԱՋԷԽԸ

Յուսահատութիւնս քիչ էր մնում անձնասպանութիւն գործել տար ինձ, բայց դիմացայ, եղբացը, դիմացայ... Մեռնել, գոնէ այնպէս մեռնել, ասացի, որ մէկ բանի նման լինի... Ես մըուեցի... Ես ձգեցի ամեն ինչ և անմիջապէս մտայ զինուորական ծա-

ուայութիւն, մահը պատերազմի դաշտի մէջ որոնելու։ Իմ բաղդից պատերազմի տաք ժամանակն էր, երբ ամենքն էլ ոգևորուած էին ազգերի ազատութեան գաղափարով։

ԼԵԽՈՆ

Ահա, թէ որտեղ պէտք էր որոնել քո կատաղի յաղթանակների շարժառիթը։

ԱՐՏԱՃԵՍ

Այս, այդ պատերազմը մեծ դարձան էր բորբոքուած սրտիս, բանալով աչքիս առաջ մի նոր ասպարէզ... Դու երեակայել անգամ չես կարող, թէ ինչ զգացմունք է տիրապետում քեզ պատերազմի դաշտում, երբ յանկարծ դիմացդ կանգնած ես տեսնում... դարաւոր թշնամուդ, որ յափշտակել է քո հայրենի երկերը, որի համար քո պապերն ու նախնիքը իրանց քրտինքն ու արիւնն են թափել, ուր ամեն մի քար, ամեն մի աւերակ պատմում է քեզ անցեալի փառքը... Ո՛հ, այն ժամանակ, Լեռն, բոլորը մոռացվում է, բոլորը, և ամբողջ գոյութիւնդ միայն մի տեսչով, մի ցանկութիւնով է համակվում՝ կամ մահ, կամ կեանքիդ հետ քո հայրենի երկերը... Դու ինձ հասկանում ես, Լեռն։

ԼԵԽՈՆ

Լիովին, եղբայր։

ԱՐՏԱՃԵՍ

Մահն ինձ համար արդէն խաղալիք էր, բայց մընացի ողջ և առողջ, ինչպէս տեսնում ես... Պատերազմը վերջացաւ, ես հաշտուեցայ կեանքի հետ, իսկ Մարգարտի սէրը մնաց սրտիս խորքում որպէս մի

թանկագին գանձ, որ հետո ման եմ ածում անբաժան, ուր որ գնում եմ։

ԼԵԽՈՆ

Ապաբաղդ Արտաշէս:

ԱՐՏԱՃԵՍ

Մ'ս... Նա ինքն է, այս կողմն է գալիս։

ՏԵՍԻԼ Ժ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԻ, որ կէրառած էնում
Է՞ ա՞ ի՞նչից։

ՄԱՐԳԱՐԻՏ, ԿԱՇՎԱՐ

Թօնց տուէք, պ. Արտաշէս, Տանօթացնել ձեզ բարեկամուհուս հետ. օրիորդ Հեղինէ-Անթառամ։
ԱՐՏԱՃԵՍ

Մեծ ուրախութեամբ, (Ուշանելով Հեղինէն) Պատիւ ունիմ, օրիորդ. Արտաշէս Արամեան։

ՄԵՇԻՆԻ ՅԵՌ Են ուսւին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Օրիորդն էլ ինձ պէս զմայլուած է, պ. Արտաշէս, ձեր գրուածքներից։

ՀԵՂԻՆԻ

Այն, պարոն, ուրախ եմ, որ Տանօթանում եմ ձեզ հետ։

ԱՐՏԱՃԵՍ

Մեծապէս պատվում էք ինձ, օրիորդ... (Մարգարիտն) Տիկին, թոնց տուէք և ինձ ներկայացնել ձեզ իմ մտերիմ բարեկամիս. Լևոն զիրակեան։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ճատ ուրախ եմ: (Ձեռք է պաշտամ Լեռնեն:) Ես ձեզ արդէն մի փոքր ճանաչում եմ, պ. Լեռն: Պ. Արտաշէսը խօսում էր ձեր մասին, երբ դուք պարում էք մեր օրիորդների հետ: (Մարդուց անձուն Հեղինեն:) Խնդրեմ ճանօթանաք... (Հեղինեն:) Պ. Ճիրակեան... (Լեռնեն:) Օրիորդ հեղինէ-Անթ առամ: (Հեղինեն և Լեռնը չեռք են պաշտամ Տիգեանց:) Դուք հիանալի պարում էք, պարոն: Հեղինէս էլ լաւ պարող է: ԼԵՒՈՆ

Եթէ կը բարեհաճէք, օրիորդ, հետևեալ կադրիլը միասին պարենք: Ինձ շատ կը պարտաւորէք:

Հեղինեն գլուխ է պաշտամ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ առ այժմ նստենք, պարոններ, ինչու ենք կանգնած մնացել: (Նորուած են Մարդուրիդն ու Հեղինեն ժիանին, եռէ Արդարշէնն ու Լեռնը նըստացանդէն:) Պ. Լեռն, ուրեմն դուք մեջ մասամբ գիւղումն էք անցկացնում, ինչպէս պատմեց ինձ պ. Արտաշէսը:

ԼԵՒՈՆ

Այն, տիկին, ես ինձ լիովին նուիրել եմ հողին և հողագործներին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Լսել եմ, լսել, պ. Լեռն... Պէտք է մէկ օր գալ տեսնել ձեր աշխատութիւնները, եթէ թող կը տաք, ամուսինս ուրախ կը լինի ձեզ հետ ճանօթանալու:

ԼԵՒՈՆ

Տիկին, ես ինձ երջանիկ կը համարէի ձեզ պէս հիւրեր տեսնել իմ աղքատիկ ագարակում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՛, դուք շատ բարի էք, պ. Լեռն... Ուրեմն այդպէս, այս օրերս գծանք միասին, եթէ կը կամենաք, պ. Արտաշէս: (Արդարշէնը շատ ուշունաբար է:) Եւ դու, հեղինէ:

ՀԵՂԻՆԵ

Մեծ ուրախութեամբ:

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀՊԱՅԱԿ:

Բնութիւնը իմ սիրելի առարկան է:

ԱՐՏԵԶԻՍ

Այն, տիկին, լաւ լիշում եմ, որ դուք գեղեցիկ տեսարաններ էիք նկարում բնութիւնից: Արդեօք այժմ էլ շարունակում էք նկարչութիւնը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչպէս չէ, այդ ինձ համար մեծ սփոփանք է:

ԼԵՒՈՆ

Օ՛, տիկին, եկէք, եկէք, խնդրում եմ, դուք այնտեղ սքանչելի նիւթեր կը գտնէք ձեր վրձինի համար:

ՄԱՐԳԱՐԻՏ

Անպատճառ, պ. Լեռն, և առաջին պատկերը, որ կը նկարեմ ձեր գիւղի տեսարաններից, ես խոստանում եմ ձեզ նույրել:

ԼԵՒՈՆ, ուշունելով

Այդ անմոռանալի լիշատակ կը լինի ինձ համար, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀՊԱՅԱԿ:

Ճատ շնորհակալ եմ... (Լովուած է հարրեւել ուկառարնեւը:) Ահա ձեզ են հրաւիրում: (Լեռնը որտեղ է հանգնուած:) Այս օրերս կը սպասեմ ձեզ... Պ. Արտաշէսը խոստա-

ցել է գալ մեզ տեսութեան, միասին շնորհ բերէք,
ինդրեմ:

ԼԵԽԻՆ, ողջունել Մարտոբաբեն:
Սուանձին պատիւ էք անում ինձ, աիկին: (Հեռէ-
ահն:) Թռվ տուէք, օրիորդ...

Առաջարկելով լև, գնում է արտ հետ հասկն և հը-
սում աշուտ:

ՏԵՍԻԼ ԺԱ

ՄԱՐԴԱՐԻՏ, ԱՐՏԱՃԻՍ

ՄԱՐԴԱՐԻՏ, ո՞ր էն լուսականոց յեղոյ:

Պ'րքան ուրախ եմ, որ ձեզ կրկին տեսնում եմ...
Ինչքան գեղեցիկ յիշողութիւններ են գալիս միտս
մեր մանկութիւնից... Այն ժամանակ ես այնպէս էի
հաւատացած, թէ մենք միշտ նոյնը կը մնանք, մինչ-
դեռ այժմ անցած օրերը ինձ թվում են որպէս ե-
րազ... Մտաբերում էք, պ. Արտաշէս, ինչպէս մենք
խաղում էինք, ինչպէս վազվում մեր փոքրիկ պար-
տիզում... Մտաբերում էք և իմ խեղճ մօրը, թէ
ինչպէս էր նա ձեզ գուրգուրում... Օ՛, խեղճ կինը
շատ էր սիրում ձեզ, շատ...

Ացերը որբում է:

ԱՐՏԱՃԻՍ

Միթէ կարող եմ ես մոռանալ այն բարի կնոջը
երբ և իցէ... Ես ևս սիրում էի նրան ինչպէս հա-
րազատ մօրս... Ամեն ինչ, ամեն ինչ միտս է. մեր
խաղն էլ, մեր ուրախութիւններն էլ, մեր զուարձու-

թիւններն էլ... հաւատացէք տիկին, որ չի եղել, որ
այդ ամենը չմտաբերէի, և շատ անգամ, նոյն իսկ
պատերազմի դաշտի վրայ, թշնամու գնդակների դէմ
կանգնած՝ ձեր պատկերը սաւառնել է աշքիս առաջ:
ՄԱՐԴԱՐԻՏ

Ճնորհակալ եմ, բարեկամ, ես ևս միշտ մտաբերել
եմ ձեզ. մանաւանդ՝ ձեր հեղինակութիւնները կար-
գալիս շատ անգամ պատահել է ինձ, որ մտքիս
հետ գնալով, ամբողջ ժամեր եմ անցկացրել միւնոյն
թերթի վրայ... (Արտաշէս երբ յունոց է հանում. երազ
լուսական:) Գնանք, պ. Արտաշէս, մեր բարեկամներին
գտնենք... (Գնանք:) Ինձ թվում է, թէ մենք դար-
ձեալ մեր պարտիզումն ենք ման գալիս...

ԱՐՏԱՃԻՍ

Այն, երջանիկ օրեր էին...
Խորտում երեսում էն Եւելը և Արտաշէս լեռ-լեռ ոռուած, իսկ
իրակին Աբելը և Տի ոռեւ լիճնում Վարդուհին:

ՏԵՍԻԼ ԺԲ

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, առաջ գույն:
Մարգարիտ, ժամանակ է, ընթրիքն արդէն պատ-
րաստ է:

ՄԱՐԴԱՐԻՏ, Արտաշէս:

Պ. Արտաշէս, ամուսինս է, ինդրում եմ Տանօթ
լինիք, (Արտաշէս:) Պ. Արտաշէս Արամեան, մանկու-
թեանս ընկերը:

ԱՐԿԱԴԻՖ, պահելով եր Բարիւթիւնը:
Քատ ուրախ եմ, պարոն:

Տաղեա և չեռչը:

ԱՐՏԱՃԱՍ

Պատիւ եմ համարում, պարոն:

ԱՐԿԱԴԻՖ

Քատ ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալու... Ամբողջ
հասարակութիւնը ձեզ վրայ է խօսում այս գիշեր,
ձեր քաջութեան մասին պատմում:

ԱՐՏԱՃԱՍ

Օ՛, լսնդրեմ:

ԱՐԿԱԴԻՖ

Յոյս ունիմ, որ այսուհետև ինձ ևս ձեզ յարգող-
ներից մինը կը համարէք:

ԱՐՏԱՃԱՍ

Չափազանց բարի էք, պարոն:

ԱՐԿԱԴԻՖ

Իմ պարտքս է, պարոն... Միայն այժմ կը ներէք
լսնդրեմ, մեզ սպասում են:

ԱՐՏԱՃԱՍ

Ա՛, լսնդրեմ, պարոն:

ԱՐԿԱԴԻՖ, Մարտարէն:

Գնանք, սիրելիս:

ՄԱՐԴԱՐԻՏ, Արմատէն, յածը և յանդէման հայեաց չեւլով

Դրան:

Բաց հիւրը... (Բարձր) Պ. Արտաշէսը ևս այն կողմն
է գալու, մենք խոստացանք բարեկամուհուս: (Արամ-
շանն): Գնանք, պ. Արտաշէս, օրիորդ հեղինեն մեզ
սպասելիս կը լինի:

ԱՐՏԱՃԱՍ, առաջորդնու լեզ:
Խնդրեմ, տիկին:

ՄԱՐԴԱՐԻՏ, առաջորդնու լեզ:

Ձնորհակալ եմ... (Արմատէնն) Գնանք, Արկադի...
Գնանց էն:

ԱՐԿԱԴԻՖ, առաջորդն, Բարձրաց:

Անիջեալ...

ՎԱՐԴԱԼԻՆԻ, ՀԵՖԱՐԻՆ, Արմատէն:

ԽԵՂԱ Արկադի:

Ծիծողում է: Նոյն Տիլոցին լուսամ է Երածշորութիւն, որ նուա-
դում է Խորիւ, իամ պեղանոն Երածշորութեան լուսերն ուրի
եղանակը: Ժողովուրդը լուսորդ գնում է ուրի առանդը, իո՞ւ
Արմատէն, Վարդալին և Խորսում կը լինի ու Արէլը մնամ
էն անշործ: Պարմէր:

ՎԵՐԱ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱՌՈՒՄԾԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Սամսոնեանի տանը մի փարթամ դահլիճ՝ ջրս դռնով, որոնցից երկուսը ծախ կողմը, մինը աշ եւ մինն էլ խորքումը։ Զախ կողմի առաջին կարգի դուռը տանում է Մարգարտի սենեակը, երկրորդ կարգինը՝ Հեղինէի սենեակը։ աշ դուռը, որ գտնվում է երկրորդ կարգում, Արևադիինն է, իսկ վերջինը բացվում է դէպի նախասենեակը, որի պատուհաններից երեսում է մի գեղեցիկ պարտէզ։ Աշ կողմի առաջին կարգում մի պատուհան կայ։ Դահլիճը գարդարուած է ամենաշքեղ դրապիներով եւ կահ-կարասիքով՝ դաշնամուր, հայելիներ, ժամացոյց, պատկերներ եւ այլն։ Մի պատկեր, որ պարտէզ է ներկայացնում, դրած է սենեակի աջակողմեան անկիւնում ոսկէզօծ պատկերակալի վրայ։ Զախ կողմը արմաւենիր, լիմօնի ծառեր եւ ծաղիկներ ծածկում են երկրորդ դուռը։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՔՀՄ ԱՅԵՒԹՅՈՒՆ ՀԱՆԵՄՀՈՎ, ՍԵՍԻԼ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՆԱՊԱՃ ԱՆԱՅ է պարզաբանած։
Ո՞ր ժամն է։

ՍԵՍԻԼ, ԴՆԵԼՈՎ ԱԵՂԱՆԻ ՎՐԱՅ ՊԱՀԱԲՀԱՄՊՈՎ ԱՆՈՎԵՇՆԵՑ։
Կէս օրից մէկ քառորդ պակաս է, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ, գնացէք տեսէք, թէ օրիորդը տուն է եղել,
ասացէք որ սուրճը պատրաստ է։
ՍԵՍԻԼ

ԽԱԿՈՅՆ, տիկին, իսկ պարոնին։
ՄԱՐԳԱՐԻՏ

Նա տանն է։

ՍԵՍԻԼ

Այս, տիկին, նոր է վեր կենում։
ՄԱՐԳԱՐԻՏ

Դարձեալ, այս ինչ սովորութիւն է ընդունել։
ՍԵՍԻԼ

Առաւոտեան ժամի ջորսն անց է եղել, տիկին, որ
շնորհ է բերել։

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԱՅԱՀՅԱ:

Հետզհետէ աւելի ուշ և ուշ... Արդեօք որտեղ է
անցկացնում նա իր ժամանակը։

ՍԵՍԻԼ

Ի՞նչպէս կը հրամացէք, տիկին։
ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ, գնացէք պարոնին էլ խնդրեցէք, եթէ կամենում է, թող կայ... Միայն դարձեալ խնդրում եմ, Սէսիլ, որ օրիորդի սենեակի վրայ առանձին ուշք գարձնէք, ամեն բան իր տեղը լինի, խնդրեմ, բոլորը մաքրած, սրբած լինի. Փոշի չնկատուի և ոչ մի տեղ։

ՍԵՍԻԼ

Հրամել էք, տիկին։
ՄՊԱՍՄԱՐԻԾ ԷԵՒՐԱՄ է աւծալիւայ սնաւուելով մի ծառ։

ՄԱՐԳԱՐԻՏ, վերաբերում է ծրաբը:
Օրիորդինն է: (Սպասութիւն:)- Լաւ: (Սպասութիւն գործ
է գործ: Սեպէլն:)- Գնացէք իմացէք, պարոնը սուրճ
կամենում է:

ՍԻՍԻ

Եյս բովէիս, տիկին... Բայց ահա ինքը պարոնը:
Մարդութիւն աշխարհ դուրս է գործ նոխանքնեած:

ՏԵՍԻԼ Բ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐԿԱԴԻ, ԳԵՂԵՐԱՊԵՐԱ:

ԱՐԿԱԴԻ, յօթնջելով ժաւես է եւ սենեածից:
Ինչքան քնել եմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ ինչ կարդ է, ասա, խնդրեմ. միթէ չգիտես
որ տանը օտար աղջիկ կայ. նա իսկոյն դուրս կը
զայ, նրա մօտ էլ պէտք է այդպէս երեամս:

ԱՐԿԱԴԻ

Եթէ որ մեր տանն է կենում, էլ ինչ օտար:

ՄԱՐԳԱՐԻՏ

Խնդրեմ, խնդրեմ, գնա իսկոյն հագնուիր. այդ ինչ
քաղաքավարութիւնն է:

ԱՐԿԱԴԻ

Գնում եմ, գնում եմ:

Նստամ է ոչ ինչը և դարձեալ յօթնջում:

ՄԱՐԳԱՐԻՏ, չեաչ գլեհն պահելով:

Ա-լու:

ԱՐԿԱԴԻ

Իսկոյն, իսկոյն... Թող մէկ ձգձգուեմ:
Ճապառում է:

ՄԱՐԳԱՐԻՏ, ուեւեց վեր լուսելով:

Անտանելի է... Ես կ'երթամ, եթէ դու չգնաս:
ԱՐԿԱԴԻ, վեր հենալով:

Սարսափելի կին ես, մարդ իր տան մէջ էլ հան-
գտանալ չկարողանաց:

ՄԱՐԳԱՐԻՏ

Գնա քո սենեակում հանգստացիր, ինչքան կա-
մենում ես: Էլ հուր էիր այդպէս վաղ զարթում:

ԱՐԿԱԴԻ

Լաւ, լաւ, բաժակս տոնր, ես իմ սենեակում կը
խմեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ, ածելով մի բաժան: սուրբ:

Ահա, վեր առ:

ԱՐԿԱԴԻ, պրյանելով բաժան:

Այս ինչ հիանալի պաքսիմատ է... Ո՞րտեղից են գլ-
նել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Յետոյ, յետոյ. գնա շուտով հագնուիր, խնդրում եմ:

ԱՐԿԱԴԻ

Գնում եմ, գնում: (Քնաշալութեամբ նոյելով) Բայց ինչ
զեղեցիկ ես դու այսօր, Մարդարիտ: (Սորենալով) Կա-
րելի՞ է մէկ համբոցը ստանալ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Հեռայէք, խնդրեմ:

ԱՐԿԱԴԻ, ածելի հայեալով:

Ճշմարիտ, այսօր շատ ես դուր դալիս ինձ:

ՄԱՐԳԱՐԻՏ, գուշալ հայուսուի իրավը:
Կատարեալ պատիժ է:
ԱԲԿԱԴԻ, բաժանը դաշտով սեղանի վրայ:
Փանգոտ...
Սաւլով որևէ օղերեպոյից մի եղանակ, որուր է դառն իր սե-
նեալը:

ՄԱՐԳԱՐԻՏ, մենակ:
Ես մարդը հետզետէ անտանելի է դառնում:
(Նեղանած նորում է:) ԱՌԱ...
Վերջնում է մի սույնոծ գիրք և լուս իրբում է, յեղայ գլուխ
յեւսի մէջ առանելով, արհետը յենթում է սեղանին:

ՏԵՍԻԼ Գ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԻ

ՀԵՂԻՆԻ, մասնաւ է գլեարիով իր սենեալից:
Չուշացայ արդեօք, Մարդարիտ:
ՄԱՐԳԱՐԻՏ
Ոչ, ոչ, հոգիս. նստիր, խնդրեմ... (Սուրճ ածելով)
Ի՞նչ արիր, ի՞նչ շինեցիր, պատմիր տեսնենք:
ՀԵՂԻՆԻ, վերժնելով գլեարի:
Խսկոյն, Մարդարիտու... Միայն ասա ինձ, ինչու ես
այդպէս տիսուր:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչինչ:
ՀԵՂԻՆԻ
Ես սուշաւոտեան արդէն նկատեցի, որ դու մի
բանից վշտացած ես:

ՄԱՐԳԱՐԻՏ
Ուշադրութիւն մի գարձնիր, խնդրեմ, դու քո
գործերի մասին պատմիր:
Հնչեցնում է սեղանի վրայ ուրծ շանկուիլ:
ՀԵՂԻՆԻ

Օ՛, գործերս հիանալի են գնում առ ժամանակ.
մօդա եմ ընկնում ինչպէս վարժուհի. շատ դիմող-
ներ եղան... Կարծեմ ժամանակ չպիտի ունենամ ա-
մենքին հասնել:

ՄԱՐԳԱՐԻՏ
Ջատ ուրախ եմ, շատ, չեղինէ... Ես հաւատացած
էի, որ գործերդ լաւ կ'երթան: (Տալով ծրուց) Ահա,
կարծեմ մի հրաւէր ևս: (Սէմին, որ հրեւ էր նախաւենեա-
նց:) Պարոնի բաժակը տարէք:

Սէմիւ աշերը վայ լոռշելով, դառնաւ է բաժանը արծովեայ, փոք-
րին սուտացնի վրայ և առանաւ է Արտադին սենեալը:
ՀԵՂԻՆԻ, նահանէ իրբուրուց յեղոյ:

Եցի, յիրաւի մի նոր հրաւէր... Բայց ես տասը կը-
տոր չեմ կարող լինել... Աշմարիտ, զարմանալի մար-
դիկ են, կամ ամենեին ոչ ոք չէ հրաւիրում, կամ
հէնց որ մէկը հրաւիրում է թէ չէ, այնուհետեւ ա-
մենքն էլ աշխատում են միմեանց առաջը կտրել...
Եց ի՞նչ տեսակ բան է:

ՄԱՐԳԱՐԻՏ
Դու էլ դրանց միջից ընտրութիւն արա... Աւելի
լաւ է ընտրելու ունենալ, քան թէ ամենեին չու-
նենալ:

ՀԵՂԻՆԻ
Բայց ժամանակը կորչում է ի զուր... Այն ինչ որ

կարողանում էի դասատան մէջ բազմաթիւ աշակերտների հետ մի ժամում կատարել, այժմ ամբողջ օրեր է պահանջում միայն երեք-չորս աշակերտի համար:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այն, քեզ ուսումնարան է հարկաւոր
ՀԵՂԻՆԵ

Այն, ուսումնարան: Այնտեղ ես իմ տեղումն եմ, այնտեղ ես զգում եմ, թէ արդարե գործ եմ կատարում. ես իմ պաշտօնիս վսեմութիւնը դասատան մէջ եմ միայն հասկանում... Աշխ, Մարգարիտ, երբ ես կանգնած եմ երեսուն-քառասուն աշակերտների առաջ, երբ նրանց վառվուն աչքերն ինձ են նայում, նրանց ուշքն ու միտքը ինձ վրայ է դարձրած, երբ հարցուփորձ անելով ես համոզվում եմ, որ մի ժամուայ միջոցում նրանք ամենքն էլ մի բան սովորեցին ինձանից, ես ինձ երջանիկ եմ համարում այն ժամանակ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Աստուծով կրկին կը հասնես այդ երջանկութեանը:

ՀԵՂԻՆԵ

Այն, իմ կոչումը ուսումնարանի մէջ է... Ի՞նչպէս լաւ էի իմ պաշտօնում, որչափ երջանիկ էի ես այն ուսումնարանում... Բայց ինչ արած, ուրիշ ելք չկար պէտք է կամ գաղափարներից հրաժարուէի, կամ պաշտօնիցս... Երեք տարուայ աշխատանքս ի զուր անցաւ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ափսոս, ափսոս:

ՀԵՂԻՆԵ, աշխատ ոքելով:

Ափսոս իմ հրեշտակի նման աշակերտներս... Ես բոլորին այնպէս էի սիրում, և այնպէս սիրուած էի նրանցից, որ կարծում էի թէ նրանք ամենքն էլ իմ հարազատ քոյր ու եղբայրներս են... Զէ, ես պէտք է իմ սեպհական ուսումնարանն ունենամ, որ կարողանամ առանց ուրիշի միջամտութեան իմ ուզած ձեւն ու կերպարանքը տալ նրան:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի սրտէ ցանկանում եմ քեզ, որ այդ օրին արժանանաս:

ՀԵՂԻՆԵ

Ճնորհակալ եմ, հոգիս, այնպէս թէ այնպէս ես կը հասնեմ նպատակիս... հանգիստ եղիր... Միայն դու մէկ սպատմիր ինձ, թէ քեզ ինչ է պատահել... Քանի օր է արդէն ես նկատում եմ, որ դու թէկ աշխատում ես միշտ ուրախ երևալ ինձ, բայց հետզդ հետէ աւելի ու աւելի ես տիրում... Դու ծածկում ես ինձանից քո տիրութեան պատճառը, դու երջանիկ չես, Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞հ, թանկագին իմ Հեղինէ, այն, դու քո առաջ տեսնում ես ամենաթշուառ մի կին:

ՀԵՂԻՆԵ

Ի՞նչպէս... միթէ ճշմարիտ դու տարաբաղդ ես:
ՄԱՐԳԱՐԻՏ

Այն, տարաբաղդ եմ... (Լոռ-Ական:) Օ՛, եթէ հնարինէր ճանաչել մարդկանց, ինչպէս որ են նրանք իսկապէս, այն ժամանակ, ես կարծում եմ, աշխար-

հես երեսին մի կին անդամ տարաբաղդ չէր լինիլ...
Կարող էի արդեօք մտքովս անդամ անցկացնել, թէ
այն բարի, ազնիւ, համեստ երիտասարդը, որ մի
քանի տարի առաջ ներկայացաւ ինձ իբրև իմ փե-
սացու, այդ անառակ, խաբեբայ մարդն է, որին դու
տեսնում ես այժմ որպէս իմ ամուսին:

ՀԵՂԻՆԻ, հաւու չեւեւ և ռուհոցու:

Մարգարիտ,

ՄԱՐԳԱՐԻՏ

Մի զարմանար, հոգիս, խօսքերիս մէջ չափա-
զանցութիւն չկայ... Ահա, պարոնը նոր է զարթում.
առաւօտեան ժամի չորսից յետոց է տուն եկել: Ես
չեմ կասկածում, որ նա ամբողջ գիշերն անառակու-
թեամբ է անցկացրել... Այո՛, այո՛:

ՀԵՂԻՆԻ

Եւ դու չես սխալվում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ոչ, ես լաւ գիտեմ, թէ ինչ եմ ասում, պարոն
ամուսնուս ես լաւ եմ ճանաչում... (Լոռութեան) Գու-
ցէ ինձ պատիւ չէ բերում այսչափն էլ ասել, բայց
եթէ քեզ ես չասեմ, հեղինէ, էլ ում ասեմ, էլ ում
բանամ սիրուս... (Զեւու ուժուն ունեցու:) Էլ հատաւ
այստեղ... (Լոռութեան) Եթէ ամբողջ աշխարհն անդամ
ինձ տան, էլ աչքիս ոչինչ չի երևալ... (Արտավազ է:)
Կարծես թէ ես ինձ ծախած լինիմ այս փառքին,
այս հարստութեանը...

ԱՀԵՒՅ որբառ է:

ՀԵՂԻՆԻ

Խեղճ իմ Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՛, հեղինէ, թէ ինչ տանջանքներ եմ կրել այս
տանը և ինչքան արցունք թափել այս ոսկէ պա-
տերի մէջ, այդ միայն Աստուծուն է յայտնի...

ՀԵՂԻՆԻ

Իսկ ամբողջ հասարակութիւնը քեզ երջանիկ է
համարում և շատերը մինչև անդամ նախանձում են
քո վիճակին:

ՄԱՐԳԱՐԻՏ, բառավանդութեան:

Նախանձում են... հըմ... հասարակական կարծիքի
ստրուկ եմ դարձել, հեղինէ, և ոչ մի կողմից վըր-
կութիւն չկայ... Ես իմ թշնամուս էլ չէի ցանկանալ
իմ գրութեան մէջ լինել...

Լոռութեան:

ՀԵՂԻՆԻ

Բայց մէկ բան շատ է զարմացնում ինձ, Մարգա-
րիտ. ամուսինդ, ոլքան կարողացայ նկատել այս մի
քանի օրս, միշտ քաղցրութեամբ է վարվում հետդ...
Եթէ նա քեզ չսիրէր, հազիւ թէ այդպէս քնքուշ
վարուէր հետդ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Դիմակ, դիմակ, սիրելիս, բոլորը դիմակ է... Նա
ինձ հետ այդպէս վարվում է միայն քո ներկայու-
թեամբ, ուրիշների առաջ, հասարակութեան մէջ,
թէւ ինքն էլ լաւ գիտէ, որ ես իրան չեմ հաւա-
տում... Այս, նրա բարութեան և ազնւութեան այդ
դիմակն էր, որ ինձ մոլորեցրեց:

ՏԵՍԻԼ Դ.

ՆՐԱՆՔ, ԷԼԻԶ, ԱԲԻԼ, պաշտօնուի հասարակ նշու-
նալգեւսպով, պարանոյին շփառշան:

ՍՊԱԾԱՌԱՐ, Ճանուցանելով:

Տիկին և պարոն Մաստակեաններ:

ՄԱՐԳԱՐԻՏ, Հեղինեն ցածր և դժուհ:

Ամուսնուս մտերիմ բարեկամները: (Առաջ գնալով
և առաջ քաղաքավարութեամբ:) Համեցէք...

Ողանուորը դուրս է գնալ:

ԱԲԻԼ, Յետին լեռապահ:

Բարի օր ձեզ, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ, յետ պալ:

Բարե ձեզ, պարոն:

ԷԼԻԶ, այցան:

Բարե, սիրելի Մարգարիտ, ինչպէս ես:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ճնորհակալ եմ, դու ինչպէս ես:

ԷԼԻԶ

Ինչպէս տեսնում ես. լաւ եմ:

ԱԲԻԼ,

Ինչի լաւ յենք լինիլ, փառք Աստուծոյ. ջաններս
առողջ, քէֆներս քօք, հայներս բօլ, հա լաւ ենք
ու լաւ էլլի:

ՄԱՐԳԱՐԻՏ, հրամանաւ:

Համեցէք, խնդրեմ: (Մենելով յետը դէպի Հեղինեն:) Օրիորդ հեղինէ:

ԸԲԻԼ

Գիտեմ, գիտեմ, ճանաչում եմ: (Զեռս պալ Հեղի-
նեն, բայց եւսեր Աղքելով Մարգարիտն:) Այն գիշերը չլիր,
այն պարահանդէսի գիշերը, որ Փողովարանում միա-
սին ընթրիք էլ վայելեցինք: (Հեղինեն:) Ապրիս, շատ
ապրիս, զաւակս:

Թերլապահը դնում է աջ իրանի սեղանի վրայ:

ԷԼԻԶ, հայքուրելով Հեղինեն:

Իսկ մենք նոյն գիշեր բարեկամացանք արդէն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Նստեցէք, խնդրում եմ: Մի մի բաժակ սուրճ,
եթէ թոյլ կը տաք:

ԷԼԻԶ

Ոչ, շատ շնորհակալ ենք, մենք արդէն խմել ենք:

ԱԲԻԼ

Ես իմ սուրճն էլ, իմ թէյն էլ վաղուց խմել պրճել եմ:

ՃԵՂԻՆԵ, ՄԱՐԳԱՐԻՏ, հետզայն:

Ես գնամ տեսնեմ ինչ են ուզում: (Հեղինեն:) Նե-
րողութիւնն եմ խնդրում, ես ստիպուած եմ գնալու:

ԱԲԻԼ

Վա, մեր գալը ձեզ գուր չեկաւ, ինչ է:

ՃԵՂԻՆԵ

Ա՛յս, ինչ էք հրամանում, պարոն, ես արդէն գը-
նալու էի, երք գուր շնորհ բերիք:

ՄԱՐԳԱՐԻՏ, առաջին պալ Հեղինեն:

Այո, օրիորդին ահա հրաւիրել են:

ԱԲԻԼ

Գնա, գնա, զաւակս, շատ ապրիս, գործիդ միշտ
այդպէս արի եղիր:

ԱԲԷԼ

Բարով, ձերդ վսեմութիւն, կէս օրն անց է և դուք դեռ տանն էք: Երեկոյեան մեզ մօտ ընթրիքի էլ չնացիք... Պէտք է տուն գնամ, կինս մեղք է, ասում է... Աշդ է:

ԱՐԿԱԴԻ

Հաւատացէք, յարգելի բարեկամս, ես ինքս էլ չէի սպասում... չէնց ձեր տանից մի տասը քայլ հազիւ էի անցել, որ իմ լաւ բարեկամներիցս մէկը պատահեցաւ, արտասահմանից նոր էր եկել... Կամենում էի հետո տուն բերել նրան, բայց որովհետեւ մի փոքր ուշ էր արդէն, մտածեցի անհանդիստ չանել կնոջս... (Մարտարդին չեռաց առշաբան) Ա՛խ, բարի լոյս, անգինս, ինչպէս ես: (Մարտարդիու շուռ ուշ չունառում է:) Խօսելով գնացինք հիւրանոց, ուր նա իջել էր... Դէհ, գիտէք էլի, երկու լաւ բարեկամ, որ միմեանց պատահում են, էլ վերջ չի լինում նրանց քաղցր խօսակցութեանը... (Խորհրդառ հայեցաց է չժռաւ էլեւու կրայ, որ լուշին ծածկում է բերանը:) Ժամը չորսն անց էր, որ հազիւ բաժանուեցանք:

Էլեւու լուսնական բերանին բուռած հաղում է:

ԱԲԷԼ

Տեսէք, խնդրում եմ. ուղիղ ժամը չորսն էր, որ սա էլ ինձ զարթացրեց իր աղմուկով... Թրը'խկ, թրը'խկ... գնացին, եկան, վայր գցեցին, կարծեցի գողեր են եկել... Դուրս նայեմ, ինչ տեսնեմ. աղջիկ պարոնս մենակ բոլթա է տալիս դահլիճում... Ի՞նչ է, ինչ է պատահել. սա թէ՝ վախեցայ, գետինը շարժ գահաւ, ասում է... Դուք իմացաք գետնի շարժ գա-

լը... Ծմ, ինչ գետին շարժ գալ, ինչ վլան, ինչ ֆրատան... Մի ասիլ, երազումը վախեցել է աղջիկ պարոնս, վեր է թռել յանկարծ, քնաթաթալս դուրս է ընկել դահլիճ, ես հօ միւս ծացրին եմ քնած, դիպել է աթոռին, աթոռն էլ միւսին ու երկուսը միասին՝ շրբ'խկ, թրը'խկ, վայր են թափում յատակի վրայ... Գետինը շարժ եկաւ, ասում է... (Ծէծառաւ է:) Այդպէս որ ամեն ժամանակ գետինը շարժ գայ, այդ հւր կ'երթայ, ձեզ եմ հարցնում... Էլ քարը քարի վրայ չի մնալ, Աստուած է վկայ:

ԷԼԻՉ, աճաշելով:

Վահ, ես ինչ անեմ, որ վախեցայ:

Խորհրդառ հայեցաց է չժռաւ Արէտէի գրայ. ոյտ նէտում է Մարտարդը, որ սիսում է հետպատճեան ուելի և ուելի յուրաքանչեւ:

ԱՐԿԱԴԻ, առողելով ծիծառը:

Ճատ բնական է, որ մարդ երազի մէջ վախենայ, ինչ կայ որ:

ԱԲԷԼ

Էհ, ձերդ վսեմութիւն, վախենալն էլ իրանից է... Այնքան ասում եմ, մենակ մի քնիր, գիշերն առանձին սենեակ հարկաւոր չէ քեզ, բայց հւմ կը հասկացնես. կինարմատի հախեցը հվ կարող է գալ... Այս ամենը ձեր շնորհքն է, ձերդ վսեմութիւն. չէ որ դուք ևս առանձին-առանձին սենեակ ունիք... Նայեց կինս և սովորեց:

ԱՐԿԱԴԻ

Էհ, պ. Աբէլ, նոր ժամանակ, նոր սովորութիւններ...

ԱԲԵԼ

Այս ի՞նչ է նշանակում:
Էւեռ շահարծ վաղաց է դեռև Արտաբեն, որ վերաբառաւում է:

ԱՐԿԱԴԻ, դանելում:

Ո'չինչ, ոչինչ, հանգիստ եղէք:
ԷԼԻԶ, Արտաբեն յանք:

Կարելի է տեսաւ:

ԱՐԿԱԴԻ, այսպէս:

Ոչ, դրան ացդպէս երբեմն պատահում է. ներեցէք,
ես խսկոյն կը վերադառնամ... Նստեցէք, խնդրեմ:
Յէ՛ է դաւաւ:

ՏԵՍԻԼ է

ԱԲԵԼ, ԷԼԻԶ

ԱԲԵԼ

Ցաւազար է եղել խեղճը:

ԷԼԻԶ

Ոչ թէ ցաւազար, այլ խստերիկա ասա:

ԱԲԵԼ

Ում ի՞նչ պատահի, քեզ համար բոլորն էլ խստերիկա է:

ԷԼԻԶ

Որ բժշկին կամենաս հարցրու:

ԱԲԵԼ

Խստերիկան ի՞նչ բան է, ասա խնդրեմ... Ի՞նչ ցի-
մար անուն ասես բժիշկները կը հնարեն... Ցաւը
ցաւ է, հիւանդութիւնն էլ հիւանդութիւն: Հետը

խօսելիս էլ պարզ տեսնում էի, որ գունաթափվում
էր... Ինչի՞ դու չես գունաթափվում այդպէս, կամ
ինչի՞ դու չունիս այդ խստերիկան, եթէ լաւ բան է:

ԷԼԻԶ

Աստուած մի արասցէ:

ԱԲԵԼ

Այն, ես քեզ ասում եմ, մօղնի բաներից ձեռք
վերցրու, եթէ ոչ մէկ օր քեզ էլ կը պատահի այդ
խստերիկա է, ինչ զահրումար է:

ԷԼԻԶ

Պահ, անիջում ես ի՞նձ:

ԱԲԵԼ

Ընդհակառակը, իմ միրուն թռչնակս, ես քեզ
խրատում եմ, այդ իմ պարտաւորութիւնն է... Օրի-
նակ՝ ի՞նչ է աւելանում քեզ, որ անունդ դրել ես
ելիզ... Մկրտութեանդ անունը Եղիսաբէթ է, Եղի-
սաբէթ էլ կաց քեզ համար եթէ ոչ, ի՞նչ է՝ ելիզ,
ելիզ... Քաղցրութիւն ես ուզում, ահա քեզ Եղիս,
կամ Սաբէդ... Արի Սաբէդ գառիր, եթէ ուզում ես:

ԷԼԻԶ

Լուացարան եմ, ի՞նչ է:

Գուռում է և Մարտորուի ունեցուի դաշուէ նայում:

ԱԲԵԼ, առանցին:

Ինչիցն է, որ կանաչք այսպէս հետաքրքիր են:

Հետուում է չնոշ օրինուին:

ԷԼԻԶ, ուրուի:

Նա բոլորովին առողջ ման է գալիս:

ԱԲԵԼ

Է՛հ, փառք Աստուածոյ... Երանի մի շուտով այն

մարդը գուրս գար, (Թէրթառհակից մի ծբար հանելով) մէկ
այս ցալից ազատուէի:

ԷԼԻԶ

Սպասիր մի փոքր, ինչ եղաւ քեզ:
ԱԲԻԼ

Ինչպէս որ կը հրամայես, իմ սիրելի Սաբէդ:
Աւանչն, ծիծովէլով երես ծանծառում է:
ԷԼԻԶ

Ես քեզ հրամայում եմ, որ այսուհետեւ էլ չհամար-
ձակուես Սաբէդ ասել ինձ:

ԱԲԻԼ

Լաւ, լաւ, ներիր, մի բարկանար, իմ անգին Էլիզ,
մա շէր Էլիզ... Դու գիտես, որ ես քեզ շատ եմ սի-
րում և ոչինչ չեմ խնայի քեզ համար... Ես պատրաստ
եմ գլուխս քեզ մատաղ անել:

ԷԼԻԶ

Ի հարկէ գիտեմ և հէնց դրա համար էլ քո մէկ
մազը ամբողջ աշխարհի հետ չեմ փոխիլ:

ԱԲԻԼ, ԳՐԵՆԴ

Իմ աղաւնեակս:

ԷԼԻԶ

Սպասիր, սպասիր... (Նստեցնելով ամուսնուն:) Ացսեղ
նորից մի սպիտակ մազ երեաց...

Յենուելով ամուսնուն, գլուխ ճառէրը ժրէրում է:

ԱԲԻԼ

Միայն զգնց, խնդրում եմ. այսօր առաւօտեան
ամբողջ մի փունջ պոկեցիր:

ԷԼԻԶ

Համբերութիւն:

ԱԲԻԼ

Վայ, կամաց... Վայ, վայ, վայ... Անողորմ, սևն էլ
սպիտակի հետ պոկեցիր:

ԷԼԻԶ, յեւու Աշխատանով, Տէ՛ւուի ծիծովում է:

Ոչինչ... (Պէս ածելով պուած հաշերը) Ահա այս
անպիտանները:

ԱԲԻԼ

Է, սիրելիս, դու թէւ ասում ես, որ իմ մէկ մազը
ամբողջ աշխարհի հետ չես փոխիլ, բայց մի քանի հատ մազիդ հա-
մար արդէն լաց ես լինում... (Զեւու Աբէլը գլուխ քա-
շվէ) Ահա, դարձեալ իմ սիրուն սև գլուխը:

ԷԼԻԶ

Իսկ դու, հոգիս, հէնց այս րոպէիս գլուխդ ինձ
մատաղ էիր անում, բայց մի քանի հատ մազիդ հա-
մար արդէն լաց ես լինում... (Զեւու Աբէլը գլուխ քա-
շվէ) Ահա, դարձեալ իմ սիրուն սև գլուխը:

ԱԲԻԼ, ԳՐԵՆԴ

Իմ հրեշտակ:

ԷԼԻԶ, ԿՐԵՄՆ

Գալիս են, գալիս:

ՃԵՄԻԼ Հ

ՆՐԱՆՔ, ԱԲԿԱԴԻ

ԱԲԿԱԴԻ, ՃՄԿԱԴՐԵՆ

Ապրիք, ապրիք, կեցցէք:

ԷԼԻԶ, ԱԲԷԼԻՆ, ՅԱՃՐ

Խայտառակեցիր:

ԱՐԿԱԴԻ

Ո՞րչափ հաճելի է սիրով ամուսիններ տեսնելը:
Անիլ, դուք ինչ շուրջուած:
Կ՞ո, ինչ անենք, ձերդ վսեմութիւն, շատ մարդ
սովորութիւն ունի՝ ուրիշի կնկան է գրկում, այս
մէկն էլ իմ կնկան ես ինքս լինիմ գրկած, ինչ կայ որ:
ԱՐԿԱԴԻ

Կատարելապէս իրաւունք ունիք, բարեկամս:
Յանդէմանական հայեցած է զժուած էւեռն գրայ:
Ալիք, հայեցած հանդուրցանուած է Արդարելին:
Ի՞նչպէս է Մարդարիսու:

ԱՐԿԱԴԻ

Փառք Աստուծոյ... Մի քիչ կողքը ցաւում էր, բացց
անցաւ: Երևի մրսել է: (Աբեւ շաբանածուած աէցնուած է
էւեռն, ու նու ուշեւ էր անոնեւ, լէ Մորդուրեց հետոնէ
է:) Միայն ներօղութիւն է խնդրում, որ չէ կարող
դուրս գալ... Ես ինքս առաջարկեցի, որ փոքր ինչ
հանգստանայ:

ԱԲԵԼ

Մենք հօ օտարներ չենք, ձերդ վսեմութիւն, թող
հանգստանայ, աւելի լաւ:

Մօդենուած է ուշանին և ուբոշվուած է ծրարու:

Ալիք, Արդարելին, ցածր:

Ուրեմն ոչինչ չէ նկատել:

ԱՐԿԱԴԻ, ասյնու:

Հանգիստ եղիր... (Գնալու տէպի Աբեւը:) Այդ ինչ է,
սիրելիս:

Էւեռը մի հողմը քաշուելով, ուբոշվուած է ուբօնով:

ԱԲԵԼ

Զեր վսեմութեանը յացտնի բարեգործութեան հա-
մար հաւաքածներ:

ԱՐԿԱԴԻ, շարժէլու:

Գիտեմ, զիտեմ:

ԱԲԵԼ, ծրարը ուսւած Աբեւը էլին, ցածր:
Բոլորն ացտեղ է՝ փողն էլ, հաշիններն էլ:

ԱՐԿԱԴԻ, ծրարը շահւը ծրայ:

Լաւ, լաւ...

ԱԲԵԼ, Աբեւը էլին, ցածր:

Ես իմ մասն արդէն վերցրել եմ:

ԱՐԿԱԴԻ

Ճատ բարի... Ես ացսօր ևեթ կը հրամայեմ, որ բո-
լոր գործերը վերջացնեն... Ուրիշ ինչ կայ այդտեղ
թերթապահում:

ԱԲԵԼ

Ամենահարկաւոր պաշտօնական թղթեր են, ձերդ
վսեմութիւն:

ԱՐԿԱԴԻ

Թողէք այստեղ, ես շուտով կը վերադարձնեմ...
Այդպէս, այդպէս թերթապահով:

ԱԲԵԼ

Եթէ թոյ կը տաք, ձեր սենեակը կը տանեմ:

ԱՐԿԱԴԻ

Ա՛յս, դուք ինչի էք նեղութիւն կրում:

ԱԲԵԼ

Ի՞նչ էք հրամայում, ձերդ վսեմութիւն, այս ինչ
նեղութիւն է:

Թերթապահը չէ ուստի ուսւած է գնուած ող ուսնից:

ԷԼԻԶ, վաղելու տէպի Արէտէն, յածը:
Ես կարծում եմ որ բռնուեցանք:
ԱՐԿԱԴԻ
Ոչ, ասում եմ, միամիտ եղիր... (Ձեռքը դաշնելով ծոցը:)
Այս ինչ ես գրել:

ԷԼԻԶ

Կը կարդաս, կ'իմանաս...
ԱՐԿԱԴԻ, ծոցից հանելով լուսվեց:

ԻՆՉ գաղտնիք է:

ԷԼԻԶ

Ա՛, խնդրեմ...
Վաղաւ է տէպի ալբօնը և առաջուայ տէրո՞ն շնորհուած:
ԱԲԻԼ, Քերաւանուալ
Բոլորը կարգով գարսեցի սեղանի վրայ:
ԱՐԿԱԴԻ, դահելով լուսվեց:

Ջատ շնորհակալ եմ:

ԱԲԻԼ

Զարժէ շնորհակալութեան, ձերդ վսեմութիւն:

ՏԵՍԻԼ ԹՇ

ՆՐԱՆՔ, ՀԵՂԻՆԵ

ԱՐԿԱԴԻ, Հեղինէն, որ ճանաւ է եր սենեմից:
Ա՛, օրիորդ Հեղինէ, բարե ձեզ... Ի՞նչպէս էք, այ-
սօր դեռ չենք տեսնուել:
ՀԵՂԻՆԵ
Ջատ շնորհակալ եմ, պարոն. դժւք ինչպէս էք:

ԱՐԿԱԴԻ

Ինչպէս տեսնում էք, օրիորդ, ես միշտ լաւ եմ,
միշտ առողջ, միշտ էլ ուրախ... Կարծեմ, տիկնոջը և
բարեկամիս ճանաչում էք:

ՀԵՂԻՆԵ

Այո՛, պարոն, փոքր ինչ առաջ մենք արդէն տես-
նուեցանք այստեղ:

ԱԲԻԼ, Արէտէն:

Ջատ լաւ բան էք արել, ձերդ վսեմութիւն, որ
օրիորդին ձեզ մօտ էք ընդունել: Այսպիսի վտան-
գաւոր ժամանակ, երբ ամեն մի քայլափոխում մի
մի գայլի է հանդիպում մարդ, ձեզ պէս տէր ունե-
նալը մեծ բաղդ է: (Հեղինէն:) Այո՛, օրիորդ: (Էլելէն:)
Է՛հ, գնանք, հոգիս, ժամանակ է: (Արէտէն:) Ներո-
ղութիւն:

ԱՐԿԱԴԻ

Իսկոյն, իսկոյն: (Հոռո՞ է առաջ ելէսորո՞ն հնչո՞վ ի՞-
մա՞նին:) Մ'եր կառքով գնացէք, խնդրում եմ:

ԷԼԻԶ, Էղծելով

Ինչի՞ էք նեղութիւն քաշում, պարոն, շատ շնոր-
հակալ ենք, այնպէս էլ կ'երթանք, հեռու չենք:

ԱՐԿԱԴԻ

Ցատուկ խնդրում եմ:

ԱԲԻԼ

Ճշմարիտ, ի զուր նեղութիւն էք կրում, ձերդ վս-
սեմութիւն. չի՞ որ դուք ևս գնալու էք շուտով:

ԱՐԿԱԴԻ, անձա՞վ ժամացոցին նայելով

Օ՛, ես դեռ բաւական ժամանակ ունիմ... (Ներ-

Հոգած սովորութեն:) Տիկնոջը և պարոնին մեր կառքով
տանեն:

Սպասարկություն է գնում:

ԷԼԻԶ, առաջին չշաբախ:

Ջատ շնորհակալ ենք, որ ազդակս պատվում էք
մեզ... (Ձեւու առլուկ) Մնաք բարեաւ. մեզ մի մոռա-
նաք, խնդրում եմ: (Հեղինակն, համբուքալ) Յտեսու-
թիւն, օրիորդ...

ՀԵՂԻՆԻ

Յտեսութիւն, տիկին:

ԸԲԻԼ, չեւս առլուկ:

Մնաք բարեաւ, օրիորդ... Ո՞ղ և առողջ լինիք,
ձերդ վսեմութիւն:

ԷԼԻԶ, աճուառաւ լւեն առնելով, Հեղինեն:

Մարգարիտս լաւ պահեցէք: (Արէութեն:) Յոյս ունիմ
այս անգամ երկար սպասել չէք տալ մեզ:

ԱՐԿԱԴԻ, առէցնելով

Անչափ բարի էք, տիկին:

Էլին և Աբելը տրում են գնում:

ՏԵՍԻԼ Ժ

ՀԵՂԻՆԻ, ԱՐԿԱԴԻ

ՀԵՂԻՆԻ

Մարգարիտս ուր է:

ԱՐԿԱԴԻ

Իր սենեակումն է: (Հեղինեն համեստ է գնուլ:) Սպա-
սեցէք, օրիորդ:

ՀԵՂԻՆԻ

Ի՞նչ կը հրամայէք:

ԱՐԿԱԴԻ

Ասացէք, խնդրեմ, օրիորդ, արդեօք գիշ էք ձեր
սենեակից:

ՀԵՂԻՆԻ

Ես շատ գոհ եմ, պարոն, իմ սենեակից և անչափ
շնորհակալ եմ ձեր հիւրասիրութիւնից:

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ էք հրամայում, օրիորդ, այդ իմ պարտակա-
նութիւնն է: Պուրք այնպիսի սուրբ գործի էք ծա-
ռայում, որ մարդ ինչ էլ կատարի ձեզ համար, դար-
ձեալ քիչ է... Տարածել լոյս և դիտութիւն մատադ-
սերնդի մէջ, պատրաստել հասարակութեան համար
բարոյապէս զարգացած մայրեր... միթէ սրանից էլ
աւելի վսեմ աշխատանք կայ աշխարհիս երեսին...
Օ՛, ես սաստիկ յարգում եմ լուսաւորութիւնը և, հա-
ւատացէք, զիտեմ գնահատել ձեզ նման աշխատա-
ւորներին... Ձեր կոչումը, օրիորդ, վսեմ է և սուրբ.
Ես խոնարհում եմ այդ կոչման առաջ և երջանիկ
կը լինէի, եթէ կարողանայի մի կերպ հաճելի գըտ.
Նուել ձեզ:

ՀԵՂԻՆԻ

Պուրք չափից դուրս բարի էք, պարոն, շատ շնոր-
հակալ եմ:

ԱՐԿԱԴԻ

Օ՛, օրիորդ, իմ կնոջ սրտակից բարեկամուհու հա-
մար ես ոչինչ չեմ խնայիլ, հաւատացէք... Ես շատ
եմ սիրում կնոջս, շատ, և այդ պատճառով սիրում ե-

յարգում եմ ամենին, ով որ նրան սիրում է... Խեղ-
ճը հիւանդում է, տեսնում էք. միշտ տվսուր, միշտ
սիրութ ծածկուած... Զգիտեմ, ինչ անեմ, ինչպէս ու-
րախացնեմ... ոչինչ չէ յաջողվում ինձ... Այս մի քանի
որ է միայն որ ես նրա երեսին երեմն ժպիս եմ
նշմարում... Ուրեմն դուք ինքներդ կարող էք դա-
տել, թէ որքան պիտի ես գոհ լինիմ, որ դուք մեզ
մօտ էք բնակվում... Աստուած կը վարձատրէ ձեզ
ձեր բարի, ազնիւ սրտի համար. (Ժամացուցին նոյնէլով:
Սակայն ժամանակ է... (Տառապ չեւուի.) Յատուկ ներո-
գութիւն եմ խնդրում, օրիորդ, պաշտօնական գոր-
ծերս ստիպում են ինձ ձեզ թողնելու: Յտեսութիւն,
օրիորդ:

Թառապում է չեւուի:

ՀԵՂԻՆԻ

Յտեսութիւն, պարոն:

ԱՐԿԱԴԻ, գնալ, մերուի:

Օ՛, որպիսի գեղեցիկ աչքեր:

Դուրս է դառնաւ:

ՏԵՍԻԼ ԺԱ

ՀԵՂԻՆԻ, ԹԵՆՈՒ:

Ես այլես ոչինչ չեմ հասկանում... Միթէ Մար-
գարիսը սիսալվում է... (Աւուրը շրջուած է, յերոյ համեսուած
է հանել Մարտորուի ուսուուլ:) Դուռը կողպած է: (Կայոց
բազմուած է դուռուած. լուսուած է Մարտորուի շայնը՝ Ո՞վ է...) Հե-
ղինէն: (Դարձեալ Մարտորուի շայնը՝ Խոկոյն:)

ՏԵՍԻԼ ԺԲ

ՀԵՂԻՆԻ, ՄԱՐԳԱՐԻՏ

ՄԱՐԳԱՐԻՏ, Աւուրը լուսուած է դուրս նոյնէլով:
Դու մենակ ես:

ՀԵՂԻՆԻ, առած:

Այս, ամենքը: ՄԱՐԳԱՐԻՏ առած է և իրին աշխեռը սը-
բուած: (Լուսութեան:) Ինչու ոչինչ չես խօսում: (Նոյնէլով
էրացին, առած է չեւուի:) Ասա, հոգիս, ասա, ինչ է պա-
տահել. չի որ ես քո հեղինէն եմ, դու ինձանից ո-
չինչ չունիս ծածկելու... (Ժամացուցին նոյնէլով:) Բաւական է,
Մարգարիս, բաւական. հանգստացիր, աղաջում եմ...
Երեխ քեզ վշտացրել են:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ջատ, շատ:

ՀԵՂԻՆԻ

Ո՞վ... ամուսինդ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ամուսինս... Վաղուց է որ ես նրան ճանաչել եմ. նրա
արարմունքն ինձ չի վրդովեցնում այլես... Բայց
երբ քեզ խաբում է քո ընկերուհին, որի հետ դու
երեխայ մեծացել ես, որին դու քոյր էիր համարում

միշտ... Այս... (Շաբաթուածառվ արդայայրաւ և վէրեն առողջանկան առաջարարութեան:) Ի զուր չէր կասկածս... (Հեղինէն աղաւ է:) Թողնենք, թողնենք, խնդրում եմ... Ես այժմ ոչինչ չեմ կարող ասել... Ես սաստիկ անպատճած եմ... Բոլոր ցաւս արտայացտել անկարող եմ... Ես կը խեղդուեմ պատմելիս... Ինձ յիմարի տեղ են ընդունում... ինձ կոցը են համարում...

ՀԵՂԻՆԵ

Հանգստացիր, Մարգարիտս, աղաչում եմ, հանգստացիր:

ՄԱՐԳԱՐԻՏ

Եցի, այս, քոյրիկ, այս, հոգիս, ես բոլորը կը պատմեմ քեզ, բոլորը. այժմ ներիր:

ՀԵՂԻՆԵ

Լաւ, լաւ, հանգստացիր միայն, խնդրում եմ, յետոյ ի հարկէ կը պատմես. այժմ ուրիշ բան խօսենք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Եցի, ուրիշ բան, ուրիշ բան... Թոնդ մտքիցս հեռանան այն զգուելի տեսարանները... (Բաւելով Հեղինէն չեւաւը, նրա հետ միայն շատ ճան է դաշին ծանր ժայռերով և բերարեց, յեղոյ բերած շայունք:) Դու ինչ արիր:

ՀԵՂԻՆԵ

Ջատ խիստ պահանջներ են առաջարկում, Մարգարիտ. Երեք երեխայ, առաւտօնները դասեր զանգան առարկաներից, նրանց հետ միասին ճաշել, իսկ երեկոյեան զբոսանք: Եցի շատ ծանր է ինձ համար... Ուրեմն պէտք է ամբողջ օրս նրանց նուիրեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Յետոյ համաձայնեցիր:

ՀԵՂԻՆԵ

Ոչ, մերժեցի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞րքան գոհ եմ, հեղինէ, որ մերժել ես. այսև անկարող եմ առանց քեզ ապրել: Քեզանից աւելի էլ ոչ ոք չունիմ:

ՀԵՂԻՆԵ

Իսկ ես ով ունիմ բացի քեզանից:

ՍՊԱՍԸՆԻՈՐ

Տիկին, մի անձանօթ զինուորական է:

Արժուել գոռչին մոռագեղող առաջարիւած է ին այցելուն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Արտա...շէս Արա...մեան... (Սպասուորին:) Խնդրիր: (Սպասուորի դուրս է դառնա:) Այս, հեղինէ, ես այսպէս... ՀԵՂԻՆԵ

Ի՞նչ պատահեցաւ քեզ, Մարգարիտ, գու բոլորովին գունատուեցիր:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞վ, Բս... Միթէ...

ՀԵՂԻՆԵ

Այս, այս, հոգիս:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս, նա բարձրանում է:

ՀԵՂԻՆԵ

Իսկ ես փախչում եմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Սպասիր, սպասիր, խնդրում եմ:

ՀԵՂԻՆԵ

Ես գործ ունիմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Մի քանի րոպէ միայն...

ՀԵՂԻՆԻ

Կուշանամ, Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Եղաջում եմ... Ես իսկոյն... դու ընդունիր...

Դուրս է վայում ի՞ւ սէնեալը:

ՏԵՍԻԼ ԺԴ.

ՀԵՂԻՆԻ, ԱՐՏԱՃԻՍ

ՍՊԱՍԱԽՈՐ, ՃԱՌԱՋԱՆԵԼՎ

Պ. Արտաշէս Արամեան:

ԱՐՏԱՃԻՍ

Բարե ձեզ, օրիորդ:

Ապահով ժամ է ժամանակ:
ՀԵՂԻՆԻ

Բարե, պարոն: (Միւեռնց չեռ բալեն:) Նստեցէք,
խնդրեմ, տիկին Մարգարիտն իսկոյն դուրս կը դայ:
Նստամ Են:

ԱՐՏԱՃԻՍ

Գուցէ ես անչարմար ժամանակ եմ եկել:

ՀԵՂԻՆԻ

Ընդհակառակը, պ. Արտաշէս... Վաղուց է որ սպա-
սում էինք ձեզ և ձեր բարեկամին... Ի՞նչու նա էլ
ձեզ հետ շնորհ չըերեց:

ԱՐՏԱՃԻՍ

Ներողութիւն, օրիորդ, պարահանդէսի երկրորդ

օրը գիւղացիք տարան նրան մի կարևոր գործի հա-
մար և ահա մինչեւ այժմ դեռ չէ վերադարձել...
Այսօր ես ևս թողնում եմ Թիֆլիզը:

ՀԵՂԻՆԻ

Միթէ:

ԱՐՏԱՃԻՍ

Ես, օրիորդ, ստիպուած եմ... Եկել եմ հրաժեշտիս
ողջոյնը տալու ձեզ և տիկին Մարգարիտն: (Նէմէ-
շու պարէերանէլք վըս ժըմ նէրը, յանչըրծ:) Այս... Ներո-
ղութիւն, օրիորդ: (Մօքէնում է նէրին:) Այս տիկնոջ նը-
կարածը պէտք է լինի:

ՀԵՂԻՆԻ

Ես, պ. Արտաշէս. այդ նկարը ներկայացնում է
այն պարտէզը, ուր Մարգարիտս անց է կացրել իր
մանկութիւնը:

ԱՐՏԱՃԻՍ

Ես, այս, ճանօթ է ինձ... Ո՛հ, որքան քաղցր
յիշողութիւններ...

ՏԵՍԻԼ ԺԴ.

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՉԳԵՎԱՐ Գուգ ինչ իարգի բերած:

ՄԱՐԳԱՐԻՏ

Պարոն Արտաշէս, բարե ձեզ:

ԱՐՏԱՃԻՍ

Բարե ձեզ, տիկին... (Միւեռնց չեռ բալեն:) Ես
հիացած նայում էի ձեր նկարին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՛, այդ մի չնչին բան է: (Հրահերձուկ) համեցէք
նստեցէք, խնդրեմ: (Նորուց էն:.) Խոկ պ. Լևոնն ուր
է. չէ որ դուք խոստացաք միասին շնորհ բերել:

ԱՐՏԱՃԵՍ

Այն, տիկին, քայց նա գնաց զիւղը և դեռ երեխ
ուշ կը վերադառնաց:

ՀԵՂԻՆԵ

Գիտես, Մարգարիտ, պ. Արտաշէսը գնում է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Միթէ...

ԱՐՏԱՃԵՍ

Այն, տիկին, ես հէնց այսօր գնալու եմ. Եկել եմ
ձեզ բարեկ-մնաք ասելու:

ՄԱՐԳԱՐԻՏ

Միթէ այդպէս շուտ... Եւ երկար կը տեի ձեր
բացակայութիւնը:

ԱՐՏԱՃԵՍ

Հգիտեմ, տիկին, այդ կախուած է հանգածանքնե-
րից. գուցէ մի քանի շաբաթ ուշանամ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Խոկ ձեր նոր վլապը... շարունակում էք արգեօք:

ԱՐՏԱՃԵՍ

Ի՞նչպէս չէ, տիկին, բոլոր ազատ ժամանակս նր-
ան եմ նուիրում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ցանկանում եմ ձեզ յաջողութիւն... (Լուսաբառ:)
Եցդպէս... Գնում էք ուրեմն... Աշխատեցէք շուտով
վերադառնալ. մենք կը սպասենք ձեզ:

ՀԵՂԻՆԵ, ՊԵՆԵ ՎԵՐ ՀԵՆԴԵԼՈՒ:

Ներողութիւն եմ խնդրում, պ. Արտաշէս, ստի-
պուած եմ, դասի եմ գնալու:

ԱՐՏԱՃԵՍ, ՀԵՂԻՆԵ:

ԱՌ, խնդրեմ, օրիորդ:

ՀԵՂԻՆԵ, ՅԵՒՏ ԱՐՄԱՆԵՐԻ:

Բարով գնաք, բարով գաք... Եթէ պ. Լևոնին
տեսնէք, ինձանից շատ բարե արէք, խնդրեմ:

ԱՐՏԱՃԵՍ

Անշուշտ, օրիորդ, ես նրա զիւղով եմ անցնելու:

ՀԵՂԻՆԵ ողջանում է և գնում իր սեհում:

ՏԵՍԻԼ ԺԵ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐՏԱՃԵՍ

ԱՐՏԱՃԵՍ, ՀԵՂԻՆԵ:

Ճշմարիտ որ շատ համակրելի օրիորդ է... Բարեկամս
ի զուր չէ այնպէս հրապուրուել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Իրաւ... Ուրեմն պ. Լևոնը հաւանում է հեղինէիս:

ԱՐՏԱՃԵՍ

Այն, տիկին, շատ է հաւանում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Հեղինէս էլ յաճախ է մտաբերում նրան... Փոխա-
դարձ համակրանք...

ԱՐՏԱՃԵՍ

Խոկ ես համոզուած եմ, տիկին, որ բարեկամս մին-
չեւ անդամ սիրում է օրիորդին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդպէս... Տայ Աստուած, որ սիրեն միմեանց: Երկուսին էլ սրտանց երջանկութիւն եմ ցանկանում:
ԱՐՏԱՋԵՍ

Երբ երկու սիրտ իրար հասկանում են և գնահատում, երջանկութիւնն այնքան էլ հեռու չէ նրանցից...

ՄԱՐԳԱՐԻՏ, յուժոց հանելով

Այս, եթէ միայն այդ սրտերը անյաղթելի արգելքների չեն հանդիպում...

Աշխարհում է Տի հերո ծածէն յուշնուհը:

ՏԵՍԻԼ ԺԴ

ՆԻԱՆԻ, ԱՐԿԱԴԻ

ՄԱՐԳԱՐԻՏ

Ամուսինս...

ԱՐԿԱԴԻ, ժաման տրեց, առաջին, ոճուհ:

Գարձեալ այս զինուորականը... (Առաջ ժաման) ԱՌ, սի. Արամեան... Պատ ուրախ եմ... (Ակհման չեւու բնալիս) Նստեցէք, խնդրեմ: Ի՞նչպէս էք, ի՞նչպէս է ձեր առողջութիւնը:

ԱՐՏԱՋԵՍ, առաջ ժամանակառութեամբ:

Ջատ շնորհակալ եմ, պարոն, դժւք ինչպէս էք:

ԱՐԿԱԴԻ

Ես միշտ լաւ եմ, փառք Աստուծոյ: Եթէ բժիշկները իմ յոյսով մնային, քաղցած կը մեռնէին... Ջատ ուրախ եմ, շատ, ձեզ իմ տանը տեսնելով... Ձեր

հայրենասիրութեան և քաջութեան մասին շատ գովասանքներ եմ լսում:

ԱՐՏԱՋԵՍ

Թողնենք այդ, պարոն,

ԱՐԿԱԴԻ

Օ՛, ես շատ եմ սիրում քաջ և մանաւանդ հայրենասիր երիտասարդներին: Արդարեւ ես ինքս ձեզ պէս քաջագործութիւններ արած չեմ, բայց իմ հայրենասիրական... զգացմունքներս ուրիշներից պակաս չեն, հաւատացէք... Ձեռքիցս եկածը ես չեմ խնայիլ իմ պաշտելի հայրենիքիս համար...

ԱՐՏԱՋԵՍ

Օ՛, պարոն, ես այդ մասին չեմ կասկածում:

ԱՐԿԱԴԻ

Եւ ատելով ատում եմ այն մարդկանց, որոնք միայն իրանց համար են ապրում... Ուտում են, խըմում, զուարձանում, իսկ ժողովրդի բարօրութեան մասին բնաւ չեն էլ մտածում: Այդպիսիների համար երկրորդական բաներ են՝ ազգ, հայրենիք, մարդկութիւն... Կան նաև այնախիները, պարոն, որ ձեր առաջ ձեւանում են ամենաչերմ ազգասիր, ընտիր հայրենասիր, մարդասիր և էլ չգիտեմ թէ ինչասիր, միով բանիւ իբրև շատ և շատ բարձր գաղափարների տէր մարդիկ. բայց լաւ իմացած եղէք, պարոն, որ այդ բոլոր գեղեցիկ բառերը նրանք գործ են ածում որպէս զէնք՝ միայն միամիտներին շլացնելու համար: Մէկ կոպէկ շահի համար նրանք պատրաստ են տասն անգամ ծախել իրանց ազգն էլ, հայրենիքն էլ...

ԱԲՏԱՋԵՍ

Ճատ ճշմարիտ էք ասում, պարոն, բայց ի՞նչպէս զանազաններ արդարը խաբեբացից, քանի որ խաբեաների յատուկ սովորութիւնն է միշտ արդարի դիմակով երևալ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Եւ ամենավտանգաւոր մարդիկը հէնց դրանք են, որ իրանց արատները վարպետութեամբ ծածկում են առաքինութեան քողի տակ:

ԱՐԿԱԴԻ

Այս, աղնիւ ընկերս, դու տկար էիր, մոռացայ հարցնել առողջութեանդ մասին... Ներիր, խնդրում եմ. ի՞նչպէս ես այժմ, լաւ ես:

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂՋԵՒՇ:

Իմ մասին մի նեղանար, խնդրեմ, ես շատ լաւ եմ:

ԱՐԿԱԴԻ

Ճատ ուրախ եմ. ես շարունակ քեզ վրայ էի մտածում, սիրելիս: (Արտագոյն:) Պուտք ես շատ ուղիղ էք դատում, պարոն, Այս, մի փոքր գժուար է խաբեբաներին իսկոյն ճանաչել... (Ծոցք ժամացոցին նոյնէր, Մարդութեան:) Հիանալի եղանակ է, սիրելիս, կամենում ես մի փոքր մաքուր օդ ծձել. կառքը պատրաստ է:

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂՋԵՒՇ:

Ճնորհակալ եմ. ես այսօր դիտաւորութիւն չունիմ տանից դուրս գալու:

ԱՐԿԱԴԻ

Բայց առողջութիւնդ, սիրելիս, առողջութիւնդ... Ես շատ ցաւում եմ, որ դու բոլորովին արհամարհում

ես քո առողջութիւնը... Ըստիսի եղանակին քեզ հարկաւոր է բայցօթեաց զբոսանք:

ԱԲՏԱՋԵՍ, ՔԵ ՀԵՂՋԵԼ:

Ես ձեզ արդելք յինիմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞չ, ո՞չ, պ. Երտաշէս, նստեցէք, խնդրում եմ:

ԱՐԿԱԴԻ

Այն, պարոն, նստեցէք, նստեցէք, խնդրեմ... (Ինչ ոտեւ է հանդունած:) Տիկինը կարող է գնալ էլ, դալ էլ, իսկ մենք կարող ենք խօսել, դատել, վիճել, ի՞նչքան կամենանք:

ԱԲՏԱՋԵՍ

Ճատ շնորհակալ եմ, պարոն, յատուկ պարտաւորեցնում էք ինձ... (Հետագոյն:) Ձեր առանձին ուշադրութեամբ, բայց ներողութիւն եմ խնդրում, ժամանակ է:

ԱՐԿԱԴԻ, ԱԴԱՐԵԼԸ:

Ափսոսում եմ, շատ ափսոսում եմ, հաւատացէք ինձ... Ես գիտեմ որ դուք սաստիկ զբաղուած էք և բոլորովին ժամանակ շունիք ունալն ալցելութիւններով պարապելու, այնու ամենայնիւ, խնդրում եմ, երբ ազատ լինիք ձեր ծաներ գործերից, երբեմն երբեմն մեզ ես մտաբերէք... Իմ տան դռները միշտ բաց են, պարոն, աղնիւ մարդկանց համար, մանաւանդ... կնոջս բարեկամների համար:

Մարդութեան՝ այս հիջոցին սաստիկ յուղուած հանդունած ջուր է ածուած և իմուն:

ԱԲՏԱՋԵՍ, ԱՐԴԱՐԵԼԸ:

Չափից դուրս բարի էք... (Գառաւ է ուկայ Մարդութեան և Հեղջեան:) Մնաք բարեաւ, տիկին...

ՍԱՐԳԱՐԻՑ, ԱՇԽԱՏԵՐԻ ՅԵՎԵԼ ԲԱՆԱԾ:
Յոյս ունիմ, պ. Արտաշէս, որ դուք դարձեալ կ'այ-
ցելէք մեզ...

Թաղառաց է յեւաց և ուղեւուց է:

ԱՐԿԱԴԻ, առանց ուշուց շրջութակաց:
Այս, այս, ես ևս թնդրում եմ:

ԵՐՏԱՋԻՍ, հետուրեն:

Օ՛, ձեր սիրալիքը ընդունելութիւնը, պարոն, ես եր-
բէք չեմ ծուանալ... (Մարգարիտին) Մնաք բարեաւ...

Դառն է գնում:

ՏԵՍԻԼ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՑ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, երաք լառութեանց յերոյ, ճինչութեան Մարգարիտը ուշի-
գութեամբ նայում էր նըռն:

Ասա, խնդրեմ, ինչ է նշանակում այս բոլոր կա-
տակերգութիւնը:

ՄԱՐԳԱՐԻՑ, առաջ գալով:

Այդ հարցը ինձ է վերաբերում... ինձ:

ԱՐԿԱԴԻ

Այս, քեզ, քեզ. միթէ պարզել է հարկաւոր... Յան-
կարձ հիւանդանում ես, ամբողջ տունը տակնուվայ
է լինում, զործերս համարեա անկատար եմ թողնում
քեզ համար, փազում եմ տուն և ինչ եմ տեսնում.
Հիւանդս հանգիստ նստած՝ ամենասիրալիք ընդունե-
լութիւն է ցոյց տալիս մի բազգախնդիք զինուո-
րականի, որ ով իմանայ թէ ինչ է և ինչ մարդ է:

ՄԱՐԳԱՐԻՑ

Նա իմ մանկութեան բարեկամն է, ես արդէն ա-
սել եմ քեզ:

ԱՐԿԱԴԻ

Բարեկամ, բարեկամ... Երևի բարեկամից էլ մէկ բան
աւելի, որ հիւանդութիւնդ էլ մոռացել ես նրա համար:
ՄԱՐԳԱՐԻՑ

Դուք ինձ վիրաւորում էք, պարոն, բայց ի գուր.
Ես արդէն այստեղ էի հեղինէի հետ, երբ նա եկաւ:
ԱՐԿԱԴԻ

Եւ դու, տիկին, հարկաւոր համարեցիք ընդունել
նրան, լաւ իմանալով, որ այդ ինձ գուր չի դալ:
ՄԱՐԳԱՐԻՑ

Ի՞նչ էք կամենում ասել:

ԱՐԿԱԴԻ

Նոր ոչինչ այսօր բարեկամ, վաղը երկրպագու և
վերջիվերջոյ խաչտառակութիւն... Միշտ այդպէս է
լինում:

ՄԱՐԳԱՐԻՑ

Երկնքից չէք վախենում այդպիսի մեղադրանք բար-
ձելով ինձ վրաց... Դուք անպատճում էք ինձ, պարոն:
ԱՐԿԱԴԻ

Օ՛հ, առանց մեծ-մեծ խօսքերի, խնդրեմ... Ինձ խա-
բելը հեշտ չէ, ես շատ բան եմ տեսել իմ կեանքումս:
ՄԱՐԳԱՐԻՑ, հետու հետութեամբ:

Եւ շատ բան էլ փորձել էք ի հարկէ:

ԱՐԿԱԴԻ, բարձրած:

Այս և փորձել եմ, եթէ կամենում ես... Օ՛, ես ոչ
ոքի չեմ թոյց տալ, որ մէկ մազի չափ անդամ արատա-

ւորի իմ պատիւս... Այսդւհետեւ թող չհամարձակուի այն պարոնը իմ տուն մտնել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Դուք այնքան քաղաքավարի վարուեցաք նրա հետ, որ հազիւ թէ մեր դռան շէմքովն անգամ անցնի նա երբ և իցէ:

ԱՐԿԱԴԻ

Ճատ լաւ էլ արի, սիրտդ ցաւեց հա... (Բարեկայոց հան է գուշին) Գոնէ աւելի քաղաքավարի, քան թէ դու բարեկամներիս հետ... Համարեա վիրաւորուած գընացին նրանք այստեղից... (Յանիսը էանդ առանելով, եւ-դում է ճակարին) Ա՛լս... (Լառաւեն, յեղոյ ծեծողում է:) Հասկացայ, հասկացայ, այժմ հասկացայ... (Կանգնում է Մարդուրով առաջ և գլուխ շարժուած...) Դուք, տիկին, նրան սպասում էիք և սուտ հիւանդացաք, որ ինձ և իմ բարեկամներին շուտով հեռացնէք այստեղից... (Մարդուրով՝ յնուածքը ճայտելով, զարդարուած այսուած է Արքունին) Այն, այն, այն ևս կասկած չկայ... (Հետուալեամբ:) Օ՛, ինչ խորածանկութիւն... (Հետուալեան ծեծողում է:) Բայց այդպէս չէ, տիկին, ես ձեզ երկուսիդ միասին կը ոչընչացնեմ, մինչև դուք հնար կը գտնէք ինձ խայտառակելու:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բաւական է, պարոն, բաւական է... Ձեզ խայտառակողը ձեր վարմունքն է... Ձեր չափով մի չափէք ուրիշն:

ԱՐԿԱԴԻ, Բարեկայոց:

Ի՞նչպէս, ի՞նչպէս էք համարձակում հետս ազգպէս խօսել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Եցես վերջացաւ... Գնացէք, գնացէք, պարոն, բարեկամուհիս սպասում է ձեզ և այս գիշեր:

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ բարեկամուհի, ի՞նչ էք բարբանջում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Եցդ դուք լաւ գիտէք, պարոն, ի՞նչպէս և ես...

ԱՐԿԱԴԻ

Սուտ էք խօսում, սուտ, տիկին... Լուցէք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, պարոն, ոչ Բաւական է, ի՞նչքան լոեցի. այժմ ամբողջ աշխարհի առաջ պէտք է աղաղակեմ... Թոնդ ամենքն իմանան ձեր վարմունքը, թոնդ ամենքը լըսեն, թէ ինչ օրեր եմ քաշել ես ձեր ձեռքին, ի՞նչ քան արտասուք թափել այս պատերի մէջ...

ԱՐԿԱԴԻ

Դուք, խելագարուել էք, տիկին... Հեռացէք այստեղից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Խելագարուել եմ... (Ծիծողուած է:) Ո՛չ, պարոն, ոչ ես այժմ եմ միայն արթնանում... Կէս ժամ առաջ քիչ էր մոսում ամօթից մեռնէի ձեր սիրահարական սիրագործութիւններին ակամայ վկայ լինելով:

ԱՐԿԱԴԻ, ԷՇԹԵՆ ԳՐԱՎՈՒՅՑ:

Սուտ է, սուտ,.. Հեռացէք աչքիցս, ասում եմ, ապա թէ ոչ այս բոպէիս կը սպանեմ ձեզ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Սպանեցէք ու վերջացրէք, գոնէ մէկ անգամից կ'ազատուեմ ես այս տանջանքներից:

ԱՐԿԱԴԻ

Այդ արդէն չափից դուրս է, տիկին... (Զայրացած հնա և ժամանակ) Այս ամենը ես պարտական եմ այն անիծեալ զինուորականին... (Յանձնաւ յաբշուաւ և առաջաւ շանէանին, բոլոր ոյժով շանէանաւում է: Զանազան դաներից շրապով նէր են ճշուած Սէսին ու աղուաւուց:) Ես ձեզ խստիւ հրամագում եմ որ այսուհետեւ չհամարձակուէք ընդունել այն բաղդախնդիր զինուորականին... միենոյն է՝ նա ինձ հարցնի, թէ տիկնոջը:

Սէսին ու աղուաւուց շրապովում էն:

ՄԱՐԳԱՐԻՏ, շառէւու իրան և բոլորովէն գուազվուած էն:
Այն, պարոնի հրամանը կատարեցէք իսկութեամբ,
ես ևս հրամացում եմ... (Մէնէւու յեւու ունուուց) Հեռացէք... (Սէսին ու աղուաւուց ուրաք էն գուած: Լուսաւած: Ստորին գրտուած և արտօնուածից ինդուաւուէնվ): Ջատ
շնորհակալ եմ, պարոն... Այս էր իմ այսքան տարուայ
տանջանաց վարձատրութիւնը... Այսուհետեւ ես մի
անսարդան կին եմ ձեզ համար... Այս օրուանից ամենայն ինչ վերջացաւ մեր մէջ... Ահա... (Պարտացից հերթուած է աղուաւուց:) Առէք այն շղթան, որով ինձ կապել
կաշկանդել էիք այսքան տարիներ... (Մանէաւու յէւու ու Արէաւիքին:)
Ո՞հ, Աստուած ամենակարող...

Դուրս է գնուած իր աշնեաւուց: Արէաւին հնամ է աղուած:

ՎԵՐԱ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԹԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Միեւնոյն տեսարանը. պակասում է միայն պատկերակալը
իր նկարով:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԱՐԿԱԴԻ, ԱԲԻԼ

ԱՐԿԱԴԻ, հնա գուշով:

Ո՞չ, ոչ, պ. Աբէլ, խօսքս խօսք է, ես նրան գըլ-
խագիր չեմ տալ, մինչեւ որ այդ թուղթը չստորագրի:
ԱԲԻԼ, ո՞ւ ծալած լուղի յէւսին:

Ճեր կամքն է, տէր, միայն թէ...

ԱՐԿԱԴԻ

Այն, այն, ացգպէս... Տարէք այդ թուղթը և մի
կերպ աշխատեցէք որ ստորագրէ:

ԱԲԻԼ, գոյք շառավենից յէտու:

Մինչև օրս, Ճերդ վսեմութիւն, բոլոր Ճեր հրա-
մանները ես միշտ կատարել եմ սրբութեամբ, այժմս
էլ պատրաստ եմ նոյն սրբութեամբ կատարել և ներ-
կայ յանձնարարութիւնը, սակայն ես թող եմ տալիս
ինձ նկատել, որ եթէ կարողանացիք մի կերպ հաշ-
տուել տիկնոջ հետ, աւելի լաւ կը լինէք, ճշմարիտ:

ԱՐԿԱԴԻ

Անհնարին է, պ. Աբէլ, մեր մէջ հաշտութիւն չի կարող կացանալ, անունս ու պատիւս խայտառակեց նա... չը, թշուառական...

ԱԲԷԼ

Ի՞նչ արած, ձերդ վսեմութիւն, էլի դուք պէտք է ներողամիտ լինիք... Զի որ նա ձեր կինն է... Միթէ այս լաւ է, որ ահա երեք ամիս է ամբողջ քաղաքը ձեզ վրայ է խօսում:

Թուշլը բնուած է աշոնի վրայ:

ԱՐԿԱԴԻ

Թոնդ խօսեն, որքան կամենան,

ԱԲԷԼ

Թարձեալ ձեզ է վնաս, ձեր անուանն է վնաս, ձերդ վսեմութիւնն... (Աբէտքն նոդուած է և գլուխը չէտ-տէ հէջ առնուած:) Խնձանից ձեզ խրատ չի հասնիլ ի հարկէ, բաց ձեր բարին ցանկանալով, ինչպէս և միշտ, ես համարձակում եմ յայտնել իմ կարծիքը... Միայն չբարկանաք, ի սէր Աստուծոց:

ԱՐԿԱԴԻ

Ջարունակեցէք, շարունակեցէք, խնդրեմ:

Գէտ-տէ աշոնի հրաւերուած է ասուց:

ԱԲԷԼ, ասուցված:

Եյո, վսեմափայլ տէր... Խնչքան էլ կինը պակա սութիւն ունենայ, ինչքան էլ մեղաւոր լինի նա, դարձեալ ամուսնու ոչ թէ սուրբ պարտաւորութիւնն է միայն, այլև նրա ամենամեծ արժանաւորութիւնը... լուել և միշտ լուել այդ մասին: Հակառակ դէպ-քում, նա իր սեպհական պակասութիւնը կը խսուտո-

վանի, իր մեղապարտութիւնը, իր թուլութիւնը... (Աբէտքն գլուխը համաց-համաց շրժեւավ, Տէ՛ռուի ժողուած է: Լուսվեան:) Համարձակութեանս համար ներոզութիւն եմ խնդրում ձեր Վվսեմութիւնից, միայն ես աններելի չանցանք կը համարէի, եթէ իմ սրտիս խորհուրդը ծածկէի ձեղանլց... (Աբէտքն գլուխը չէտ-տէ հէջ, արհիւն յենուած է սեղանին: Աբէտքն լուսվեան:) Ձեր մեծահոգութեանն եմ դիմում, ձերդ վսեմութիւնն... Եթէ թողլ կը տաք, տիկնոջը ես շուտ կը համոզեմ, միայն թէ դուք համարձայնէիք հաշտուել հետը:

ԱՐԿԱԴԻ

Ի դուք կը լինի ձեր աշխատանքը, սիրելիս... (Որդի է հանգուած, Աբէտքն ամառապէս:) Եթէ ես ուզեմ էլ հետը հաշտուել, նա ինքը չի կամենալ. ես նրան լաւ եմ ճանաչում... Են կապը, որ մեզ կապում էր, խորտակուած է յափառեան. այժմ մնում է մեզ ձևակերպել մեր իրաւունքները և օրինական ընթացք տալ մեր ներկաց կացութեանը: (Աբէտքն վեցնեւավ լուսված է հարուստ:) Տարէք, տարէք այդ թուղթը .. Այնտեղ կը կարդաք, տարէք:

ԱԲԷԼ

Ես իմ պարտքս կատարեցի, ձերդ վսեմութիւնն, այժմ կ'անեմ, ինչ որ հրամայում էք:

Թուղթը բնուած է լեռլուսանէ հէջ:

ԱՐԿԱԴԻ

Աշխատեցէք շուտով վերագառնալ:

ԱԲԷԼ

Անպատճառ, ձերդ վսեմութիւնն:

Մէ չոնի չոյլ բնուած է:

ԱՐԿԱԴԻ

Սպասեցէք, պ. Աբէլ... Այս ծրարը կը յանձնէք իրան: (Տուշ է մի փոքրէն ծրար, որ հանում է ծոցից:) Տասը հազարի ստանալիք է բանկից իր անունով, թող բարով վայելէ... Խոկ եթէ այդքանն էլ չբաւականանայ, կարող էք դարձեալ խոստանալ, ինչքան կամենաք... Բաց ոչ, փողի մասին ոչ մի խօսք, նա կարող է վիրաւորուել... Միացն ացդ տուէք, այդ ծրարը, և շմուանաք հասկացնել նրան, որ մինչև յանցանքն իր վրայ չառնէ, գլխագիր չի ստանալ երբէք:

ԱԲԷԼ

Գիտեմ, ձերդ վսեմութիւն:

Ծրարը բնուած է ծոցը:

ԱՐԿԱԴԻ

Թէհ, շուտ պ. Աբէլ, ի սէր Աստուծոց, շուտ. ես կը սպասեմ անհամբեր: Պէտք է մտածենք և վկաների մասին:

ԱԲԷԼ

Կէս ժամից յետոյ այստեղ եմ, ձերդ վսեմութիւն: Թէրլապուհին յետին բնուած է: Երիբորտ արտրուածի աղասուարը բնուած առաջարկուած է Արքուին մի այցեղուած:

ԱՐԿԱԴԻ, Հրանտանուն:

Վարդուհի Վարվառեան... Միթէ... Նա ի՞նքը:

ՍՊԱՍԱԽՈՐ

Այն, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱԴԻ, Աբէլին:

Կացէք, կացէք, պ. Աբէլ: (Սուսանարին:) Գնա խընդրիր իսկոյն, ուրիշ ոչ ոքի չես ընդունիլ: (Սուսանարը բռնը է բնուած:) Պուք, պ. Աբէլ, այն կողմից գնացէք...

(Յոյ է ուշեն յան իրավե երարրտ իսրէն բռնաւ:) Թօնդ նա ձեզ չտեսնի:

Այցերանոց յետին շրաբով բնուած է եր սէնեալը:
ԱԲԷԼ, յետինից:

Հանդիստ եղէք: (Մէառած:) Օհօ, գնամ կնոջս թաղա խարար ասեմ:

Դուքս է գնուած յոյ առած դաշնից:

ՏԵՍԻԼ Բ

ԱՐԿԱԴԻ, շգեստը դոկուծ, յերոյ ՎԱՐԴՈՒՀԻ

ԱՐԿԱԴԻ, անուշանառ ջրէ շեն ու որովհեց յետին, իր սէնեալը բնուածում, հրանտանուն:

Սուրմը չմուանաք: (Արդուած է օդի մեջ և ները նու ուստի ու ճական է գուշին, յերոյ գուրած է և նախանձեալի բըստանից:) Գալիս է: (Ասաց գուրած և յետից բռնելով:) Ի՞նչպէս սիրտս բարախում է. կարծես տասն և եօթը տարեկան պատանի լինիմ... (Վարդուհին, որ բնուած է նախանձեալից:) Բարեւ, բարեւ ձեզ, պաշտելի իմ տիկին... Ամբողջ երեք ամիս է ձեզ տեսնելու բաղդ չեմ ունեցել:

ՎԱՐԴՈՒՀԻ, առաջ յետից:

Բարեւ ձեզ, բարեկամ... Այս մի քանի օր է միացն, որ ամարանոցից վերադարձել եմ...

ԱՐԿԱԴԻ

Համեցէք նստեցէք, խնդրեմ:

ՎԱՐԴՈՒՀԻ, նստելով:

Ջնորհակալ եմ... Ի՞նչպէս էք:

ԱՐԿԱԴԻ

Փառք Աստուծոց: Հրամանքով ինչպէս էք, տիկին: **ՎԱՐԴՈՒՅԻ**:
Ինչպէս տեսնում էք, լաւ եմ: (Ցայ առշու ուղարձ:)
Ինչո՞ւ էք կանգնած մնացել:

ԱՐԿԱԴԻ, առաջընթաց:
Այս ինչ բարեցածող դէպք է, տիկին, որ շնորհ
էք արել ինձ մօտ դալ:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ինչի՞ էք զարմանում, վանմափայլ պարոն, միթէ
ես ևս գործ չեմ կարող ունենալ:

ԱՐԿԱԴԻ

Ի հարկէ կարող էք, հրաշալի իմ տիկին, բայց այդ
ինչ տեսակ գործ է, որ դուք էք նեղութիւն կը-
րել. միթէ չէք կարող հրամայել, որպէսզի ես ինքս
ձեզ մօտ դայի:

ՎԱՐԴՈՒՅԻ

Հաւատացած եմ, որ ձեր վսեմութիւնը ինձ շատ
է յարգում, բայց գործը խիստ կարևոր է և շտա-
պողական, դրա համար էլ ինքս եկայ:

ԱՐԿԱԴԻ

Հրամայեցէք, տիկին, ինչ որ ձեռքիցս դայ, չեմ
լսնայի ձեզ համար:

ՎԱՐԴՈՒՅԻ

Օ՛, այդ ես լաւ զիտեմ: Մէկ օր ինձ հաւատա-
ցնում էիք, որ ձեր կեանքն էլ չէք լսնայի ինձ հա-
մար, բայց լեզուն շատ բան կ'ասի ի հարկէ:

ԱՐԿԱԴԻ

Սրտանց, սրտանց, տիկին, հաւատացնում եմ սըր-

տանց... Եթէ ինձ հրամայէք գնալ ջուրն ընկնել,
իսկոյն կ'երթամ ջուրը կ'ընկնեմ:
ՎԱՐԴՈՒՅԻ, Տէժաղութ:

Աւրեմն հրամայում եմ. իսկոյն գնացէք ջուրն ըն-
կէք:

ԱՐԿԱԴԻ

Գնամն:

ՎԱՐԴՈՒՅԻ

Գնացէք, այն, դնացէք:

ԱՐԿԱԴԻ

Տեսէք, տիկին, կ'երթամ. հաւատացնում եմ ձեզ,
կ'երթամ:

ՎԱՐԴՈՒՅԻ

Հրամայում եմ:

ԱՐԿԱԴԻ

Ո՛հ, քարասիրտ... Ահա, մնաք բարեաւ յաւիտեան: (Գնուած է ինչը առիտունէն ու ուղարձ. յեղոյ վերտառանուլվ) Բայց
ոչ, ես չեմ կարող ձեզ մենակ թողնել:

ՎԱՐԴՈՒՅԻ

Նստեցէք, պարոն, նստեցէք... Ես ձեզ քանի քա-
նի անգամ ասել եմ մի արտասանէք այնպիսի խօսք,
որ կատարել չէք կարող:

ԱՐԿԱԴԻ

Ահա, դարձեալ չէք հաւատում ինձ, տիկին:

ՎԱՐԴՈՒՅԻ

Հաւատում եմ, հաւատում, պարոն, զիցուք թէ
շատ էլ հաւատում եմ, բայց ջուրն ընկնելու պէտք
չկայ... Իմ լսնդիրքը ոչինչ զոհաբերութիւն չէ պա-
հանջում ձեզանից և նրա կատարելն էլ շատ հեշտ

Է... Միայն մի խօսք է հարկաւոր ձեր կողմից... (Ձեռ-
և պայուսակ: Բայց դուք ինչի՞ էք այդքան
հեռու նստել... Նստեցէք այստեղ... (Կառուսուելով:)
Մօտիկ, մօտիկ... Մի վախենաք, ես ձեզ կու չեմ տալ:

ԱՐԿԱԴԻԻ, ՀՕՊԵՆԼՈՅ:

Ախ, տիկին, խելքից հանում էք ինձ:

ՎԱՐԴՈՒԽԻ, ՀԵԿԱՆՆՈՅ:

Օ՛հ, օհ, ձերդ վսեմութիւն, մի փոքր հեռու, լորնդ-
րում եմ:

ԱՐԿԱԴԻԻ, ԸՐԺԱՆԻ ՀԱՄԵԼՈՅ:

Ահա, տիկին... Հրամայեցէք, ի՞նչ էք կամենում:
ՎԱՐԴՈՒԽԻ:

Ճատ չնշին բան, ճշմարիտ, գոնէ ձեզ համար չըն-
ջին է... Ձեր խօսքն ամեն տեղ անցնում է, այնքան
ծանօթ ու բարեկամ ունիք դուք... (Պայուսակ: Հռնե-
ցակ: Հեռագետ: Արտասահմանից մի քանի կտոր թա-
ւիշ են ուղարկել ինձ և ահա, ինչպէս հեռազրում
են Բաթումից, իմ արկղիկը պէտք է որ այս դիշեր
այստեղ լինի... (Տալ: Հեռագետ: Ինչպէս էլ լինի,
պէտք է վաղը իմ ձեռքը հասնի այդ, էլ մաքսա-
տանը երկար չպահեն:

ԱՐԿԱԴԻԻ, աչք անցնելոյ հեռագետ:

Իրաւ որ շատ չնշին բան է եղել... Ես էլ մտա-
ծում էի թէ ի՞նչ կարող է լինել:

ՎԱՐԴՈՒԽԻ:

Ներեցէք, անհանգիստ եմ անում ձեզ:

ԱՐԿԱԴԻԻ

Ախ, ի՞նչ էք ասում, տիկին, իմ բոլոր հանգստու-
թիւնս ձեր չարք տանի, այդ ի՞նչ բան է:

ՎԱՐԴՈՒԽԻ:

Դուք մարմնացած քաղաքավարութիւն էք, պա-
րոն:

ԱՐԿԱԴԻԻ

Օ՛, չափից դուրս բարի էք, տիկին:
ՎԱՐԴՈՒԽԻ:

Ես ճշմարիտն եմ ասում: (Վէր էնալով:) Ուրեմն
վաղը կը աստանամ:

ԱՐԿԱԴԻԻ, հոյնդէս:

Անպատճառ, անպատճառ, աննման իմ տիկին:

Հռու է դաշկու ելեւորուստ հնչանի հոմանին:

ՎԱՐԴՈՒԽԻ:

Ճատ շնորհակալ եմ, շատ, պարոն Արկադի. յատուկ
պարտաւորեցնում էք ինձ, Ուղիղն ասեմ, ես ձեզ
նեղութիւն չէի տալ այսպիսի մի չնշին բանի հա-
մար, բայց քոյս էգուց անպատճառ գնալու է հա-
գու. ես շատ գոհ կը լինէի, եթէ կարողանայի ան-
ձամբ իրան յանձնել իր մասը:

ԱՐԿԱԴԻԻ

Հանգիստ եղէք, տիկին, ես ինքս կը բերեմ ձեր
արկղիկը:

ՎԱՐԴՈՒԽԻ:

Ինչի՞ էք այդքան նեղանում, պարոն, կարող էք
ուղարկել... Թէկ ես շատ ուրախ կը լինէի ձեզ իմ
տանը տեսնել:

ԱՐԿԱԴԻԻ

Ի՞նչ նեղութիւն... Այս րոպէիս ինձ պէս երջանիկ
մարդ չկայ աշխարհում:

Կրին: Հռու է դաշկու հնչանի հոմանին:

ՎԱՐԴՈՒՀԻՒ

Միթէ:

ԱՐԿԱԴԻ

Հաւատացելէք, տիկին: (Սպասուառին, որ արծաթեայ հէծ սիրապեղով բերում է պարուիքոծ սուրճը և պատիմաս, ցոծը:) Ինչի ուշացրիք: (Վարդուհուն, Տիկին, սպասուառը սիրապեղը բնուած է սեղանի վրայ և բաժանեց հորդեւ բերում:) Թուզ կը տաք ինձ, տիկին, մի բաժակ սուրճ առաջարկել ձեզ:

ՎԱՐԴՈՒՀԻՒ, ՀԵՐԱԵԼՎ:

Զգիտեմ, ճշմարիտ, ինչ պատախանեմ... Դուք այնքան բարի էք դէպի ինձ, որ մերժել չեմ վատահանում:

ԱՐԿԱԴԻ

Յատուկ երջանկացնում էք ինձ, տիկին: (Սպասուառին:) Լաւ, գնա, ես ինքս կը պատրաստեմ: (Սպասուառը ուսում է գնուած: Վարդուհուն ուսում սոսաջորիւշով սուրճն սէղանի հօրուն) Համեցէք, խնդրում եմ:

ՎԱՐԴՈՒՀԻՒ, ՀԵՐԵԼՎ:

Ճնորհակալ եմ... Եյս մի բաժակն ինչ գեղեցիկ է... Երևի ձեր սովորական բաժակն է:

ԱՐԿԱԴԻ, ՊԱՐՊԱՐԵԼՎ ՍՈՐԵՁ:

Ո՞չ, տիկին, ես գրանով երբէք չեմ խմում:

ՎԱՐԴՈՒՀԻՒ

Երեւլի բաժակ... (Յանհարծուն) Ազգպէս չէ, պարոն, ազգպէս չէ, թողէք ես պատրաստեմ: (Որուի հանդուշով) Դուք նստեցէք, խնդրում:

ԱՐԿԱԴԻ

Ինչքան բարի էք, տիկին:

ԴԱՐԱՐԱՄ Է:

ՎԱՐԴՈՒՀԻՒ, ՀԵՐԵԼՎ:

Եւ միշտ ազգպէս էք պատրաստում ձեր սուրճը: ԱՐԿԱԴԻ

Ո՞չ, տիկին, սպասաւորն է հոգում:

ՎԱՐԴՈՒՀԻՒ, ՌԵԽԱՎ:

Սպասաւորը... Խեղճ մարդ, մեղքս գալիս էք, ճըշմարիտ... Ահա, ազգպէս խացէք տանտիկնոջ արժէքը... (Տալու արան գեղացի: Բ-ժ-է-լու) Համեցէք:

ԱՐԿԱԴԻ, ՀԵՐԵԼՎ ԲԵԺԱԿ:

Ո՞չ, տիկին... (Յանհարծուն է Վարդուհուն չեղան և բաժակ նըստածուն:) Յատուկ խնդրում եմ:

ՎԱՐԴՈՒՀԻՒ, ՀԵՐԵԼՎ:

Ճնորհակալ եմ... (Արևոտին իր համար վերցնում է Տիւա բաժակնեւ) Այս, ես ձեզ խորհուրդ եմ տալիս, գնացէք, ձեր կնոջ ձեռքը համբուրեցէք... Բաւական է ինչքան խոռվ մնացիք, խնդրեցէք, որ զայ ձեզ տիրութիւն անէ:

ԱՐԿԱԴԻ

Ո՞չ, ոչ, տիկին, մեր մէջ ամեն բան վերջացած է: ՎԱՐԴՈՒՀԻՒ

Կէն, բարեկամ, այդ տեսակ թիւրիմացութիւններ շատ է պատահում մարդ ու կնոջ մէջ... Մի քանի ժամանակից յետոց գարձեալ այնպէս կ'ապրէք միասին, ինչպէս ապրել էք... Հետևապէս՝ քանի վաղ, այնքան լաւ երկուսիդ համար էլ... Գնացէք, գնացէք սիրուառէք... Դուք ինձ խնդրէք, ես ձեզ վատ խորհուրդ չեմ տալիս:

ԱՐԿԱԴԻ

Այս, տիկին, ինչ էք հրամալում, ես հէնց այս
բոպէիս սպասում եմ նրա խոստովանութեանը:

ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչ խոստովանութիւն:

ԱՐԿԱԴԻ

Որ նա է պատճառը մեր բաժանման և որ բոլոր
յանցանքը նա իր վրայ է առնում:

ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչպէս... Զի՞ որ օրէնքով այդ գործում սեպհական
խոստովանութիւնը ոչինչ նշանակութիւն չունի:

ԱՐԿԱԴԻ

Եցի, բայց երբ վկաները հաստատում են, հարցը
փոխվում է:

ՎԱՐԴՈՒՀԻ

Եցի ես բոլորովին չեմ հասկանում... Եթէ վկաներ
ևս կան, էլ ինչ հարկաւոր է մեղապարտի յանձնա-
ռութիւնը:

ԱՐԿԱԴԻ

Բանն էլ այն է, տիկին, որ այս գործում վկայ
գտնելն անհնարին է, եթէ ինքը յանցանք ընդու-
նողը յօժար չէ... Օ՛, ես այս խնդիրը լիովին ու-
սումնասիրել եմ... Այս միշտ այսպէս էլ կատարվում
է ամեն ուրեք:

ՎԱՐԴՈՒՀԻ

Ուրեմն կատակ չէ այդ ամենը, ինչպէս երեսում է:
ԱՐԿԱԴԻ

Ամուսինները մէկ որ բաժանուեն, էլ կատակը նրն է:

ՏԵՍԻԼ Դ.

ՆԲԱՆՔ, ՍՊԱՍԱԽՈՐ

ԱՐԿԱԴԻ, ուենելով սպասութիւն, որ նի այցեպո՞ս չէտքի՞ն՝ Վար-
դուհուց ծածուէ նշո՞ն է անուած:

Ի՞նչ կայ: (Դէմ է վաղում) Ես քեզ ասացի, որ նէ
ոքի ըընդունես... (Վարդուհով այցեպո՞ս, մէկուի:) Էլիզ...
Մասմէ է շուտուած:

ՍՊԱՍԱԽՈՐ

Ճտապեցէք, ձերդ վսեմութիւն, մեծ աստիճանաւոր
է, սպասում է ձեզ ներքեւ նախասենեակում:

ԱՐԿԱԴԻ, սպասութիւն, ցոծք:

Անիծեալ: (Վարդուհու մէտքի Վարդուհին) Այս, տի-
կին, յատուկ ներողութիւն եմ խնդրում, մի րոպէ
թողլ տուէք ինձ... Պաշտօնական ամենահարկաւոր
գործի են եկել:

ՎԱՐԴՈՒՀԻ

Խնդրեմ, ձերդ վսեմութիւն, ինձ համար մի նե-
ղանաք:

ԱՐԿԱԴԻ

Անչափ բարի էք, տիկին:

Դուքս է վաղում, սպասութիւն հէտեւում է նշո՞ն:

SBUHL

ՎԱՐԴՈՒԽԻ, ՏԵԿԱՆ. Քաջը շուրջելենից յետոյ աջ յուղամասը ճակատին պահեղավ:

Վարդուհի, զգոց... (Յանձնում ուղիւ և էնդում, սա-
պեսից շրջութեալ հայում հայելու հեջ, գլխարկը ծառաւ և իրին
նախաւահ: Յեպս լենու բանի բանից, ուղիկ վեր և լաւաւ,
վառաւ և քեզի պապուհանը և զիշտուելով դուրս նայում:) Ո՞վ
էր... Ափսոս, չտեսայ:

SBUHL b

ՎԱՐԴՈՒԽԻ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱՆԻՒԹԻ, ՎԵՐՏՈՒՆՆԱԽԱՂ, ՏԵՇԱՐԻ:

Ուժի, ազատուեցայ... (Վ. ՊՐԵԴԻԿԱՆ) Յատուկ ներողութիւն եմ խնդրում, տիկին... Հազիւ ազատուեցայ. պաշտօնատէր մարդը ինքն իրան չէ պատկանում, ինչ արած:

ՎԱՐԴՈՒԽ

Հասկանալի է... Միայն շատ եմ ցաւում, որ ձեր
թանկագին ժամանակը խեցի և արգելք եղաչ ձեր
գործերին... (Վեր էլեառավ) Մնաք բարեւ:

ԱՐԿԱԴԻ

Ես այժմ բոլորովին ազատ եմ, հաւատացէք... Մնա-

յէք սի փոքր ես, խնդրում եմ... Մի լսէք ինձանից
այդպէս շուտ այս երջանկութիւնը... Աղաչում եմ ձեզ,
տիկին:

ՎԱՐԴՈՒՅՆ

Բայց ժամանակ է, պարոն:

ԱՐԿԱՐԴԻ

Գուցէ կը բարեհաճէք, տիկին, պարտէզը տեսնել...
չագուագիւտ Ծաղիկներ կան:

ՎԵՐԴՈՒՅԻՒ

Քատ շնորհակալ եմ, պարոն, մի ուրիշ անգամ:
 (Հայելու հայելով:) Այս, այս ինչպէս է ծռուել զլխարկս:
 (Վերջներու գլխորութեանը:) Այս ներէք ինձ մի փոքր ուղղեմ:
ԱԾԿՐԴԻ

Խոնդրեմ, տիկին, համարեցէք թէ ձեր տանն էք:

ՎԱՐԴՈՒՅԻ

Բայց դուք այս կողմն չնայէք, խնդրեմ: (Եթ ԱՌ
գնդառաշնչեղն ամբողջուած է. յանձնի երար ու հետուշի ճ-
շճը լուսված էն ռասերի վրայ) Այս, ներողութիւն եմ
խնդրում, այս ինչ անքաղաքափարութիւն է իմ
կողմից:

ԱՐԿԱՐԴԻ

Պարզասպանութիւնն ասացէք, տիկին։ (Վարդապետական հայութ և ժամանակակից սպառանութ է հապալ) Ի՞նչ կամենաք արէք, այլևս չեմ կարող դիմանալ...

Ա պատ, և ըստինուած և սրբազնութեան համընդունուած և Տաղէքը:

ՎԱՐԴՈՒՅԻ

Պարոն, պարոն, ինչ էք անում, ինչ էք անում...
(Մշղեց բանելով իտ և սուխում:) Պուր ձեզ մոռանում
էք...

ԱՐԿԱԴԻ, շարունակելով համբաւքը և մասէրը և ուսերը:
Օ՛, իմ թագուհի, իմ սրտիս աստուածուհի...

ՎԱՐԴՈՒՅԻ

ԱՇԽ, բաւական է, խնդրեմ...

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ, ոչ, էլ ձեռք չեմ վերցնի ես ձեզանից... Բա-
ւական է ինչքան տանջեցիք ինձ... Այսուհետեւ գուք
իմս էք, ես ձերը...

Գլուխ համբաւքը է:

ՎԱՐԴՈՒՅԻ

ԱՇԽ... (Իբր լէ աշխատում է աղապատէլ) Թողէք, թո-
ղէք... Օգնութիւն կը կանչեմ... Ա... ա... ախ...

Սուս աշխատուելով յեր է շնորհած Արքադի լևե վրայ:

ԱՐԿԱԴԻ

Իմ հրեշտակ, իմ հոգիս... (Համբաւքը է) Այսուհե-
տեւ պէտք է միասին ապրենք, միասին մեռնենք,
ՎԱՐԴՈՒՅԻ, իբր առ աշք գուլվ:

ԱՇԽ, թողէք, թողէք... (Աղապատէլ է Արքադի գրեթե)՝
զատ շնորհակալ եմ, պարոն... Այս անպատութիւնը
ես երբէք չէի սպասի ձեզանից... (Մասէրը հաւատէլով)
Լաւ դաս տուիք գուք ինձ... Ազդպէս է ուրեմն...
(Սուս շաց լինէլով) Մի օրինաւոր կին իրաւունք չու-
նի մի Տանօթ մարդու մօտ գործի գնալ... (Պլենուի
ժամանակը է և ինչոք լացով) Օ՛հ, ես յիմարս...

Ընդուած է ալսուի վրայ և հետեւով սոս շաց լինուած:

ԱՐԿԱԴԻ, նորեւով հօրը:

Հանգստացէք, տիկին, աղազում եմ, հանգստա-
ցէք... Իմ գիտաւորութիւններս մաքուր են... Ես
կամենում եմ կեանքում մի անպատիւ քայլ անզամ չեմ արած...
Երդգում եմ, որ պարզ սրտով եմ խօսում... Իմ
ապահարզանի գործը առաջ է գնում իր կարգով,
շուտով կը վերջանայ... Այսօր է թէ վաղը ես կըստա-
նամ իմ աղատութեան վկացագիրը...

Ես կ'ամուսնամ ձեզ հետ, վկայ է երկինք... Միայն
խոստացէք իմս լինել:

ՎԱՐԴՈՒՅԻ, աշէրը սրբում է և զնոնց հայեցածով նոյուած

Աշխատէլուն: Երէաք շուռլիւն:

Ամուսնանալ...

ԱՐԿԱԴԻ

Ացո, օրինաւոր կերպով ամուսնանալ:

ՎԱՐԴՈՒՅԻ, որէից բորբոքչելով:

Կրեխայ եմ ինչ է... Դեռ մէկից չաղատուած՝ միւ-
սի վրայ ամուսնանալ էք կամենում:

Շարունակում է որէիցը:

ԱՐԿԱԴԻ

Լսեցէք, տիկին, աղազում եմ, լսեցէք... Ես ձեզ
չեմ խաբում, ի գուր էք այդպէս զարմանում... Ես
իմ կեանքումս մի անպատիւ քայլ անզամ չեմ արած...
Երդգում եմ, որ պարզ սրտով եմ խօսում... Իմ
ապահարզանի գործը առաջ է գնում իր կարգով,
շուտով կը վերջանայ... Այսօր է թէ վաղը ես կըստա-
նամ իմ աղատութեան վկացագիրը...

Զափ իրովներ իսրէի դանից մրնում է էլեւը, առաջ ծած-
կուած, և լուսնավում ծառուերի և ծառիների յերեւած:

ՃԵՄԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԷԼԻԶ, Լահանուած:

ԱՐԿԱԴԻ, շարունակում:

Մտադիր էի թուղթը ձեռքիս գալ ձեր ոտքերն
լինել... Ես աղատ, դուք աղատ, մի երկու շաբաթ

չի տեիլ, ես կը տանեմ ձեզ եկեղեցի և այնտեղ, Աստուծոյ տաճարում, սուրբ սեղանի առաջ ես կը խոստանամ ձեզ իմ սիրտն էլ, իմ կեանքս էլ:

Հայութուամ է նրա չեռաց: Եւեւը ապրափեւէ բրութեան հեջ է:
ՎԱՐԴՈՒԽԻՇԻ, վեր հեռալով:

Այդ մասին մենք կը խօսենք, երբ ձեր ազատութիւնը ձեռք կը բերէք:

ԱՐԿԱԴԻ, այսպէս:

Մի համբոցը, միայն մի համբոցը, տիկին, որպէս զրաւական մեր ամուսնութեան...

ՎԱՐԴՈՒԽԻՇԻ

Ոչ, ոչ, պարոն, ես իմ պատիւս ոանակոխ չեմ անիլ... (Տալու չեռաց:) Մնաք բարեաւ... Մոռացէք բորբ և խելօք կացէք:

ԱՐԿԱԴԻ, Վարդուհու չեռաց բանած:

Խղճացէք ինձ, տիկին... Այրգում եմ...

ՎԱՐԴՈՒԽԻՇԻ

Միթէ... (Բաժանուամ ջուր է ածուա, հաշեւ իսրաւանուալ աղեւ է ծիծուալ) Համեցէք, վսեմափայլ տէր: (Ասացրամ է բաժանուալ) Ախ, չէք կամենում... (Բաժանուալ դաշուլ սեւանի վրայ) Ուրեմն այսպէս... (Հովհանուամ է Արէտիկն, որ շաւա և անշարժ նայուամ է նրան, յեպոյ որտէլ բարձրացնելով) Ինչ զուարձալի էք այդպէս: (Հովհանուալ դաշուլ Արէտիկ չեռաց:) Ահա, թողնում եմ ցիշատակ ձեր բորբոքուած սիրտը հովացնելու... Յոյս ունիմ, որ արկղիկս վաղը կըստանամ...

Խորը ողջոյն [Révérence.] է առաջիւ և քրջուալ բուրս գնուամ:

ՏԵՍԻԼ Հ.

ԱՐԿԱԴԻ, ԷԼԻԶ, անլեռամ լապէուած:

ԱՐԿԱԴԻ, մի ժանի վայրէւան լուս և անշարժ հայլուց յեպոյ: Օ՛, կանացք... (Բարիացն մաս է տալիս:) Ուրեմն ես մարդ չեմ լինիլ, եթէ քեզ չաղթեմ: (Հովհանուալ չեռաց է սեղանի վրայ) Եւեւը, որ դուք ինչ առաջ էր եւեւ, հետօրեն ծեծուաւ է:) Ալիս...

Ջեւաց-մակարին, հաւամ է առացած:

ԷԼԻԶ, բացականչելով:

Ահա... չէիր սպասում... Ասա, ասա, որ ոչ ոք չկար այստեղ, ասա... Քեզ համար սուտն ինչ նշանակութիւն ունի... (Վ.էրանելով Վարդուհու հովհանուս) Այս ինչ է, այս. այս էլ նրանը չէ... (Կոպրուամ է հովհանուս և դէմ ածուա, յեպոյ յարշտուելով սուրճի սեղանի վրայ, վերջուամ է Վարդուհու բաժանուալ) Այս բաժակին էլ նրա ձեռքին չէր... (Շորենելով) Ահա քեզ...

ԱՐԿԱԴԻ

Էլիզ, Էլիզ, ուշքի արի, աղազում եմ, ամօթ է, ձառաները կարող են տեսնել:

Կոպրուամ է հակառակնեալի բանած:

ԷԼԻԶ, ուշքով էր գլուխ չուզ:

Ահա, ամօթը... Ես իմ ամօթը վաղ թաղեցի:

Դիս է չեռամ:

ԱՐԿԱԴԻ

Ի սէր Աստուծոյ, դադարիր... Ամուսինդ գալու է... Նա այս բոպէիս կը գայ:

ԷԼԻԶ

Թող գայ... Ես էլ ոչ ոքից չեմ վախենում... Թող գայ տեսնի՞ որպիսի կին եմ եղել ես նրա համար... թող մաս-մաս անի ինձ... թող երեսիս մուր քսէ և մազերից բռնած փողոցէ փողոց ման ածէ ինձ. ես արժանի եմ...

ԱՐԿԱԴԻ

Այս, Աստուած...

ԷԼԻԶ

Այդ էր, այդ էր քո պաշտօնական հարկաւոր գործը. այդպիս էիր միշտ խարում ինձ: Հէնց այս րոպէիս նախասենեակում... (Ներկայացնել ինչպէս Արքուն էաւ նոյն նախասեաւում) «Այս, ելիկ, հոգիս, ներիր, սե-նեալիներս պաշտօնեաներով լիքն է, սպասում եմ նոյն իսկ նահանգապատին»... Եւ սրա հետ՝ տաք-տաք համբոցներ... (Գլուխ շարժուծնուն է ինչպէս Արքուն նոյն համբոցնուն) Ո՞հ, Յուդայ... (Թաշտուած արթուր է երեսը) Եւ զու կարծում էիր, որ ես զիտեմ թէ ով կար այստեղ... (Հետուքէն ծիծառում է,) Ո՞հ, ես վաղուց է որ քեզ չեմ հաւատում... Ինձ փաստ էր հարկաւոր, փաստ, և ահա այս անզամ բռնուեցար վերջապէս... Խօսիր, խօսիր, պարոն... Ո՞ւր են քո երդումները, քո Աստուածը, քո երկին-քը... Ո՞հ, ինչ Տաղրալի ես զու այժմ... Իրաւ խըդ-ճում եմ քեզ...

Երեսը ծիծառում է:

ԱՐԿԱԴԻ, Տօղեալով

Հանդստացիր, ելիկ, աղաջում եմ...

ԷԼԻԶ

Հեռու, հեռու... Դու ոչ Աստուած ունիս, ոչ հո-գի... Այսուհետեւ չամարձակուես ինձ դիպչել... մեր մէջ ամենայն բան վերջացաւ... Գնա, գնա, այժմ քո գեղեցիկ Վարդովյու առաջ չոքիր, նրա ոտի հո-ղը դարձիր... գնա հարսանիքիդ պատրաստութիւն-ները տես... (Հուշեւ հուշ հարացնալով ուհեւ լսոց:) Կեանքս, բարի անունս, սպատիւս ես քեզ համար զոհեցի, իսկ դու այզպիս գնահատեցիր... (Ձեռակ ուսուառութիւն հանելով) Ահա, առ քո պարտէզի բանա-լին... Մնան բարեաւ յաւիտեան... Ես իմ սպատիւթը կրեցի...

Թաշտուած արթուր լսում է գնում զան հունի երերու-իութեւուց: Արքուն հուն է տարացուն:

ՏԵՍԻԼ Հ

ԱՐԿԱԴԻ, ՀԵՊԱ ՍՊԱՍԱԽՈՐ

ԱՐԿԱԴԻ, ՀԵՊԱ, ԵՐԱՐ ՀԱՐԱԲԵՆԻԿ յեպոյ:
Ի՞նչ են կատաղել վրաս... (Բարեցած մոն է գուեն, յե-պոյ վերնեալ բանելին): Դին ձգեց... Ջատ հարկաւոր է. դու մինիս, ուրիշը կը լինի... (Հուշեցնում է ունեցուից: Լո-ւութեան: Նորից հուշեցնում է. յերոյ բարեցած): Է՞ց... (Լուշով որ նախասեաւուի դուռը շարարում են, գնում է բայ անում: Ներ հրանու սպասուացին): Հաւաքիր այդ ամենը... (Լուս է գուեն, միշտեւ սպասուացին է հրամանը:) Անպի-տան... Ես քեզ հրամացեցի ոչ ոքի ընդունել... Ի՞նչ պիս համարձակուեցար ասել որ ես տանն եմ:

ՍՊԱԾԱԾԻՈԲ

Ես մեղաւոր չեմ, ձերդ վսեմութիւն, տիկին Վարդուհու կառապանն ասել էր արդէն:

ԱՐԿԱԴԻ, առբափած:

Ի՞նչպէս... Ուրեմն նա էլ կ'իմանայ սրա գալը:
ՍՊԱԾԱԾԻՈԲ

Երևի...

ԱՐԿԱԴԻ, բարիցած:

Գժճիսք... (Մաս է գուշակ:) Ջնւառի, շնուառի և կորիր աչքիցս:

ՍՊԱԾԱԾԻՈԲ

Իսկոյն, ձերդ վսեմութիւն:
Արքադիս առուած է, բարուցաց սեղանին խիռու և յեղոյ գյուղեց
երևու չեւսկի Տէջ առանելով արհանձներով յենվաւ և սեղանին.
Իու սպասուացը հաւաքելով հովհարի իրարնեցը, զարման է ար-
դայայրուած, յեղոյ վերցնելով էլեւեւ ռուը, հոռ է առշուած և
ծոցուած պահուած: Լուսութեած:

ԱՐԿԱԴԻ, վէր լաշելով ուշուից:

Ճաշին տուն չեմ գալ... Խոհարարին կ'ասես որ
լաւ ընթրիք պատրաստէ... Սեղանը պարտէզումը կը
դնես... Տես որ ամեն բան կարգին լինի:

ՍՊԱԾԱԾԻՈԲ

Քանի հոգու համար, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱԴԻ

Քանի էլ կ'ուզես... չինդ, տասը, տասնուհինդ...
Պէտք է բարեկամներիս հրաւիրեմ... Մի գորը զուար-
ճանամ... Օամպայնը հիմիկուց սառուցի մէջ կը դնես:

ՍՊԱԾԱԾԻՈԲ

Կանաչը էլ կը լինին:

ԱՐԿԱԴԻ

Կանաչը, երգչուհիք, երաժշտութիւն... ինչ կամե-
նաս, միայն թէ այս դժուսքից ազատուեմ...

ՍՊԱԾԱԾԻՈԲ, սէրտէռը չէուտին:

Այո, ձերդ վսեմութիւն, երկու կնոջ հետ միաժա-
մանակ գործ բռնելը շատ վտանգաւոր է:

ԱՐԿԱԴԻ

Կորիր, անպիտան... (Մաս է գուշակ:) Սպասուած էլու-իւ
շոքէւր բարեմ է գուշակ:) Աստուած իմ, այս ինչ չար
աստղի տակ եմ ծնուել ես:

ՏԵՍԻԼ Թ

ԱՐԿԱԴԻ, ԱԲԵԼ

ԱՐԿԱԴԻ

Ա... Բերիք ստորագրութիւնը:

ԱԲԵԼ, շուտուած:

Այո, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱԴԻ

Բերէք, բերէք, պէտք է վերջ դնել այս կացու-
թեանը:

ԱԲԵԼ, անվարուած հասուած է լեզվարուածից մի ծալսծ լուսը,

որ արդարաւոս բռնուուն անոն է համար լուսին:

Ահա, ձերդ վսեմութիւն... Միայն այս այն չէ:

Տաշէն է լուսը:

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչպէս թէ այն չէ... (Բանալու լուսը) Այս ինչ
է... Այս ինչ էք արել:

ԱԲԵԼ

Վասո ոչինչ, ձերդ վսեմութիւն... (Մէհաբեկ Արէպէն առաջ և գծուն մէտքութեամբ հարրում է լուսը) Իմ կարծիքով այդ աւելի մեծ ապացոյց է, բոլորն էլ իր ձեռքով է գրած... (Թէրլապահից հասում է ճշու լուսը և փոքրին է կամեալը) Իսկ այս, ինչքան էլ աշխատեցի, նա չկամեցաւ ստորագրել, ոչ էլ այս ստանալիքն ընդունեց... Ինձ ոչինչ ողորմութիւն հարկաւոր չէ, ասաց, և սաստիկ բարկացաւ...

Ծրուը և լուսը դնում է սեղանի վրայ:

ԱՐԿԱՆԴԻ, չեւը խիւնը լուսին:

Ճը, խորամանկ օձ... Այս թուղթը մէկ կոպէկ չարժէ:

ԱԲԵԼ

Ինչի՞ ձերդ վսեմութիւն, չի՞ որ յանցանքը նա իր վրայ է վերցնում:

ԱՐԿԱՆԴԻ, ՏԵՇԱԿԻ:

Դժոխւքը կլանէ քեզ... (Աբէլին:) Զարմանում եմ, պ. Աբէլ, ձեզ վրայ... Այսքան տարի է ապրում է.ք. աշխարհում և մինչև օրս ամենատարրական բաներն իսպան չգիտէք... Ո՞րտեղ է այստեղ յանցանքի խոստվանքութիւնը, ձեզ եմ հարցնում, այն յանցանքի, որ օրէնքը պահանջում է, այսինքն ամուսնական անհաւատարմութիւնն... Ի՞նչ է գրում այստեղ նա, ինչ... (Կարբաշը) «Թողեցի ամուսնուս իմ յօժար կամքով, որովհետեւ չկարողացայ նրա հետ հաշտ ապրել»... Ի՞նչ մեծ գիւտ... Ի՞նչ իրաւունք կարող եմ ստանալ սրանով, ինչ... թէև հարիւր վկայ անգամ ստորագրէին այս թուղթը...

Բարձրացած ճշում է լուսը և դէն չէում:

ԱԲԵԼ

Այն միայն Աստուծուն է յայտնի, ձերդ վսեմութիւն, թէ ինչքան եմ աշխատել, որ կարողացել եմ գոնչ այդ թուղթն առնել, այն էլ միայն այն պայմանով, որ դուք կը բարեհաճէք իր գլխագիրն ուղարկել շուտով:

ԱՐԿԱՆԴԻ

Ես նրան զլսագիր կը ցոց տամ, թող սպասի գեռ... Դառն արտասուբով կը լացացնեմ ես նրան, քանի կենդանի է... Բարձրագոյն ատեանը կը դիմեմ, որ քաշ տալով բերեն նրան այստեղ... Հը, թշուառական... (Աբէլը համեստ է սեղանի վրայ դրած լուսը վերցնելու) Թողէք, թողէք այդ թուղթը... Ես ինքս կը տանեմ, ես ինքս կ'երթամ այն օձի մօտ, տեսնեմ թէ ինչպէս չէ ստորագրում... Դուք գնացէք ոստիկանին ուղարկեցէք այստեղ իսկոցն, մնացած ես զիտեմ... (Բարձրացած:) Այս ինչ անիծեալ օր լուսացաւ ինձ համար...

Կարպաղոծ ճան է դաշնա սենեակում:

ԱԲԵԼ, ԱԵՎԼԱՊԱՀԸ ՅԵՇԻՆ, ՏԵՇԱԿԻ, ՍՈՒՅ:

ՕՇ...

Սարսափէց բանում գնում է որի ոճեղների վրայ, մանադարձէց յեղ է նայում Աբէլին իռջը և դուրս դնում նախառնեալուից:

ՎԵՐԱ ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՅՈՐԴ

Մարգարտի եւ Հեղինէի կացարանում հասարակ սենեակ՝ ճաշակով զարդարած։ Սենեակը երկու զուռն ունի՝ մէկը ձախ կողմում, իսկ միւսը բեմի խորքումը, որ եւ բացվում է դէպի նախասենեակ։ Սեղան, գրասեղան, գրքերի պահարան, պատկերներ, արձամներ, գրքեր եւ նկարչութեան պարագաներ։ Երկրորդ արարուածի այն նկարը, որ դրած էր պատկերակալի վրայ, կախուած է պատից։ Խորքումը կայ եւ մի գեղեցիկ մասան, որի վերին բաց դարակի վրայ դասաւորած են զանազան անօթներ։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԵ

ՄԱՐԳԱՐԻՏ; աղ էրջուած նէտքութեամբ և պորտուած եր պատիւթեամբ և պատիւթեամբ։
Ապա, Հեղինէս, մէկ այս կողմը նայիր։
ՀԵՂԻՆԵ, որ վարժեցը բացուելեն, զան էրջուած գրուած եր պատիւթեամբ և առջնուած է։
Հիանալի է... Ես ի զուր չէի ասում, Մարգարիտ, որ դու մեծ տաղանդ ունիս... Օ՛, հրաշալի տեսարան...

ՄԱՐԳԱՐԻՏ

Հորիզոնը յաջողուած է։

ՀԵՂԻՆԵ

Ճատ, շատ, անգինուիմ Մարգարիտ։
ՄԱՐԳԱՐԻՏ, հեռուեց պատելով իր աւարը։

Եցի, ես գոհ եմ...

ՀԵՂԻՆԵ

Գիտես, Մարգարիտ, այս քո նկարը շատ նման է մեր գրութեանը... Հորիզոնից այս կողմը ամեն ինչ մութ ու խաւարով պատած, իսկ այն կողմը, հեռուն, երկինքն արեկ մօտալուտ ծագումն է աւետում... Այդ կարծես այն յոյսն է, որով ապրում ենք մենք։

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞վ գիտէ, Հեղինէ, կարելի է, ճշմարիտ, մեր արեն էլ ծագէ մի օր... Յոյսը լաւ բան է և շատ անգամ աւելի քաղցր, քան թէ նրան իրագործուած տեսնելը։

ՀԵՂԻՆԵ, պատելով աւարը։

Ախ, ախ, ինչ սքանչելի տեսարան է... Ի՞նչպէս էիր համբերում, զարմանում եմ, որ շարունակ այս արհեստով չէիր պարապում... Երջանիկ ես, ճշմարիտ, որ այսպէս գեղեցիկ վրձին ունիս։

ՄԱՐԳԱՐԻՏ, բառութեամբ։

Երջանիշկ... Ախ, իմ սիրունիկս, եթէ միայն այդ լինէր երջանկութիւնը... Ի՞նչ երջանիկ... Ամենքից արհամարհուած, ասա, ամենքի աչքից ընկած... Ի՞նչ եմ ես հիմա իսկապէս. մի թշուառ կին, որ հասարակաց կարծիքի առաջ կորցրել է իր անունը, իր պատիւը...

ՀԵՂԻՆԵ

Պ՞ղ կը համարձակուի քո պատուի վրայ մի ստուեր
անգամ ձգել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ամենքը, ամենքը, թանկագին իմ Հեղինէ, բացի
գեղանից և մի քանի բարեկամներից, ամենք... Ա-
մուսնաթող կնոջ վերադիրը մեր հասարակութեան
մէջ միայն ամօթն ու անպատութիւնն է... Վրաս
այնպէս են նայում, կարծես մի մահապարտ լինիմ.
համարեան ոչ ոք չի էլ ուզում հետո խօսել... Եւ ին-
չի, ինչ եմ արել, ինչ յանցանք եմ գործել... Ես
թողել եմ ամուսնուս, որի հետ ապրելն ինձ անտա-
նելի էր... Նա ինքը շատ ուրախ է, որ ազատու-
ցաւ ինձանից. Նա երջանիկ ապրում է իր համար...
Նա հասարակութեան կողմից վայելում է յարգանք,
պատիւ, մեծարանք... Նրա առաջ բաց են ամենքի
դուները... Խսկ ես՝ քանի որ կենդանի եմ, քանի
շունչս բերանում է, պէտք է տանջուեմ, շարունակ
տանջուեմ, ամենքից արհամարհուած... Ա՛խ, թող-
նենք, խնդրեմ... Աւելի յաւ է քո մասին խօսենք:
ՀԵՂԻՆԵ

Խօսենք, Մարգարիտ... Ինքս վաղուց է պատրաստ-
վում եմ սիրու բանալ, խոստովանուել քո առաջ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Պատմիր, պատմիր, հոգեակս:

ՀԵՂԻՆԵ

Ես... ես սիրում եմ, Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ, յուժոց հանելով

Սիրում ես...

ՀԵՂԻՆԵ

Այն, և սաստիկ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ ես գիտեմ, Հեղինէ: Վաղուց է որ ես այդ
նկատում եմ:

ՀԵՂԻՆԵ

Դու գիտես, դու նկատում ես, և ի՞նչպէս...
ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՛, հանգիստ եղիր, ինքն ըստ ինքեան երևում է:
ՀԵՂԻՆԵ

Ա՛խ, Մարգարիտ, շատ էի կարդացել, շատ էի լը-
սել, բաց ես այժմ եմ միայն հասկանում, թէ ինչ
զգացմունք է սէրը... Կատարեալ մի ցաւ, մի հի-
ւանդութիւն և միւնոյն ժամանակ մի անսահման
երջանկութիւն սրտիդ մէջ... Ես երբէք չէի փորձել
այս զգացմունքը... Միշտ նա, միշտ նա աչքիդ ա-
ռաջ, միշտ նրան ես տեսնում, նրա ձայնը լսում, նրա
հետ խօսում...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ... Աստուած ինքն է օրհնում քո սէրը... Դու
ազատ, նա ազատ... (Յուժոց հանելով) Երկուսդ էլ կա-
րող էք երջանիկ լինել... Նա շատ ազնիւ երիտա-
սարդ է և լիովին արժանի քո սիրոյն:

ՀԵՂԻՆԵ

Լինում են րոպէներ, Մարգարիտ, որ ուզում եմ
յանկարծ ձեռքերը բռնել և ասել նրան բոլորը, բո-
լորը...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս քանի ժամանակ է, Հեղինէ, ես նկատում եմ,

որ դու գիշերներն էլ հանդիսատ քուն չունիս... Երեխ
ամբողջ ժամերով հէնց նրա վրայ ես մտածում աչ-
քաբաց:

ՀԵՂԻՆԻ

Այս, ինչ ես ասում, Մարգարիտ, քունս կորել է
բոլորովին... Խոկ յերեկով ման գալիս, կարծում եմ
օդի մէջ եմ շրջում. կարդալիս, գրելիս, ինչ գործ էլ
շինում եմ, միտքս յանկարծ թռչում է գէպի նա և
գործը ձեռքից վայր է ընկնում... Այս, Մարգարիտ...

Ընդուած է գերիւ:

ՄԱՐԳԱՐԻՏ, եռու յուժոց հանելով:

Այս, դու սիրում ես...

Պատուիք:

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԱՆԱՀԻՏ

ԱՆԱՀԻՏ, հրանելով նախառնեակից:

Տիկին, այն օրուայ մարդն է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ մարդ:

ԱՆԱՀԻՏ

Այս, այն հաստ-հաստ մարդը, անցեալ շաբաթ որ
այստեղ էր:

ՄԱՐԳԱՐԻՏ

Վերջապէս...

ՀԵՂԻՆԻ, յուշուած:

Մարգարիտ, ես չեմ երևալ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ, հոգիս:

ՀԵՂԻՆԻ

Խնդրիր, Անահիտ:

Վերցնելով մի պէտքան, դուրս է գնուած յակ ուստից:

ՄԱՐԳԱՐԻՏ, Անահիտին:

Այս, թող շնորհ բերէ:

ԱՆԱՀԻՏ, առիտուենեանի դուրսը:

Համեցէք, պարոն:

Ներս լուսելով Սբէլին, ինչը դուրս է գնուած և դուրսը դուրսէ:

ՏԵՍԻԼ Գ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱԲԵԼ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՇուած:

Օ՛, սոսկալի մարդ...

ԱԲԵԼ, լեռլապահը յեւածին:

Բարի լոյս ձեզ, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ, առաւ:

Բարեւ, պարոն: (Հրանելով նորեւ) Համեցէք... Վեր-
ջապէս շնորհ բերիք, պարոն... (Նորեւ) Գլխագիրս
բերիք արդեօք:

ԱԲԵԼ, լեռլապահը բանավուն:

Այդ հեշտ է, տիկին, միայն թէ կարողանամ մի
կերպ համաձայնութիւն կայացնել ձեր մէջ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ... միթէ դեռ էլի չէք բերել. ամբողջ շաբաթ
է սպասում եմ... Զէ որ դուք ինձ խոստացաք:

ԱԲԵԼ

Այն, տիկին, բաց ես մեղաւոր չեմ... զիտէ Աստուած, որ մեղաւոր չեմ: (Նոռելով) Նորին վսեմութիւնը, այսինքն ձեր ամուսինը, տեղեկացաւ ուր հարկն էր... Այն ստորագրութիւնը, որ դուք ինձ յանձնեցիք անցեալ անգամ, բաւարար չէ, այսինքն... օրինական ամեն ձևերը չունի: Նրա փոխարէն պէտք է այս թղթի տակ ստորագրել:

Հանուամ է լեռլատահեց:

ՄԱՐԳԱՐԻՏ

Խոկ իմ զլխագիրը, պարոն, իմ զլխագիրը... Ոստիկանութիւնը պահանջում է, հասկանում էք դուք:

ԱԲԵԼ

Այն, տիկին, բաց նորին վսեմութիւնը բացորոշ յայտնեց, որ նա ձեզ զլխագիր չի տալ, մինչեւ դուք ստորագրէք այս թուղթը... Նա ինքն էր կամենում գալ ձեզ մօտ, բաց ես նրան յետ պահեցի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ գարշելի թուղթը ես երբէք չեմ ստորագրիլ, ես ձեզ ասացի արդէն:

ԱԲԵԼ

Ո՛չ, ոչ, տիկին, մի բարկանաք, այս այն չէ... Այս թուղթը բոլորովին նոր է դրած: Նորին վսեմութիւնը իր ձեռքով մեղմացրուց դարձուածները... Գործի էութիւնը նրանումն է միայն, որ յանցանքը դուք ձեզ վրայ պիտի առնէք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Աստուած էլ զիտէ, մարդիկ էլ զիտեն, որ ես ոչինչ յանցանք չունիմ և չեմ էլ կարող ճանաչել...

Ինչ որ գրեցի անցեալ անգամ, այն էլ բռնի հարկադրեցիք ինձ գրելու:

ԱԲԵԼ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Այս էլ թեթև է դրած, տիկին:
Տարածական առաջարկուում է լուղություն: ՄԱՐԳԱՐԻՏ, առաջարկությունը և աշխատանքը, գործադրությունը է և առաջարկուում:

Երբէք, երբէք... երբէք չեմ ստորագրիլ ես այս թուղթը... (Զգուշ է լուղությունը առաջարկուում էրունք:) Դարձեալ նոյն խայտառակութիւնը, նոյն գարշելի զրպարտութիւնը... Ի՞նչ կայ այստեղ փոփոխած:

ԱԲԵԼ

Բաց, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի գուր էք աշխատում, պարոն... Աշխարհիս ոչ մէկ բարիքի համար ես չեմ տալ այդ զգուելի ստորագրութիւնը... Հասկանում էք դուք. ոչ մէկ բարիքի համար աշխարհում:

ԱԲԵԼ

Սակայն...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այկաս ոչ մէկ խօսք, խնդրում եմ... Այդ տեսակ խայտառակութիւն ես երբէք չեմ ընդունիլ ինձ վերաց, ես ձեզ արդէն անցեալ անգամ ասացի... Ի՞նչն է փոխած այստեղ, ի՞նչ... Անհաւատարիմ եմ եղել ես իմ ամուսնուն, արատաւորել եմ ես նրա անունը, նրա պատիւը, ուրիշ էլ ի՞նչ մնաց... (Զայրացած:) Ո՛հ, Աստուած, Աստուած, ինչի ամօթից գետինը չեմ մըտնում ես այս բոպէիս:

ԱԲԵԼ

Մտածեցէք, տիկին, նա ձեր օրինաւոր ամուսինն է... նա զայրացած է ձեր դէմ, նրա խօսքն ամեն տեղ անցնում է... նա շատ չարիք կարող է բերել ձեր գլխին: (Խոսքավահաբեր:) Եւ ուղիղն ասեմ ձեզ, տիկին... նա պատրաստվում է գանգատ ներկայացնել Բարձրագոյն ատենին... չետևանքը դուք ինքներդ դիմէք, տիկին... (Լուսվէն:) Այն, տիկին, այսօր է թէ վաղը ձեզ ատեան կը հրաւիրեն, եթէ չէք ստորագրիլ այս թուղթը... Օ՛, դուք երբէք չէք ազատուիլ նրա հալածանքներից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Թոնդ անէ, ինչ կամենայ... Եթէ ելք չկայ ինձ ազատուելու, մահը կ'ազատէ ինձ նրանից:

ԱԲԵԼ, Դուք շուռավետեց յեպոյ Վերանում է եք բերած լուսնը:

Տիկին, լսեցէք դուք իմ բարեկամական խորհուրդը, անկեղծ սրտով եմ ասում, հաւատացնում եմ ձեզ... Կատարեցէք ձեր ամուսնու ուղաճը և այն ժամանակ ամեն ինչ կարգին կ'երթայ... Նա կը վերջացնէ գործը հաշտութեամբ... դուք հանգիստ կ'ապրէք ձեզ համար... ձեզ ոչ ոք չի նեղացնիլ...

ՄԱՐԳԱՐԻՏ, Շուռավելով:

Թողէք ինձ, լսնդրեմ:

ԱԲԵԼ

Ի գուր էք բարկանում, տիկին, չէ որ այս մի դատարկ ձևականութիւն է, որով ձեր խիոճը չի արատաւորուիլ երբէք... Ի՞նչ կը պակասի ձեզ, եթէ ստորագրէք այս թուղթը:

ՄԱՐԳԱՐԻՏ, առափել շայրացած:

Դուք կամենում էք խելագարութեան հասցնելինձ... (Յուստակապատճ հանձում է:) Անահիտ...

ՏԵՍԻԼ Դ**ՆՐԱՆՔ, ԱՆԱՀԻՏ****ԱՆԱՀԻՏ**, աեր վառելով:

ՏԻԿԻՆ:

ՄԱՐԳԱՐԻՏ, բանելով Անահիտի չեացը:

Կաց այստեղ, Անահիտ, ես նուազում եմ... (Յածը:) Այս մարդը...

Թողնելով Անահիտին, վերցնում է մի գուշին սրուած և հոր տուած:

ԱՆԱՀԻՏ, Աքելին:

Ի՞նչ էք ուղում մեզանից, պարոն, թողէք տիկնօջը հանգիստ, ի աէր Աստուծոյ:

ԱԲԵԼ, Մարգարիտ:

Ներողութիւն, տիկին... Ես աշխատում էի որ գործը խաղաղութեամբ վերջանայ, բայց դուք ինձ չհասկացաք... Այժմ ես անպարտ եմ... Մնաք բարեաւ... (Վերցնում է լեռլապահը) Այն միայն Աստուծուն է յայտնի, թէ ինչ վիշտ է պատճառում ինձ ձեր գրաւթիւնը... (Մէնուի:) Տէր Աստուծ, ինչով կը վերջանայ այս ամենը...

Դուքս է գնում:

ՏԵՍԻԼ Ե

ՄԱՐԴԱՐԻՑ, ԱՆԱՀԻՑ, ՀԵՊԻ ԼԵԽՈՆ

ՄԱՐԳԱՐԻՑ

ԱՐՄ, սիրուս...

ԱՆԱՀԻՑ

Ճանդատացէք, տիկին... ԱՐՄ, ի՞նչքան չարչարում
են ձեզ այդ մարդիկը:

ՄԱՐԳԱՐԻՑ

Պէտք է տանջուեմ այսպէս, քանի որ կենդանի
եմ. (Արտապատճեն առհետված) Գնա տես գոները բաց չմնայ:

ԱՆԱՀԻՑ

Ճշմարիտ, ես կը հրամայեմ դռնապանին, որ այ-
սուհետեւ բնաւ չընդունի այդ պարոններին:

ՄԱՐԳԱՐԻՑ

Ուժով ներս կը թափուեն, Անահիտ, ով է ինձ
պաշտպանողը:

ԱՆԱՀԻՑ

Աստուած ողորմած է, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՑ

Երանի Աստուած հոգիս առնէ ու պրծնեմ ես այս
աշխարհից:

ԱՀՅԵՐԸ ԱՐԵՊԱՅ Է:

ԱՆԱՀԻՑ

Խնայեցէք ձեզ, տիկին, մեղք էք:

ՄԵՇ ՔՄՆԻ ՔՄՆԻ ՔՄՆԻ Է. ՔՄՆԻ ՔՄՆԻ Է:

ՄԱՐԳԱՐԻՑ, աշխատելով Տի իւրու յառաջունեց ծածիւլ:
Տես ով է:

Ահահիուլ դուռը Բայ է անուած:

ԼԵԽՈՆ, երաւ գործի ծառէն գործի յետին:

Տանն են... Կարելի է...

ՄԱՐԳԱՐԻՑ, զարելով իրան և առշյուռալեամբ:

Կարելի է, կարելի...

ԼԵԽՈՆ, առաջ գործ:

Բարի օր ձեզ, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՑ

Բարեւ ձեզ, պ. Լեռն, համեցէք:

Միւեանց յետ են պալես:

ԼԵԽՈՆ, առաջորդելով Տի իւրանցը:

Խնդրեմ, տիկին, այս յատուկ ձեզ համար է:

ՄԱՐԳԱՐԻՑ

Ճատ շնորհակալ եմ, պ. Լեռն. դուք միշտ սիրալիք
էք դեպի մեզ...

ԼԵԽՈՆ, այս ու այն իրանց նայելով:

Իսկ օրինրդը...

ՄԱՐԳԱՐԻՑ

Տանն է, տանը, խկոյն գուրս կը գայ: (Ահահիուլնու)
Անահիտ, խնդրիք օրիորդին: (Լուսելիննու) Նստեցէք,
խնդրեմ: (Տեռելով Հեղինեն յակ իում բաներուած:) Ահա և
նա: (Ահահիուլնու) Լաւ:

Ահահիուլ դուռն է գնուած նախանեակ և դուռը կուտա:

ՏԵՍԻԼ 2

ՄԱՐԴԱՐԻՏ, ԼԵԽՈՆ, ՀԵՂԻՆԻ

ԼԵԽՈՆ, գուշակ դեղին հեղինեն:
Բարե, օրիորդ: (Առաջին բարձրացու) Բարեհաճեցէք:
ՀԵՂԻՆԻ, դուք ինչ շփուտուած:
Բարե, պարոն: (Բարձրացու և դուք) Ընորհակալ եմ:
Առաջ շատութիւն:

ՄԱՐԴԱՐԻՏ, դուքը գուշակ բաժանէի մէջ:

Սքանչելի ծաղկիներ են... Դուք մեզ յատուկ պարտավեցնում էք, պ. Լեռն... Թէ այս անդամ մեզ մի փոքր ուշ մտաբերեցիք:

ԼԵԽՈՆ

Մէկ րոպէ էլ մտքից չէք հեռացել, տիկին, ոչ
դուք, ոչ օրիորդը, հաւատացէք. միայն այս անդամ
հարկադրուած էի փոքր ինչ երկար մնալ զիւղում...
(Հեղինեն դուքը չեւսկի գուշակ դեղին իսրաւ, ուր Ֆ յարմար
բաժան է սրանուած:) Ա՛, ընորհաւորում եմ, տիկին, դուք
արդէն վերջացրել էք նկարը... Եւ ինչ գեղեցիկ է
գուրս եկել... Այս, այս, հրաշալի է... Ձեր տաղանդը
ինձ հիացնում է, տիկին... Լսեցէք խորհուրդս. դնա-
ցէք գեղարուեստական ճեմարան մտէք, հոչակաւոր
անուն կը հանէք, հաւատացէք ինձ:

ՄԱՐԴԱՐԻՏ

Է՛հ, պ. Լեռն, մինչեւ այսօր ես ձեր զիւղն անդամ
չկարողացաց տեսնել, ուր մնաց ճեմարանը:

ԼԵԽՈՆ

Սակայն ես յոյս ունիմ, տիկին, որ մէկ օր շնորհ
կ'անէք. ացցելութեան գալ և իմ լորձթին:

ՄԱՐԴԱՐԻՏ

Կ'աշխատեմ... Թէպէտ ես կը ցանկանայի տեսնել
ձեզ այդ խրճիթում, երբ արգէն որոշած կը լինէիք
ձեր վիճակը և ձեր իղձերը կատարած:

ԼԵԽՈՆ

Ա՛յս, որքան բաղդաւոր կը լինէի, եթէ ձեր ցան-
կութիւնները իրականութիւն ստանային:

ՄԱՐԴԱՐԻՏ

Աստուծով... (Վերջնեւ ծառին դուշին անուշա-
հու են այս ծաղկիները...) Ի՞նչ անուշա-
հու հարկէ:

ԼԵԽՈՆ

Այս, տիկին, իմ փոքրիկ պարտէզիցը:
ՄԱՐԴԱՐԻՏ, հոյ շաշլուն:

Հիանալի ծաղկիներ են... (Մասհաւագի մէջ է շնչնուած,
Տիշուրեւ Լեռն աչքը հետապնդամ հեղինենց.) Ասացէք, լսնդ-
րեմ, ինչ լուր ունիք ձեր բարեկամից... Անցեալ ան-
գամ ասում էիք, որ նա հայաստան է գնացել:

Փանջը գուշակ է իւ ուշը:

ԼԵԽՈՆ

Այս, տիկին. բայց թէ որտեղ է նա այժմ, այդ ես
հաստատ չգիտեմ:

ՄԱՐԴԱՐԻՏ

Նա բաւականին ուշացաւ:

ԼԵԽՈՆ

Գոնէ նամակիս պատասխանը դրէր:

ՄԱՐԳԱՐԵՏ

Զիցլ՝ թէ որևէ փորձանքի հանդիպած լինի:

ԼԵԽՈՆ

Ո՞չ, ո՞չ, տիկին... Եյդ մասին հանդիստ եղէք. ես հաստատ տեղեկութիւն ունիմ, որ մօտ օրերս նրան անձամբ տեսել են ողջ և առողջ... Երեխ գիւղից զիւղ շրջում է իր հետազօտութիւնները լրացնելու, և շատ հաւանական է, որ նամակներս էլ ստացած յինի...

Լուսական: Մարտաբերը իւմայ-էւմայ ժամանակաց է լենում, Տիշտեա Լեռնը սերով նայում է Հեռինեն, որ այս Տիշտեա ջոր է ածում Տի գեղցիկ բաժանի հէջ և ծառէդուազը հէջ է դնելով, դնում նայում է իր դեռ և ժորում:

ՏԵՍԻԼ. I

ՀԵՂԻՆԻ, ԼԵԽՈՆ

ՀԵՂԻՆԻ

Ներեցէք, պ. Լեռն, ես խսկոյն կը վերջացնեմ, մի քանի տող է մնացել:

ԼԵԽՈՆ

Խնդրեմ, օրիորդ, շարունակեցէք ձեր գործը:
ՀԵՂԻՆԻ, գլուխ չմարզրացնելով:

Դուք կարող էք խօսել, ես ձեզ լսում եմ... (Լուսական:) Ինչի՞ չէք նստում:

ԼԵԽՈՆ

Ես այսպէս էլ շատ լաւ եմ, օրիորդ:

ՀԵՂԻՆԻ, էրէար լուս-լի-նից յէպոյ:

Ինչի՞ չէք խօսում:

ԼԵԽՈՆ

Ես ձեզ կը խանգարեմ:

ՀԵՂԻՆԻ

Ո՞չ... Ես կարող եմ և' գրել և' լսել ձեզ:

ԼԵԽՈՆ

Աւելի ուշք դարձնելով զրութեանը, քան թէ խօսքերիս ի հարկէ... (Հեռինա լուս նայում է Լեռնին յանդիմանական հայեացուն, մեռոյ ինչն ժըմ-իւր իսկարհէցնելով՝ պարուած է: Երէար լուս-լի-նից:) Օրիորդ, Երբ կը դադարէք ինձ տանջելուց:

ՀԵՂԻՆԻ

Ես ձեզ տանջում եմ:

ԼԵԽՈՆ

Ի հարկէ տանջում էք:

ՀԵՂԻՆԻ

Միթէ... Ես չգիտէի թէ այդքան շնորհք ունիմ:

ԼԵԽՈՆ, փռք լուս-լի-նից յէպոյ:

Անդութ...

ՀԵՂԻՆԻ է:

ՀԵՂԻՆԻ

Լաւ, լաւ, մի նեղանաք, ահա վերջացրի... (Մօռենում է:) Այժմ խօսենք, ինչի վրայ էլ կամենաք... Ասացէք, ինչպէս է որ ես ձեզ տանջում եմ:

ԼԵԽՈՆ

Հըմ...

ՀԵՂԻՆԻ

Ինչպէս, ինչպէս... (Լուս-լի-նից:) Խօսեցէք, պ. Լեռն:

ԼԵԽՈՆ

Օրիորդ, բաւական է, խնդրում եմ... Դուք գիտէք,
որ ես ձեր վճռին եմ սպասում:
ՀԵՂԻՆԻ

Իմ վճռին:

ԼԵԽՈՆ

Այն, ձեր վճռին, որից կախուած է իմ երջանկու-
թիւնը:

ՀԵՂԻՆԻ

Եւ դուք յիրաւի համոզուած էք, որ ես կարող եմ
ձեզ երջանկացնել:

ԼԵԽՈՆ

Հաւատափապէս:

ՀԵՂԻՆԻ

Եւ ինքս էլ երջանիլ լինել:

ԼԵԽՈՆ

Այն, այն, որովհետեւ ես ձեզ սիրում եմ... Դուք
գիտէք, որ սիրում եմ... Սիրում եմ ձեզ անկեղծ,
անդաւաճան, սուրբ սիրով, սիրում եմ այն զգաց-
մունքով, որ ոչ մէկ բան չէ կարող խախտել... (Հե-
ղին շուռ նոյնամաս է:) Մի խօսք, միայն մի խօսք, օրի-
որդ, և դուք կարող էք յաւիտեան երջանկացնել ինձ:

ՀԵՂԻՆԻ

Եւ միշտ կը սիրէք ինձ ացպէս:

ԼԵԽՈՆ

Միշտ, միշտ, երդիւմ եմ...

ՀԵՂԻՆԻ

Ես ձեզ հաւատում եմ:

ՄԵՇԻՆԵՐ է յետէ:

Ա.ՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՅՈՐԴ

133

ԼԵԽՈՆ, ՀԱՅՔԻՆԵՐԵՆ յետէ:

Հաւատացէք, հաւատացէք, օրիորդ, որ ես ձեզ
սիրում եմ բոլոր սրտով, հոգւոյս բոլոր զօրութիւնովք:
ՀԵՂԻՆԻ, քայլ շուռ նոյնամաս յէպոյ շուռամաս է Լեռնի գերիւ:
Լեռն...

ԼԵԽՈՆ

Հեղինէս... (Հայքիներամ է:) Վերջապէս դու իմն ես:
ՀԵՂԻՆԻ

Յաւիտեան...

Ա.ՀԵԿՐ ԱՐԵՆԱՄ է:

ԼԵԽՈՆ

Հրեշտակս...

ՀԵՂԻՆԻ

Այսուհետեւ, Լեռն, դու և ես մի ենք. քո կամքը
իմ կամքն է, քո սիրու իմ սիրուն է, քո կեանքը
իմ կեանքս է... Իմ մէջ դու կը գտնես քո հաւատա-
րիմ ընկերակիցը, քո անձնուեր բարեկամը... Ինչ որ
կարող եմ, ինչ որ ձեռքիցս գայ, քո բոլոր պահանջ-
ները միշտ կատարած համարիր... Միայն սիրիր ինձ,
Լեռն, միշտ սիրիր... Երբէք զդադարես ինձ սիրելուց,
երբէք, գիտես... Գիտացիր, Լեռն, եթէ մի ժամ,
մի րոպէ դադարես ինձ սիրելուց, ինձ ուրանաս,
լաւ է, եթէ իսկոյն սպանես ինձ:

ԼԵԽՈՆ

Ամբողջ կեանքս, մինչև վերջին շունչս, քո երջան.
կութեանդ կը նուիրեմ, անդին իմ ՀԵՂԻՆԻ:

ՀԵՂԻՆԻ

0-, ես երջանիկ եմ... (Ա.ՀԵԿՐ ԱՐԵՆԱՄ է: Փայտ շուռամա-
սից յէպոյ:) Բայց գիտես ինչ կայ, Լեռն... Մարգարտի

դրութիւնը քեզ յայտնի է, նրան մեզանից երբէք
չպիտի հեռացնենք:

ԼԵԽՈՆ

Դու էլ զիտես, հրեշտակս, որ տիկին Մարգարտին
ես սիրում եմ որպէս իմ հարազատ քրօջս. ի հարկէ
նա կը մնայ մեզ մօտ:

ՃԵՂԻՆԵ, ՏԵՀԱՆՆՈՂ ՅԵՒՇ:

Ճնորհակալ եմ, կւոն.

ԼԵԽՈՆ

Իմ անդին ՃԵՂԻՆէ:

ՀԱՄԲՈՒՐՈՎ է ՇՐՋ ՔՄԱՒՐ:

ՏԵՍԻՆ Հ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, ԱԿԱՆԿ ԳՐԴԱՐ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛, Ճնորհաւորում եմ:

ԼԵԽՈՆ

Ա՛խ, տիկին...

ՃԵՂԻՆԵ

Ա՛խ, Մարգարիտ...

ԳԻՒՇ է ՀԱՅՈՒՄ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Վերջապէս:

ՀԱՄԲՈՒՐՈՎ է ՀԵՇԻՆԻ:

ԼԵԽՈՆ

Օրհնեցէք մեզ, տիկին... Զեր բերանով օրհնուած
մենք աւելի երջանիկ կը լինինք:

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱԿԱՆԿ ՅԵՒՇ: որ ԼԵԽՈՆ ՀԱՄԲՈՒՐՈՎ է:
Աստուած ինքն է ձեզ օրհնողը, բարեկամներս:
(Կանչը է:) Անսահիտ, Անսահիտ:

Պահպատից հանում է մի սերպեր:

ԼԵԽՈՆ, ԱԿԱՆԿ ԱԿԱՆԿ ՄԱՐԳԱՐԻՏ ՅԵՒՇ:

Թո՞յց տուէք, դուք ինչի էք նեղանում:

ՃԵՂԻՆԵ

Ես էլ կ'օգնեմ:

Հանում է երես բաժան:

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱԿԱՆԿ ԻՆ, որ Ծփնում է հայտառենեանից:
Անսահիտ, հոգիս, խմիչքը, շուտով բեր խմիչքը.
պէտք է Ճնորհաւորենք, բարեկամներս նշանուեցան:
ՃԵՂԻՆԵ, ՀԱՄԲՈՒՐՈՎ ԱԿԱՆԿ:

Իմ բարի Անսահիտս, Ճնորհաւորիր. ահա իմ նշանածս:

ԱՆԱՀԻՏ

Բարի սահաթի լինի... Ճնորհաւորում եմ, պ. կւոն...
Ճնորհաւորում եմ և ձեզ, օրիորդ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Գուտով, շուտով հասցրու խմիչքը, մենք այստեղ
ամեն ինչ կը պատրաստենք:

ԱՆԱՀԻՏ

Իսկոյն:

Գուրու է վաղում: Բաժանելը ուղարկեղող դաստիրում էն ող իումի
ուղարկ վար:

ՄԱՐԳԱՐԻՏ

Յանկանում եմ, որ այդ սէրը ձեր մէջ միշտ ան-
խախտ մնայ ձեր ամբողջ կեանքի ընթացքում...
Ամուսինների համար ամենամեծ երջանկութիւնը փո-
խադարձ սէրն է: Երբ նրանք միմեանց սիրում են,

Էլ ուրիշ բան չէ պակասում նրանց: Խակ եթէ սէր չկայ, ամենագեղեցիկ բարեմաղթութիւններն անգամ ոչինչ չեն տալիս... Թողի իմ անցեալը, թողի իմ ներկան օրինակ լինի ձեզ համար... Օգտուեցէք իմ կեանքի պատմութիւնից, այդ ձեզ լաւ յայտնի է:

ԼԵԽՈՆ

Հաւատացնում եմ ձեզ, տիկին, որ իմ սէրը դէպի չեղինչս կեանքիս հետ միայն կը վերջանայ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Լիովին համոզուած եմ:

ՀԵՂԻՆՔ

Որչափ աւելի երջանիկ կը լինէինք, Մարգարիտ, եթէ քեզ ևս բաղբաւոր տեսնէինք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Իմ վիճակը վշտալի է, հոգիս, և ես համբերութեամբ պիտի տանեմ իմ խաչը:

ԼԵԽՈՆ

Մենք կ'աշխատենք թեթևացնել այդ խաչի ծանրութիւնը... Մենք ձեզ սիրում ենք ինչպէս մեր հարազատ քրոջը... Դուք կը բնակուէք մեզ մօտ:

ՀԵՂԻՆՔ

Եցն, այն, Մարգարիտս... (Լ. Հ. Հ. Հ.) Իմ բարի, իմ աղնիւ Լեռն:

ՄԱՐԳԱՐԻՏ, ՅԵՒՇԵ Լ. Հ. Հ. Հ. Հ. Հ. Հ.

Եպնիւ երբացրս, այդ համակրանքն արդէն թեթևացնում է իմ լծիս ծանրութիւնը և մեծ սփոփանք է վիրաւոր սրտիս... Ըստն բան կախուած է նախախնամութեան կամքից...

Անահետք դուքին ուստափեղով բերում է մի շեշ շամպայն:

ԼԵԽՈՆ

Թոնց տուէք, ես ինքս բաց կ'անեմ: (Բառապահ շեշ, Անահետքն, որ կոմէնում էր բուրու գնուլ) Կացէք, Անահիտ, դուք ևս չնորհաւորեցէք մեզ... (Ածում է շամպայնը, յեղոյ Անահետքն, որ եր համար էլ Քրոյել էր մե բաժանուի:) Համեցէք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ճնորհաւորում եմ ձեզ, իմ անգին բարեկամներս... Ցանկանում եմ ձեզ երջանկութիւն և բարօրութիւն:

ԼԵԽՈՆ

Ճնորհակալ եմ, տիկին:

ՀԵՂԻՆՔ

Հոգեակ իմ Մարգարիտս...

Բառապահը շամպայն իմաստ է:

ԱՆԱՀԻ

Ճնորհաւորում եմ և ես ողջ և առողջ լինիք միշտ:

ԼԵԽՈՆ, ԱՆԱՀԵՏՔՆ

Ճնորհակալ եմ, Անահիտ:

ՀԵՂԻՆՔ, այս Տիջոցին:

Ճնորհակալութիւն, հոգիս:

Անահետք իմաստ է և բուրու գնուլ իր բաժանուի ու մուտքեղով յետին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Պ. Լեռն, դուք հաւանում էիք այս նկարը. իրնդրում եմ ձեզ երկրութիւն էլ, որ ընդունէք այս որպէս գրաւական մեր բարեկամութեան:

ԼԵԽՈՆ, Կոմէնութելով յեւշը:

Ի սրտէ շնորհակալ եմ... Ձեր այդ պարզեց մեզ համար թանգ է և խորհրդաւոր:

ՀԵՂԻՆՔ, համբուրբուլ Մարգարիտն միւս հողից:

Այս, իմ անգին Մարգարիտս...

ՄԱՐԳԱՐԻՏ, Բաժակը չեղակի:

Այսօր ձեր կեանքի համար նոր արշալոյս է բացվում, ի սրտէ ցանկանում եմ, որ ձեր օրով ծագէ այն արել, որի մասին այնքան յաճախ և այնչափ շատ երազել եմ ես այս պատկերը նկարելիս:

ՀԵՂԻՆԵ

Ի՞նչ երջանկութիւնն...

ԼԵԽՈՆ

Օ՛, մեր երջանկութեանը երջանկութիւն չի հասնիլ այն օրը:

Բաժակի առաջնորդ էն:

ՀԵՂԻՆԵ

Աւոն, մէկ ուստո... Դու...ինչ դրութեան էլ հասնիս աշխարհիս մէջ, որքան էլ հարստանաս, ինչքան էլ մեծ դիրք ստանաս հասարակութեան մէջ, դու պէտք է թո՞յ տաս ինձ՝ իմ պարապմունքս շարունակելու:

Մարտիրոս իորդի և բերուած անորոշութեան պարագաները:

ԼԵԽՈՆ

Ես քեզ պաշտում եմ, իմ աննման Հեղինէ... Աշխատիր, աշխատիր, հոգիս, իմ ուզածս էլ հէնց այդ էս... Դեռ դու սպասիր, մեր ապագայի մասին մտքումն այնպիսի բաներ են պտոյտ դալիս, այնպիսի գեղեցիկ պատկերներ նկարվում... Քեզ համար ես առանձին ուսումնարան կը հիմնեմ մեր գիւղում, ուր երկուս էլ լայն ասպարէզ ունինք գործելու... Դու քո ուսումնարանում գիտութեան լոյսը կը տարածես մեր ապագայ ցոյս մանուկների մէջ, իսկ ես բաց երկնքի տակ կ'աշխատեմ նրանց ճնողների հետ և մենք

մեր անձնական օրինակով կը խրախուսենք ու կ'առաջնորդենք նրանց:

ՀԵՂԻՆԵ, Մարտիրոս, մինչուեմ ոս սէրով նայուած էր նրանց:

Լսում ես, Մարգարիտ, թէ ինչ զեղեցիկ ապագայ է սպասում մեզ... (Բանելով Լւսնի չեղակի) Օ՛, Լւսն...

ՄԱՐԳԱՐԻՏ

Եցի, Հեղինէ, դուք երջանիկ կը լինիք.

ԼԵԽՈՆ, Հեղինէ չեղակը բանած:

Եցի, իմ անգին ընկերս, այսպէս ձեռք ձեռքի տուած առաջ ընթանալով, մենք կ'աշխատենք մշակել մեր փոքրիկ անդաստանը և գուցէ կարողանանք՝ թէ ծառայել ժողովրդին և թէ լիութիւն ու անդորրութիւն տարածել մեր շուրջը:

ՀԵՂԻՆԵ, ցածը:

Ի բոլոր սրտէ սիրում եմ քեզ, Լւսն:

ԱՆԱՀԻՏ, Կուշիկ սէրուած բերուած է Տէ այցելուն:

Տիկին, ձեզ են հարցնում:

Առաջնորդ է այցելուն:

ՄԱՐԳԱՐԻՏ, Վերջնելով այցելուն:

Արտաշէս...

ԼԵԽՈՆ

Միթէ...

Շահուած է ունի բառուց: Մարտիրոս սասպիրի յուղուած է:

ՀԵՂԻՆԵ

Այ ուրախութիւնն

ՏԵՍԻԼ թ.

ՆՐԱՆՔ, ԱՐՏԱՃԻՍ, ՏԵՐԱՎԵՐ Առաջ:

ԼԵԽՈՆ, ՀԱՇԴԵԿԵԼՈՆ ԱՐԹՈՂԵՆԻՆ ՀԱՅԻԱՆԵՆԵՐԱՅ:

ԱՐՏԱՃԻՍ...

ԱՐՏԱՃԻՍ

ԼԵԽՈՆ...

ԳՐԱՎՈՅ և ՀԱՅ ԲՈՒՋԱՎՈՅ են. ՀԱՅԱՅ ՉԵԽԱՆԵՐՈՅ են:

ԼԵԽՈՆ

ՎԵՐԺԱՎԻՍ...

ԱՐԴՐՈՂԵՆ շՊԱՊՈՎ ՀՐԱՆՆԵՐ

ՄԵՐԳԱԲԻՏ

ՊԱՐՊՈՆ ԱՐՏԱՃԻՍ...

ԱՐՏԱՃԻՍ

ԲԱՐԵ ձեզ, տիկին...

ՄԵՐԳԱԲԻՏ, պայուն չեւաց:

ԲԱՐԵ ձեզ... Միթէ այդ դուք էք...

ԱՐՏԱՃԻՍ, համբուրելով չեւաց:

Օ՛, տիկին...

ՄԵՐԳԱԲԻՏ

Այս ի՞նչպէս, այս Եր...

ԱՐՏԱՃԻՍ

ՀԵՆց նոր... (ՀԵՆՔԵՐԻ) ԲԱՐԵ ձեզ, օրիորդ:

ՀԵՂԻՆԵ, պայուն չեւաց:

ԲԱՐԵ, պ. ԱՐՏԱՃԻՍ. գալուստդ բարի:

ԱՐՏԱՃԻՍ, Լուսն:

Դարձեալ բարե, ընկերս:

ԼԵԽՈՆ

Բարե, բարե, եղբայր, աչքներս ջուր կտրուեց քեզ
սպասելուց:

ՄԵՐԳԱԲԻՏ

Նստեցէք, խնդրեմ:

Նստեց են, Ահահերը դրույ և գնում:

ՄԵՐԳԱԲԻՏ

Դուք մեզ բոլորովին մոռացաք, պ. ԱՐՏԱՃԻՍ:

ԱՐՏԱՃԻՍ

Մոռացայ... Ոչ, ոչ, տիկին, մի բոպէ անգամ ձեզ
չեմ մոռացել:

ԼԵԽՈՆ

Բայց այս նոր էիր կորել, ասա, խնդրեմ... Նամակ-
ներս ստացել ես:

ԱՐՏԱՃԻՍ

Ի հարկէ:

ԼԵԽՈՆ

Ցետոյ ինչի մի անգամ գոնէ չպատասխանեցիր:

ԱՐՏԱՃԻՍ

Է՛հ, եղբայր, առանց քո նամակների էլ ես շատ
անգամ ուզեցել եմ մի երկու խօսք գրել քեզ, բայց
ճանապարհորդութիւնս այնպէս գժուարին էր և ար-
կածներով լի, որ համարեա հանդիստ չունէի... Իսկ
նամակներդ միայն մի քանի օր կը լինի, որ բոլորը
միասին յանձնեցին ինձ և ահա ես ինքս անձամբ
եկայ, որպէս կենդանի պատասխան... Կը պատմեմ,
կը պատմեմ, ամենայն ինչ կը պատմեմ քեզ, Լեռն...
Պատմելու բաներ շատ կայ և, տարաբաղդաբար, շատ
անմիտթար բաներ... Ինչելից, ես երջանիկ եմ, որ

դարձեալ ձեզ հետ եմ և ձեզ ողջ և առողջ եմ տեսնում:

ԼԵԽՈՆ

Եւ միենոյն ժամանակ տեսնում ես բարեկամիդ՝ իր կեանքի ամենաերջանիկ բոպէի մէջ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս, պ. Արտաշէս, կարող էք շնորհաւորել... Պ. Լեռնն ու Հեղինէս հենց այս բոպէիս պարզեցին միմեանց իրանց զգացմունքները:

ԱՐՏԱՋԻՄ

Ի՞նչ ուրախալի լուր... (Տէ՛ւ գլուխութիւն) Ջնորհաւորում եմ, Լեռն։ (Գրէ՛ւ և և համբուրդում) Դեռ ըրգնացած ես գուշակում էի, որ ձեր համակրութիւնը այդպիսի վախճան պիտի ունենայ... (Հեռէնէն։) Ջնորհաւորում եմ ձեզ, օրիորդ... քոյրիկս... (Համբուրդում յէտու) Այսուհետեւ ինձ թոյլ կը տաք այդպէս անուանել ձեզ... Լեռնի հարսնացուն չէ կարող ինձ օտար մնալ:

ՀԵՂԻՆԻ

Չատ ուրախ կը լինիմ, պ. Արտաշէս, ձեզ պէս եղբայր ունենալու:

ԱՐՏԱՋԻՄ

Կրկին շնորհաւորում եմ, եղբայրս... Ի գէպ, ահա և շամպայնը. ինչպէս չնկատեցի...

Կ. Հ. Բ. Ա. Հ. Ա. Հ.

ՀԵՂԻՆԻ

Սպասեցէք, սպասեցէք, ես մաքուր բաժակ կը բերեմ:

ԱՐՏԱՋԻՄ

Ոչինչ, մի նեղանաք, ես զինուոր մարդ եմ:

ՀԵՂԻՆԻ, գուշու բեռի պահպան:

Սպասեցէք, հենց այսուղի է:

ԱՐՏԱՋԻՄ

Ի՞նչպէս սաստիկ սիրահարուել ես, Լեռն... Տես թէ ինչեր ես գրել... (Զբացը ծրաց պահեցով և ծղողութիւն) ԱՌՈՒ զիս բարձրածացն կարդամ քո ճարտասահնական դարձուածները...

ԾՐԺԱԿԱՆ

ԼԵԽՈՆ, բանում է Արտաշէսի յեռաց և ծղողութիւն:

Ոչ ոչ, մենք քեզ հաւատում ենք:

ԱՐՏԱՋԻՄ

ԱՌՈՒ, ՀԵՂԻՆԻ, գուշու և մինչեւ նո բեռնում է բաժանում: Պէտք է իմանաք, քոյրիկ, թէ մինչեւ որ սաստիճան գրաւած ունիք գուք Լեռնի սիրտը... (Աահեւով բաժանում) Ջնորհակալ եմ... (Ածեւով շամպայն) Իրաւ, ես կարծում էի խելքը բոլորովին կորցրած կը տեսնեմ սրան, բաց, փառք Աստուծոյ, այսես վախենալու ոչինչ ըւնիմ:

ԼԵԽՈՆ

Մանաւանդ այսուհետեւ կարող ես բոլորովին հանգիստ լինել:

ԱՐՏԱՋԻՄ

Հանգիստ և ուրախ... (Վ. էրշանով բաժանում) Ջնորհաւորում եմ... Ցանկանում եմ ձեզ երկար, շատ երկար ու երջանիկ տարիներ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Նորից շնորհաւորում եմ և ես...

Բաժանեցը ըստէւով ինչում են:

ԱՐՏԱՋԵՍ, յանէած նէտուլով անըն:
Վահ, այս ինչ սքանչելիք է...

Մասում է առշած:

ԼԵԽՈՒ

Տիկնոջ զորջն է այդ:

ՀԵՂԻՆԻ

Մարգարիտս հէնց այսօր վերջացրեց այդ պատկերը:

ԼԵԽՈՒ

Ես միանդամայն հիացած եմ սրանով:

ԱՐՏԱՋԵՍ

Սքանչելի է... (Մարտուրիս) Ճնորհաւորում եմ, տիկին... Դուք կատարելութեան էք հասցրել ձեր վրձինը:

Մարտուրիս լէլև գլուխ է բաւկա:

ԼԵԽՈՒ

Ճնորհաւորի և մեզ, Արտաշէս: (Մարտուրիս անդուռած է յանի հռչէ) Այդ պատկերը մենք պարզե ստացանք մի քանի րոպէ առաջ ի ցիշատակ մեր երջանիկ նըշանադրութեան:

ԱՐՏԱՋԵՍ

Ճնորհաւորում եմ, ի սրտէ շնորհաւորում եմ: Տայ Աստուած, որ այս պարզել երջանկութիւն բերի ձեզ... (Սեղմաշ է Հեղինէկ և Լւսնի յանից) Տե՛ս, տես, Լւսն, տես թէ այս փոքրիկ կտաւի կտորը ուր է տանում մարդու միտքը, մարդու հոգին...

ԼԵԽՈՒ

Խսկոյն երևում է, որ բանաստեղծ ես:

ԱՐՏԱՋԵՍ

Բանաստեղծութիւնը մի կողմը... չաւատա, Լւսն, ինձ թվում է, որ ես հէնց այս րոպէիս դարձեալ

այն սրբավայրերումն եմ շրջում և մեր թշուառ եղբայրակիցներին տեսնում երկնքից օգնութիւն սպասելիս... Դու չգիտես, Լւսն, թէ ինչ դրութեան մէջ են այն խեղճերը: Ալատիւ, կեանք, կացք, ընտանիք, ոչինչ, ոչինչ ապահով բան չունին այն թըշուառները: Բացց այդ մասին յետոց, մենք առանձին կը խօսենք... Դու ասա, տեսնեմ, ինչ էք անելու, ինչպէս էք տուն ու տեղ սարքելու... Կարծում եմ, որ դու քո գիւղից ձեռք չես վերցնիլ:

ԼԵԽՈՒ

Ի հարկէ չէ... Ինչ կարող է փոխարինել գիւղական կեանքի վայելչութեանը: Հեղինէիս հետ մենք արդէն ուլստեցինք մեր բոլոր ոյժերը գիւղին նուիրել:

ԱՐՏԱՋԵՍ

Կատարեալ յաջողութիւն եմ ցանկանում ձեզ:

ԼԵԽՈՒ

Նոյնը և քեզ ենք ցանկանում:

ՀԵՂԻՆԻ

Ի բոլոր սրտէ:

ԱՐՏԱՋԵՍ, գլուխ է բաւկա նըշան և գնում գլուխ: Մարտուրիս:
Իսկ ձեզ, տիկին, չգիտեմ ինչ ասեմ. լեզուս կաշկանդվում է... (Նարում էն բեմի յան հողմաշ: Հեղինէն ու Լւսնը մի հռչէ հաշուելով նոյնպէս նարում էն և սիրով իօնում:) Ինձ այնպէս ապշեցրեց ձեր բաժանութիւնը...

ՄԱՐԴԱՐԻՏ

Վիճակս էր այդ, ինչ արած... Դուք ինչպէս ճանապարհորդեցիք. վերջացրիք արդեօք ձեզ տուած յանձնարարութիւնը:

ԱՐՏԱՃԵՍ

Այդպէս շուտ անկարելի էր, տիկին... Գործը դեռ
շարունակվում է... Ընկերներս այնտեղ մնացին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Աստուած Ինքը յաջողի... (Արտաճես գլուխ է պա-
տմութեան...) Գիտէք, ես արդէն սկսել էի սաստիկ
անհանգիստ լինել ձեր մասին... Ամբողջ երեք ամիս
էր գնացել էիք և այդքան ժամանակ ձեզանից ոչ
մի նամակ չէր ստացվում:

ԱՐՏԱՃԵՍ, յուղուած:

Այս, տիկին, եթէ գիտենայիք...
ԱՆԱՀԻՏ, որուց է մի ծրար և պալիս է Մարտուրին:
Պատասխանի են սպասում, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ումից է:

ԱՆԱՀԻՏ

Զգիտեմ, տիկին, տանտիրոջ ծառան բերեց:

ՄԱՐԳԱՐԻՏ, բանալով ծրար:

Դարձեալի... (Աչք անցնելով լուս և ստորին շուտունելով)
Աստուած իմ...

Տեղի վեր է լուսում: Ամենան էլ որո՞ի են ինունում:

ԱՐՏԱՃԵՍ

Ի՞նչ է:

ՃԵՂԻՆԵ, Տիկինութեան:

Ի՞նչ կայ:

ԼԵԽՈՆ, նոյնութեան:

Ի՞նչ է պատահել:

ԱՐՏՎԱՐԻՏ

Ոչինչ, ոչինչ: (Անոհետին:) Ասա, լաւ:

Անոհետը ոռուս է գնում:

ԱՐՏԱՃԵՍ

Ի՞նչ բան է, տիկին, Զենք կարող արդեօք պիտանի
լինել:

ԼԵԽՈՆ

Ի հարկէ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ճնորհակալ եմ, բարեկամներս, դուք ոչնչով չէք
կարող օգնել... Իմ վիճակս կախուած է մի այնպիսի
մարդու կամքից, որ վայելում է իր գիրքի բոլոր
արտօնութիւնները, իսկ ես՝ թշուառս, նոյն իրա-
ւունքից զուրկ, անօգնական և անպաշտպան, ստի-
պուած եմ նրա կամակորութեանը զոհ լինել ամբողջ
կեանքիս ընթացքում: (Տարև լուշ լուս Լեռնին:) Տեսէք,
ահա այս երրորդ անգամն է, որ ստիկանութիւնը
պահանջում է ինձանից իմ գլխագիրը, բայց մինչեւ
օրս ես չեմ կարողանում ձեռք բերել այդ ողորմու-
թիւնը իմ պարոն ամուսնուց...

ԱՐՏԱՃԵՍ

Ի՞նչ, միթէ չէ տալիս նա ձեզ այդ թուղթը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այն, չէ տալիս: (Մինչեւ Լուս և Արտաճես իտուռու-
մա լուշ լուս, մերութեան:) Կ'ազատուեմ արդեօք ես այս տան-
ցանքներից...

ԱՐՏԱՃԵՍ

Ճանգստացէք, տիկին, մենք կը կարգադրենք այս
զործը... Ամենահասարակ քաղաքավարութիւնն իսկ

պահանջում է, որ նա ապահովացնէ ձեր կացութիւնը գոնէ այդ կողմից:

ԼԵԽՈՆ, Առաջլու առաջ Հեղինելին, որ նոյնպէս հերացրելում էր:

Այս, պէտք է աշխատենք շուտով ձեռք բերել այդ գլխազիրը, ապա թէ ոչ, ինչպէս երևում է, ոստիկանութեան համբերութիւնը հատնում է արդէն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բայց ի՞նչպէս ձեռք բերել. ով կը տայ ինձ իմ գլխազիրը, ով ունի այդ իրաւունքը, բացի իմ ամուսնուց... Դուք լաւ գիտէք, որ այդ կախուած է միմիայն նրա կամքից և ոչ մի զօրութիւն չէ կարող ստիպել նրան այդ արտօնազիրն ինձ տալու, եթէ ինքը չէ կամենում...

ԱՐՏԱՃԻՍ

Ի գուր էք ացդչափ անհանգստանում, տիկին. այդ այնքան էլ դժուարին չէ, որքան կարծում էք:

ԼԵԽՈՆ, առաջլու Առաջլու Հեղինելի յէտեկից:

Այս, տիկին, ահա ես ու բարեկամս իսկոյն կ'երթանք ոստիկանատուն և կ'աշխատենք որ մի փոքր ժամանակ տան մեզ. իսկ այդ միջոցին, ի հարկէ, մի ելք կը գտնենք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, դուք մնացէք... Ես ինքս պէտք է գնամ, ես ինքս պէտք է դունէ դուռն ընկնեմ, ազգականներիս միջնորդութեանը դիմեմ, տեսնեմ թէ ինչ կարող եմ անել իմ սե ու մութ օրիս համար... Դուք մնացէք, թող իմ անբաղդութիւնը չխանգարէ ձեր երջանկութեանը...

Դուրս է դուռն յա՞ն նողի դուռնից:

ՀԵՂԻՆԻ

Մտածեցէք, պարոններ, աշխատեցէք, ազատեցէք նրան... Ի սէր Աստուծոյ, ազատեցէք...

Դուրս է դուռն Մարգարիթի յեռեկից:

ՏԵՍԻՆ

ԱՐՏԱՃԻՍ, ԼԵԽՈՆ

ԱՐՏԱՃԻՍ

Եւ գու կարծում ես, որ մենք կարող ենք մի բան շինել այդ կերպով:

ԼԵԽՈՆ

Անշուշտ... Ոստիկանութեան պահանջը, երեխ, ստորին պաշտօնեանների աւելորդ եռանդի հետևանքն է: Մեր ոստիկանապետը բարեկիրթ մարդ է և շատ էլ ազնիւ, հազիւ թէ նա կսմենար հալածել մի կնոջ, որ հասարակութեան ընտիր դասակարգին է պատկանում.

ԱՐՏԱՃԻՍ

Գնանք փորձենք, յետոյ Ես գիտեմ իմ անելիքը:

ԼԵԽՈՆ, Առաջլու դուռն ունելու մէռնի վրայ:

Երդէն գլուխդ տաքացաւ:

ԱՐՏԱՃԻՍ

Ես կը ցնորուեմ, Լեռն, եթէ որևէ միջոցով ձեռք չըերեմ Մարգարիթի գլխազիրը. Այդ ամենակարու մի թուղթ է. ոստիկանութիւնը պահանջի, չպահանջի, այդ միւնոյն է:

ԼԵԽՈՆ

Մի փոքր համբերութիւն, Արտաշէս... Զի՞ որ տիկ-

նոզը գլխագիր տալը այժմ բացառապէս կախուած է միմիայն իր ամուսնու կամքից:

ԱՐՏԱՃԵՍ

Հաւատա ինձ, Լեռն, եթէ մեղ չչաջողուի մի բանով օգնել, ես այդ գլխագիրը դէմ առ դէմ կ'առնեմ հէնց նորին փսեմութիւնից... Ես նրա հետ հին հաշիւներ ևս ունիմ... Ի՞նչքան ցաւում եմ, որ ես այն ժամանակ ոչինչ չգիտէի դրանց յարաբերութիւնների մասին, ես նրան քաղաքավարութեան դասեր կը տայի. բաց ինչ արած, Մարգարտի պատուի համար ես ստիպուած էի համբերութեամբ տանել այն պարոնի վիրաւորեցուցիչ ակնարկութիւններըն ու կոպիտ վարմունքից:

ԼԵԽՈՆ

Խեղճ կին... Ինչպէս երեւում է նա վաղուց տանջուելիս է եղել իր շուայտասէր ամուսնու ձեռքից:

ԱՐՏԱՃԵՍ

Օ՛, ես միանգամ ընդմիշտ կ'ազատեմ Մարգարտիս այն բռնակալից. Ա՛խ, Լեռն, քո նամակներն ինձ խելագարութեան հասցրին... Հէնց որ ստացած այդ նամակները, բոլոր գործերս բարձի թողի արի և գլխապատռ ճանապարհ ընկայ... Ահա հինգ օր է, մէկ րոպէ հանգստութիւն չեմ ունեցել. գիշեր, ցերեկ սլանում էի անդադար. սար, ձոր, գետ, դաշտ, կարծես գոյութիւն չունէին ինձ համար... Լեռն, Լեռն, եթէ դու կարողանացիր երեակացել, թէ ինչ կրակով է այրվում սիրտս, որպիսի սիրով եմ սիրում ես Մարգարտին... Ես պատրաստ եմ ամեն բան առել, ամենայն բան մոռանալ և ուրախութեամբ մեռ-

նել նրա ոտների տակ, եթէ միայն մի օր երջանիկ տեսնէի նրան:

ԼԵԽՈՆ, գոյր լուսելին յէպոյ:

Ես քեզ հասկանում եմ, Արտաշէս... Եւ նա լիովին արժանի է այդ սիրոյն:

ԱՐՏԱՃԵՍ

Գիտես, եթէ այս փոփոխութիւնը չպատահէր նրա կեանքի մէջ, ես վճռել էի այլես չերևալ նրա աչքին:

ԼԵԽՈՆ

Միթէ կարող էիր այդպէս խիստ լինել:

ԱՐՏԱՃԵՍ

Գնանք, Լեռն, գնանք, ուշանում ենք:

ԼԵԽՈՆ

Խսկոյն, Արտաշէս, թող նրանք էլ դուրս գան:

ԱՐՏԱՃԵՍ

Ա՛խ, այն, ես բոլորովին շփոթուեցաք... (Մաս է գուշ, յանիարծ իսուն է առանում նիտի առողջ) Տես, Լեռն, կը հաւատամաս, այլես ոչինչ չեմ որոշում, աչքերս մըթնել է միանգամայն:

ՑԵՍԻԼ ԺԱ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՉԳԵԿԱՊ ՔՐԻԱԾ, ՀԵՂԻՆԵ

ՄԱՐԳԱՐԻՏ, գլեարուց ծածկեւալ դրուր է գուլեն Հեղինեն հեռ:

Ներեցէր, պարոններ, որ ձեզ մենակ եմ թողնում,

Ես շուտով կը վերադառնամ:

Վէրցնում է բռութը, Անահերը բերում է Մարգարիտի վերաբերում:

և հոռոմ է բեմի խորհում տնշարժ:

ԱՐՏԱՃԵՍ

Դուք սպասեցէք, տիկին, հանգստացէք, ի սէր Աստուծոյ, մի կէս ժամ միջոց տուէք մեզ, մենք ահա գնում ենք ոստիկանատուն: Եթէ մեզ այնտեղ ոչինչ չչաջողուի, խօսք եմ տալիս ձեզ, որ ես անձամբ կ'երթամ աղ. Սամսոնեանի մօտ, կը խօսեմ նրա հետ և ինչպէս էլ լինի, կ'առնեմ նրանից ձեր գըլ-լսագիրը:

ՄԱՐԳԱՐԻՏ, ասուի՛ շնորհելով:

Ի՞նչպէս... Դուք, դուք նրա մօտ կ'երթաք... Ո՛չ, մի անէք այդ բանը, աղաջում եմ...

ԱՐՏԱՃԵՍ

Իսկ եթէ ուրիշ ելք չինի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի զուր, ի զուր կը լինի այդ բոլորովին... Դուք գեռ ամենը չփխոէք... Նա զայրացած է իմ դէմ, նա պահանջում է, որ ես յանձն առնեմ մի յանցանք, որ յիշելն անգամ ինձ ամօթ է պատճառում... Աղաջում եմ ձեզ՝ մի գնաք նրա մօտ... Զարհուրելի չարիք կարող է առաջ գալ այդ տեսակցութիւնից:

ԱՐՏԱՃԵՍ

Դուք անհանգիստ մի լինիք, ոչինչ վտանգ չի կարող պատահել: (Լւսնին:) Կնանք, Լւոն: (Մարդունին:) Ես չեմ հանգստանալ, տիկին, մինչեւ ձեռք չբերեմ ձեր զլխագիրը:

Դուքը է գնում:

ՄԱՐԳԱՐԻՏ, այս ու այն հողմն ընկնելով:

Ո՛չ, Տէր Աստուծած, նա գնաց... Ի՞նչ պէտք է անեմ ես...

ԼԵԽՈՆ

Մի յուսահատուիք, տիկին, ես նրանից չեմ հեռանալ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ջտապեցէք, շտապեցէք, աղաջում եմ, արգելեցէք մի կերպով:

ԼԵԽՈՆ

Դուք անհոգ եղէք, տիկին:

Դուքը է գնում:

ՀԵՂԻՆԵ

Ի՞նչ է լինելու այժմ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Միմեանց կը մորթեն, կը սպանեն... Աստուծած իմ... Եւ այս ամենը ինձ համար... ինձ համար... Ո՛չ, հեղինէ...

Դուք գերին է ըստնում: Պարհեք:

ՎԵՐԱ ԶՈՐՅՈՐԴԻ ԱՐԱՐՈՒԱԾԻ

ԱՐԱՐՈՒՄԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Միեւնոյն տեսարանը:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԱՆԱՀԻՏ, մենակ, ալուստերը հարգի է բերում: Մի շատի
զայրիւնուից յետոյ դուռը բաղշեռամ էն: Գնում հօպե-
նում է դառնու և մէջի հետ խօսում:

Հը, ինչ է, ինչ ես ուզում էլի: — Պատասխանը: — Ասացի որ լաւ: — Ի՞նչ անեմ որ ոստիկանը հրամայել է, ափկինը տանը չէ: — Լաւ, լաւ, կը գայ կ'ասեմ, մի փոքր համբերութիւն ունեցէք, օրհ-
նածներ, ինչ եղաւ ձեզ... (Գուռը գուռամ է:) Այս
ինչ տեսակ մարդիկ են, Տէր Աստուած, զլուխս տա-
րան էլլի... Եթէ ոստիկանութիւնը մէկի փեշից բըռ-
նում է, էլ Աստուած ազատի... Տանջեցին խեղճ տիկ-
նոջս: (Յարուսանում է սենեակը հարեւ բերեւ: Դարձեւ դուռը
բաղշեռամ էն:) Դարձեալ... (Սասպիր բաղշեռամ էն դուռը:) Գա-
լիս եմ գալիս...

Գուռը բայ է տնում:

ՏԵՍԻԼ Բ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԱՀԻՏ

ԱՆԱՀԻՏ

Այս, տիկին, գուշ էք:
ՄԱՐԳԱՐԻՏ, գլեարիւն և վերաբերուն:
Ինչի ես գուռը փակել, Անահիտ:

ԱՆԱՀԻՏ

Տանտիրոջ ծառան զլուխս տարաւ, տիկին, շուտով
պատասխանն, ասում է:
ՄԱՐԳԱՐԻՏ, յուժոց հանելով:
Պատասխանն...

Ուղիւնաւթեան լուղեւ չդում է ուշանի վրա:

ԱՆԱՀԻՏ

Այս, տիկին, ասացի, որ տանը չէք:
ՄԱՐԳԱՐԻՏ, վերաբերուն վերաբերուն և գլեարիւն:
Լաւ... Տար այս ամենը:

ԱՆԱՀԻՏ

Խկոյն, տիկին..., Բայց դուք տիսուր էք, երեկի
ձեզ էլի վշտացրել են:
ՄԱՐԳԱՐԻՏ, յանեւնուն վաստանին:

Ձատ...

ԱՆԱՀԻՏ

Խեղճ իմ տիկին:
Վերաբերուն է Մարգարիտ վերաբերուն ու գլեարիւն դուռը պահում
չուն իոնից: Երեմ շուռական, որից յետոյ Մարգարիտը լուշե-
նուն պահում է աշտելին:

ՏԵՍԻԼ 9.

ՄԱՐԴԱՐԻՏ, ՀԵՂԻՆԻ

ՀԵՂԻՆԻ, ՏՐՈՒԵԼ ԱՊԻՄՈՒԵՆԵԱՒԻց ԳԼԵՄՐԻՆՆ և ՎԵՐՄՐԻՆՆ:

Մարգարիտ, գործերը յաւ են գնում... (Մարդութեա-
ժածիում է արդասութշ:) Ճանապարհից վերադարձաց, որ
քեզ ուրախացնեմ... (Հանուց է վերտիոն:) Այս րոպէիս
հանդիպեցաց ես Սրտաշէսին ու Լեռնին, ոստիկա-
նատնից նոր էին դուրս գալիս... Բանից երևում է,
որ ոստիկանապետը շատ լաւ է ընդունել նրանց և
խոստացել է օգնել, ինչքան կարելի է:

ՄԱՐԴԱՐԻՏ, Դաստիարակութ:

Ի՞նչքան կարելի է... Ճնորհակալ եմ, հոգիս... Յե-
տոյ հուր դնացին նրանք:

ՀԵՂԻՆԻ

Խսկոյն աշտեղ կը գան:

ՄԱՐԴԱՐԻՏ

Ո՛չ, ՀԵՂԻՆԻ, ո՛չ, նրանք ոչինչ չեն յաջողեցնիլ
ոստիկանատանը:

ՀԵՂԻՆԻ

Է՛հ, ինչ ես ասում. երկու այդպիսի տղամարդ աշ-
խատում են, անկասկած մի ելք կը դունեն:

ՄԱՐԴԱՐԻՏ

Ոչ ոք, ոչ ոք չե կարող գտնել այդ ելքը, ՀԵՂԻ-
ՆԻ: Ոչ ոք իրաւունք չունի ոչ գլխագիր և ոչ ան-
ցագիր տալ ինձ՝ առանց իմ ամուսնու. համաձայնու-
թեան, քանի որ ես նրա կինն եմ համարվում...

Հասկացիր վերջապէս... Ջատ-շատ մի քանի օր, ա-
սենք հենց մի քանի շաբաթ ժամանակ տուին ինձ,
իսկ այնուհետեւ:

ՀԵՂԻՆԻ

Ել չգիտեմ ինչ ասեմ... (Փուր լուսվեանից յեպոյ:) Իսկ
դու ինչ շինեցիր, տեսար արգեօք ազգականներիդ:
ՄԱՐԴԱՐԻՏ, յուսահարու:

Այս, տեսաց... Խոստացան անմիջապէս խօսել նրա
հետ:

ՀԵՂԻՆԻ

Մի յուսահատուիր, Մարգարիտ, գեռ էլի ժամա-
նակ կայ, տեսնենք ինչ է լինում:
ՄԱՐԴԱՐԻՏ

Ես, ՀԵՂԻՆԻ, եթէ գու կարողանայիր թափանցել
իմ սրտիս խորքը, եթէ զու կարողանայիր տեսնել,
թէ ինչ է կատարվում այստեղ... Ես ինձ
համար չեմ մտածում, ՀԵՂԻՆԻ, թողլ պատահի, ինչ
որ պատահելու է... Ես պատրաստ եմ ամեն նեղու-
թիւններ, ամեն զրկանքներ կրելու, բաց իմ պատ-
ճառով ինչի ուրիշները վտանգի ենթարկուեն...
Մինչդեռ ես՝ թշուառս, հնար չունիմ արգելել այդ
վտանգը... (Բառեառն գլուխ:) Ես այլևս չեմ հասկանում
ինչ եմ ասում, միտքս շփոթվում է, զլուսս պտոյտ
է գալիս, ես խելազարվում եմ...

ՀԵՂԻՆԻ

Հանգստացիր, ի սէր Աստուծոյ... Ինչի ես չափա-
զանցութեան հասցնում գործը... (Փուր լուսվեանից յեպոյ:
իսուս փոփէլով:) Ես ուշանում եմ, Մարգարիտս, զը-
նամ զործս վերջացնեմ... Ջուտով կը վերադառնամ...

(Գուրգեռէլ Մարտարինին) Մի յուսահատուիր, հողիս,
աղաչում եմ քեզ, մի յուսահատուիր. Աստուած ողոր-
մած է: (Մէնուսին) Խեղճ, խեղճ իմ Մարգարիտ...
Վերջինում է վերաբերեա և դուք դնում անկառենաւից:

ՏԵՍԻԼ Դ

ՄԱՐԳԱՐԻՏ:

Աստուած իմ, Աստուած... (Գյուղեւ Յետերի Տէջ առաջ-
անցուածը է անուած, յեպոյ յետերը ձայն լողիւլով իշունք է
առանուած այն նէտրի առաջ, որ իր ճանիւթեան պարտեզն է ներշա-
ցնուած:) Իմ մանկութեան յիշատանկրի... (Դաստիարէն շար-
ծաւած է գլուխը:) Երջանիկ օրեր... (Թեւերը լոսկ պարով հե-
տանուած է նէտրեց,) Կորաւ, բոլորը կորաւ անդառնալի...
Օ՛, Աստուած...

Կրին ճան գլուխ արդյոյայրուած է վերին աստիճանի յաւառահարու-
թեան: Յեպոյ ճառենալով նոր նէտրին [Արշալոյս], լուսու և անշարժ
նայուած է նըստ երեսը ժամանակի: Այս դրսութեան Տէջ առանուած է հե-
տեւալ, վերջը ընդուած է ալեսու վերա և առենջորդ լուս լինուած:

ՏԵՍԻԼ Ե

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐԿԱԴԻ

ԱՆԱՀԻՏ, զարհուբած նէրս վաղիւրու-
Տիկին, ձեր ամուսինը...
Դանեւուած է Արմագին, հասարաւ: նշանառութեսորդ և աստու-
աշնոր, ինչպէս երեսորդ արարուածուած:

ՄԱՐԳԱՐԻՏ, անհետու Արմագին և անուեց մէր լուծեւու, զե-
շում է:

ԱՇԽ...

Յեւըւում է ալուսին: Արմագ լուսութիւն: Յեպոյ Արմագին Տի ժամի
ժայու առաջ գլուխ հրամայուածն նշան է անուած Անահիտին որ
դուրս էնոյ, և նա առըստիոծ ինչոյն դուրս է էնոյած:

ԱՐԿԱԴԻ, առաջ գլուխ:

Միթէ այդքան զարհութելի եմ թվում ձեզ, տիկին:
ՄԱՐԳԱՐԻՏ, առանց երեսին նայելու և հառիւ հառ է արդու-

հառով իսաւ:

Ի՞նչ էք կամենում, պարոն:

ԱՐԿԱԴԻ

Ձեզ արդէն յայտնի է, տիկին. ազատուել ձեզա-
նից... (Մարտարիսը լուս նայուած է երեսին) Այն, ազատուել
ձեզանից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ազատուել ինձանից... Ինձանից ազատուել, թէ
ինձ ազատուել:

ԱՐԿԱԴԻ

Իմ ազատութեանը հետեւում է և ձեր ազատու-
թիւնը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Եւ իմ ազատութիւնը... (Դաստիարէն ծիծուըւմ է:) Ո՞ւր
է, ուր այդ ազատութիւնը... Ես իմ ամբողջ կեանքս
կը տայի, եթէ կարելի լինէր ինձ մի օր, մի ժամ
վայելել այդ ազատութիւնը... Գոնէ մեռնելիս ազատ
կը մեռնէի:

ԱՐԿԱԴԻ

Եթէ արդարե այդ լինէր ձեր ցանկութիւնը, դուք.

իմ ուղարկած թուղթը չէք վերադարձնիլ առանց ստորագրելու:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բաւական է, պարոն, բաւական է այդքան ծաղր ու ծանակը, բաւական է որքան զրպարտեցիք ինձ... Թողէք ինձ հանդիսատ, խնդրում եմ:

ԱՐԿԱԴԻ

Դուք էք, տիկին, դուք, որ մի րոպէ անդամ հանգստութիւն չէք տալիս ինձ, դուք, որ ազգականներիս հաւաքում էք զլիխս և պախարակում ինձ ամենքի առաջ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես, Ես... Օ՛հ, անգութ, Ես եմ ձեզ պախարակում, Ես եմ, որ հանգստութիւն չեմ տալիս ձեզ... Տեսէք, տեսէք, թէ ինչ դրութեան էք հասցը ինձ... (Ուղիւնութեան լւլւերն առաջն աժեւով) Տեսէք և ուրախացէք... Այդ է ձեր շնորհքը... Նզատ շունչ քաշելու իրաւունք չէք տալիս ինձ և Ես եմ ձեզ պախարակողը, Ես... Ես եմ, որ ամօթաբեր պայմաններ եմ դնում մի հասարակ զլիխագրի համար... (Հետագէն ժողովով) Ի՞նչ պատուաբեր փարմունք ձեր կողմից... Օ՛...

ԱՐԿԱԴԻ

Այսպէս թէ այնպէս, ձեր զլիխագիրը կախուած է ինձանից և միմիացն ինձանից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Գիտեմ, զիտեմ, պարոն, և դրա համար էլ օգուտ էք քաղում ձեր իրաւունքներից... Գիտեմ... Այստեղ օրէնքները ձեր օգտին են խօսում, ձեզ են պաշտ-

պանում: Ի՞նչ կարող եմ անել... Բայց կայ և երկնային դատաստան, որի առաջ պատասխան էք տալու մէկ օր:

ԱՐԿԱԴԻ

Երկնային դատաստանը վկայ, որ դուք գլխագիր չէք ունենալ, մինչև չստորագրէք այս թուղթը, որ վերադարձել էք... (Հանում է ծոցից լուսնու, բայց է անում չունի սեղանի վրայ և գրեթե պահպանակ) Համեցէք... (Լուսնու լուսնական աշխարհի վրայ և գրեթե պահպանակ) Ձեզ հետ եմ, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես այդ թուղթը չեմ ստորագրել...
ԱՐԿԱԴԻ

Շայցահեղութեանը մի հասցնէք ինձ, տիկին... Բարկութիւնը շատ բան կարող է առաջայնել... Ես ձեզ վերջին անգամն եմ առաջարկում. կամենաւմ էք ստորագրել այս թուղթը՝ այն կամ ոչ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞չ:

ԱՐԿԱԴԻ

Ո՞չ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞չ:

ԱՐԿԱԴԻ

Դուք, տիկին, Երեկ օրէնքից չէք վախենում... Գիտէք, որ Ես կարող եմ նարձագոյն ատենին դիմուլը, և ձեզ քաշ տալով կը բերեն իմ դուռը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Աւելի շուտ իմ դիմակը կը տանէք, քան թէ ինձ կենդանի:

ԱՐԿԱԴԻ

Երդվում եմ արևովս, որ դուք կը հասցնէք ինձ
այդ կէտին:

ՄԱՐԳԱՐԻՏ, ստորին դաշտացած:

Կատարեցէք ինչ կարող էք:
Բւժի մէջ ծայրից միւռ է անցնում:

ԱՆԱՀԻՏ

Տիկին, այն զինուորականն է:
ՄԱՐԳԱՐԻՏ

Ելու...

Քիչ է անում վայր տնինի:

ԱՐԿԱԴԻ

Ահա... Ձեր երկրպագուն է, երկի... չը՞մ, նզովեալ
օձ, անունս ու պատիւս խայտառակեցիք... (Թուշլթը
բնութ է ծոցը) Կը տեսնէք թէ ինչ սև օր կը բերեմ
ես ձեր զիսին... Դուք շուտով կըստանաք ատենի
հրաւէրը...

Գնում է մինչև նախաւնեալի դուռը, ուր հանդիպում է Ար-
դաշնակն:

ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԱՐՏԱՃԻՍ

ԱՐՏԱՃԻՍ, ստորագրութեամբ:

Ահ, ձերդ վսեմութիւն... Ես այս ըսպէիս ձեղ մօտ
էի:

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ էք ուզում, պարոն, ես ձեղ չեմ ճանաչում:

ԱՐՏԱՃԻՍ

Օ՛, մենք հին ծանօթներ ենք... Ձեր խոնարհ ծա-
ռայ Արտաշէս Արամեան...

Անուշիու դուրս է գնում:

ԱՐԿԱԴԻ

Դուք այն չեք, որ երեք ամիս առաջ իմ տանն
էիք:

ԱՐՏԱՃԻՍ

Այո, նա եմ:

ԱՐԿԱԴԻ

Ես ձեզ հետ ոչինչ գործ չունիմ, պարոն:
ԱՐՏԱՃԻՍ

Ես եկել էի ձեզ մօտ խոնարհաբար խնդրելու, որ
բարեհամէք շնորհել տիկնոջը իր գլխագիրը... Պատ
ուրախ եմ, որ ձեզ այստեղ եմ հանդիպում, երկի
դուք արդէն տուել էք ձեր համաձայնութիւնը...

ՄԱՐԳԱՐԻՏ, ստորագրութեամբ:

Դուք ինչ գեր էք կատարում այստեղ, պարոն, և
ինչ իրաւոնքով թոյլ էք տալիս ձեղ ինձանից հա-
ջիւ պահանջելու:

Մուգագութեամբ՝ աջ իրու սեղանի հառ հանդամն, ստորագրութեամբ
լւեան մէջ է:

ԱՐՏԱՃԻՍ, հանդիպութեամբ:

Ձեզ յայտնի է, պարոն. Ես տիկնոջ բարեկամն եմ
ի մանկութենէ:

ԱՐԿԱԴԻ

Բարեկամն եմ... Գիտեմ, հասկանում եմ...

ՄԱՐԳԱՐԻՏ, յեւը գլուխ ռանելով, ցածր:
Աշխ...

ԱՐՏԱՃԵՍ

Պարոն:

ԱՐԿԱԴԻ

Ես պարտական չեմ տիկնոջ ամեն մի բարեկամի
ցանկութիւնները կատարելու:

ԱՐՏԱՃԵՍ, առանձնով Աքաւուի Յանձնից, ցածր:
Աամ տիկնոջ զիլսագիրը, պարոն, կամ մեղանից
միայն մէկը կը մնայ կենդանի:

ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ, մենամարտութիւն... Մենամարտութիւն ա-
սածդ ես չեմ ընդունում:

ԱՐՏԱՃԵՍ

Ես ձեզ կը ստիպեմ, պարոն:
ՄԱՐԳԱՐԻՏ

Դադարեցէք, աղաջում եմ:
ԱՐԿԱԴԻ, Առաջնորդութիւն:

Թողէք ինձ:

ԱՐՏԱՃԵՍ, առանձնորդ:

Գլուխգիրը, իսկոյն:

ԱՐԿԱԴԻ

Թողէք, եթէ ոչ կըսպանեմ ձեզ այս բոպէիս:

ԱՐՏԱՃԵՍ

Փորձեցէք:

ԱՐԿԱԴԻ, ապրձանակը հանելով գրանից:

Թողէք, ասում եմ...

ՄԱՐԳԱՐԻՏ, ճշում է:

Աշխ...

ԱՐՏԱՃԵՍ, հետաքանակէ:

Օհօ...

Բանում է Աքաւուի յեւը:

ՄԱՐԳԱՐԻՏ, հէջ ընդունով:

Ի սէր Աստուծոյ...

ԱՐԿԱԴԻ

Ահա, տիկին... Երկուսիդ միասին կը ոչնչացնեմ:
ԱՐՏԱՃԵՍ, բանելով Աքաւուի հորդուց:

Ես ձեզ...

ԱՐԿԱԴԻ, ինդուսելով

Թողէք...

ՄԱՐԳԱՐԻՏ, աշուշնով:

Անահիտ...

Անահիտը նէր է վաղում:

ԱՐՏԱՃԵՍ, եկալ ապրձանակը:

Զարագործ... (Նայել ապրձանակին:) Այս ի՞նչ է... (Քը-
րիզ է բարձրացնում:) Դատարկ... (Շարունակում է որչծուլ:)
Եցալս էք վախեցնում գուռք մարդկանց: (Մարդունքնի:
չանգստացէք, տիկին, մեր վսեմափայլ հերոսը բնաւ
վտանգաւոր հակառակորդ չէ... Սա, ինչպէս երեսում
է, իր սեպհական ատրճանակից անգամ վախենում է:
Խաղաղնելով Աքաւուի դէմ ապրձանակի սուը, ծիծաղում է, իու:

Մարդունքը նշան է անում Անահիտին, որ ինչոյն դուրս է գնում:
ԱՐԿԱԴԻ, հէնուսի:

Անպիտան:

Կամուս է ի՞նչ պալ:

ԱՐՏԱՃԵՍ

Սպասեցէք, սպասեցէք, ձերդ վսեմութիւն. առէք
ձեր ատրճանակը:

ԱՐԿԱՌԻ, գնալով:
 Զեր բաղդն էր, պարոն, որ մոռացել էի լցնել...
 ԱՐՏԱՋԻՍ, գետարկութեան:
 Ի հարկէ... (Աստ-շը հրաւուժ) Բայց մեր հաշիւները,
 պարոն, դեռ վերջացած չեն:
 ԱՐԿԱՌԻ

Թողէք, խնդրեմ:

ԱՐՏԱՋԻՍ

Ո՛չ, պարոն, «Ակն ընդ ական» այս դէպքում: (Արդարաւութեան Արտերի յշաւութեան) Համեցէք, այս ձեր սեպհականութիւնն է: (Գրառակ հանուամ է իր առքմանութեան) Սրան ինչ կ'ասէք, ձերդ վսեմութիւնն: (Արտերի գուանութեան վաստակում էն, թէ ինչ կ'անէիք ինձ, եթէ ես ձեզ պէս վախկոտ լինէի և դուք ինձ պէս զինուած: Բայց ահա, այս ևս ձեզ: (Աստ-շը հրաւուժ) Համեցէք, փորձեցէք... Համեցէք, ձերդ վսեմութիւն, դուք կամենում էիք սպանել ինձ... Մի վախենաք, տիկինը ոչ ոքի չի ասիլ:

Գլուխը շարժելով, գետարկութեան ձիթաղուամ է:

ԱՐԿԱՌԻ, Տէ՛ռուի, ցածր:

Անզգամ:

ՄԱՐԴԱՐԻՏ

Բաւական է, պ. Արտաշէս, աղաջում եմ... Թողէք գնայ իր ճանապարհը:

ԱՐՏԱՋԻՍ

Ամենայն ուրախութեամբ, տիկին, միայն ես երդուել եմ ձեր զիխազիրը ձեռք բերել անպատճառ... Յոյժ ունիմ որ նորին վսեմութիւնը չի զլանալ մի երկու խօսք գրել հէնց այստեղ: (Հրաւութեան Արտերին

դէռնե յան իունի սեղանը:) Խնդրում եմ, ձերդ վսեմութիւն... (Արտերին լուս նայուամ է Արդարաւուժ առքմանութեան) Աւրիշ ելք չկայ... (Արտերին յանձնութեան վաստակում է սեղանի հօտ. Արդարաւութեան առքմանութեան դէռները գրանցուած են նրան լուսութեան) Համեցէք:

Արդարաւուժ գրուած է:

ՏԵՍԻԼ

ՆՄԱՆԻ, ԼԵՒՈՆ, որ հանուամ է յետուին մի ծրաբ:

ԱՐՏԱՋԻՍ, յետուին նշանով պարուերուած է Լեռնին լսել. Լեռնին հուամ է առացած: Դայելով Արտերի գրութեանը:

Այն, այն, ձերդ վսեմութիւնն... (Մի առնե իսուս լեռնաւութեան է նրան յածը յայնուէ) Ճիշդ այդպէս է... (Արտերին դրանունը որբուած է ճանապարհ, յերայ վերջանելով գրելը, յետուին երես նփուամ է լըլըն և ուշեց վեր հետաքա:) Պատ շնորհակալ եմ, ձերդ վսեմութիւնն: (Վերջնեւով լուսը) Այսուհետեւ ես ևս պատրաստ եմ ձեզ ծառայելու: (Ցածր:) Յոյս ունիմ, պարոն, որ դուք մտքովդ էլ չէք անց կայնիլ երբեկցէ չզորքացնել այս թղթի նշանակութիւնը... (Գնալով աղջկա գրեալ Արդարաւուժը) Ահա, տիկին, և ձեր զըլ խաղիրը:

Թուղթը ծալուամ է սեղանի վըայ:

ԱՐԿԱՌԻ, առաջին, սպասանուած:

Այժմ կը տեսնենք...

Մի առնե առյու գնուած է, հանդեղելով Լեռնին իսուս է առնուած, պարաւուած նայուամ է նրան յերայ Արդարաւուժ իսուն և ուստեւն յետուին շարժելով բարձրացած գրուած է գնուած:

ՏԵՍԻԼ Հ

ՄԱՐԴԱՐԻՏ, ԱՐՏԱՃԻՍ, ԼԵՒՈՆ

ԱՐՏԱՃԻՍ, յէր նոյնէլով
Այն, ձերդ վսեմ... Փախաւ...

Ծիծողութ:

ԼԵՒՈՆ

Ես այսոս ոչինչ չեմ հասկանում:

ԱՐՏԱՃԻՍ

Յետոյ, Լեռն, յետոյ... Այժմ տես... (Վէրցնէլով լուղ-
լը:) Ահա այն կախարդական թուղթը, որի մասին
մենք այնքան աշխատում էինք:

Թուղլը պաշտութ է նոյն:

ԼԵՒՈՆ, աչք անցնէլով լուղլը:

Այն, այն, նա կատարեալ իրաւունք է տալիս տիկ-
նոցը ազատօրէն բնակուելու ուր և կամենայ... Բայց
ինչպէս, ինչպէս կատարուեցաւ այս հրաշքը... Ի՞նչ-
պէս բերիր գու նրան այստեղ կամ ինչպէս համոզե-
ցիր գու նրան:

ԱՐՏԱՃԻՍ

Ես նրան այստեղ գտայ, նա այստեղ էր արդէն...
(Աջ ցուցանոտը բարձրացնէլով ունի էրէինս:) Ահա, Լեռն...
Բայց այդ մասին յետոյ... Առ այժմ շնորհաւորենք
տիկնոջը... Յոյս ունիմ, որ այսուհետեւ ոչ ոք չի հա-
մարձակուի նրան վշտացնել:

ԼԵՒՈՆ, գնալով ունի Մարտարելու:

Օ՛, ի բոլոր սրտէ:

ՄԱՐԴԱՐԻՏ, առմեւով նոյն չետք:

Ջնորհակալ եմ, բարեկամներս... Ջատ, շատ շնորհա-
կալ եմ:

ՀԵՒՈՆ

Ի՞նչպէս հեշտ է եղել այս ամենը մէկ ամուսնու-
համար և ինչպէս գժուար այնքան իշխանաւորների-
համար: (Թուղլը ունում է սեղանի գրայ:) Այնքան աշխա-
տեցինք, հազիւ հազ կարողացանք այս հրամանագի-
րը միայն ձեռք բերել... Ահա, տիկին, ոստիկանա-
պետը պատուիրում է թաղապետին, որ անհանգիստ
չանէ ձեզ, մինչև ձեր գործը օրինական ընթացք
կըստանայ:

Ծրբը ունում է սեղանի գրայ:

ՄԱՐԴԱՐԻՏ

Կրկին շնորհակալ եմ, պ. Լեռն: Այդ հրամանա-
գիրն էլ մեծ ողորմութիւն է... Փառք Աստուծոյ,
այժմ գոնէ մի փոքր ժամանակ հանգիստ կը թող-
նեն ինձ, թէև այն բռնակալը սպառնում է անմի-
ջապէս դիմել Բարձրագոյն ատենին, (Պատահ ժպէտուի:)
որ քաշ տարով տանեն ինձ նրա դուռը:

ԼԵՒՈՆ

Օ՛, տիկին...

ԱՐՏԱՃԻՍ

Հաւատացնում եմ ձեզ, տիկին, որ այսուհետեւ մէկ
քայլ անգամ չի անիլ նա ձեր դէմ: Այդ մասին ես
եմ ձեզ խօսք տալիս... Մենք ինքներս կը դիմենք
ուր հարկն է, դուք միամիտ եղէք:

ԼԵՒՈՆ

Ի հարկէ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչքան վիշտ ու չարչարանք եմ պատճառում ես
իմ բարեկամներիս:

ԱՐՏԱՂԵՍ

Ա'ս, ի՞նչ էք հրամայում...

ԼԵԽՈՆ

Միթէ պարտաւոր չենք...

ՏԵՍԻԼ ԹՇ

ՆԲԱՆՔ, ՀԵՂԻՆՔ

ՀԵՂԻՆՔ, Կախուսէննակէ դաներից և վերաբերան հանելով,

Ի՞նչ արիք, պարոններ, ի՞նչ շինեցիք: (Վերաբերան
պատես է Անահիտին, որ հեռաւում էր արտա:) Կարողացաք մի
ճար անել արդեօք:

ԼԵԽՈՆ

Ուրախացիր, հրեշտակս, ուրախացիր. ահա տիկնոջ
զլսագիրը:

Վերաբերան աշունից լուսվը, պալիս է արտա:

ՀԵՂԻՆՔ

Ի՞նչպէս, միթէ... Օհ, այ ուրախութիւն... (Մար-
դարանն:) Ընորհաւորում եմ, հոգիս... (Վայ շնչելով հաճ-
բարաւում է Մարդարանն:) Ի սրտէ շնորհաւորում եմ...
Չասացի քեզ որ Աստուած ողորմած է... Ահա վեր-
ջապէս... (Թառշլք դնելով աշունի վրայ:) Այս շնորհը
երկի Աստուած մեզ համար էր պահել, այսօրուայ
համար... Մենք երջանիկ կը լինինք, Լեռն... (Վերջե-
րան ժամանելը, պալիս է Անահիտին, որ դարձու է դարձ յան դը-

նից:) Բայց ինչպէս ձեռք բերիք այս թուղթը: Զլ՛
որ նորին վսեմութիւնը չէր համաձայնում:
ԼԵԽՈՆ

Ի՞նչ կ'ասես, հոգիս, որ նա ինքը, հէնց այստեղ,
հէնց քո սեղանի վրայ, հէնց իր ձեռքով գրեց այդ
թուղթն այս բոպէիս... (Մարդարանը անելով Արարածուն,
Տիգրես Հեղինքն մասցէ և զարմացած:) Ահա...
ԱՐՏԱՂԵՍ, բժիշկ:

ԼԿՈՆ

ՄԱՐԳԱՐԻՏ

Դա մի ամբողջ պատմութիւն է, հեղինէ, ես յե-
տոյ կ'ասեմ քեզ:

ՀԵՂԻՆՔ

Լաւ... (Տէսնելով ծրաբը) Խոկ այս ի՞նչ ծրար է:

ԼԵԽՈՆ

Ոստիկանապետի հրամանն է, թէև այժմ աւելորդ,
տանում էի թաղապետին յանձնելու, որ տիկնոջը
չնեղացնեն:

ՀԵՂԻՆՔ

Տար, Լեռն, տար, թող այսուհետեւ էլ ոստիկանի
երես չտեսնենք մենք այստեղ:

ԼԵԽՈՆ

Միամիտ եղիր, էլ ոչ ոք չի նեղացնիլ մեզ:
ՀԵՂԻՆՔ

Փառք Աստուծոյ, վերջապէս հանգստացանք: Այժմ
ես գնամ և ճաշի պատրաստութիւն տեսնեմ:
ԼԵԽՈՆ

Ինձ էլ կը թողնես, հոգիս, որ օգնեմ քեզ, այն-
պէս չի:

ՀԵՂԻՆԻ

Կարող ես: (Ժառանչավ) Ձի՞ որ մեր նշանաբանն է միասին աշխատել:

Մարդու հոգ հեռացնեած պիզում է:
ԼԵԽՈՆ

Անշուշտ... (Արանջնուն:) Դու այսօր մեր հիւրն ես ի հարկէ:

ՀԵՂԻՆԻ

Ի հարկէ... Յոյս ունիմ որ մեր եղբայրը կը համաձայնի մասնակից լինել ընդհանուրիս ուրախութեանը:

ԱՐՏԱՃԱՎ

Մեծ յօժարութեամբ, բայց մի կէս ժամից յետոյ պարտական եմ գնալու... Կարեոր գործ կայ և խոստացել եմ:

ՀԵՂԻՆԻ

Վնաս չունի, մենք ձեզ կը սպասենք թէկուզ մինչև երեկոյ: (Արանջնուն Գլուխ է պաշտաման: Դիմել Մարդու հոգ) Իսկ դու, հոգիս, ինչի՞ այդպէս տիսրեցիր... Բաւական է, խնդրեմ, մի փոքր էլ ուրախանանք... Դեռ տես թէ ինչ օրեր ենք անցկացնելու գիւղումը... (Արանջնուն:) Գիտէք, եղբայր Արտաշէս, Լւոնս այնքան բարի է, որ կամենում է յատկապէս ինձ համար ուսումնարան հիմնել մեր գիւղումը:

ԱՐՏԱՃԱՎ

Հրաշալի՛ գաղափար, հրաշալի՛ ասպարէզ գործունէութեան...

ԼԵԽՈՆ, Արանջնուն:

Այդ մասին դեռ ես շատ բան ունինք կարգադրելու...

ՀԵՂԻՆԻ

Կարող էք երեակայել, պի Արտաշէս, թէ որքան ուրախ եմ ես, ինչքան երջանիկ, որ ապրելով սիրած մարդու հետ՝ միևնույն ժամանակ պարապ չեմ մնալու, և որ ես ևս մասնակից եմ լինելու ժողովրդի յառաջադիմութեան գործին:

ԱՐՏԱՃԱՎ, Ժառանչավ:

Ես լիովին ըմբռնում եմ, քոյրիկս, ձեր զգացմունքը: Հեղինէն գլուխ է պաշտամ:

ԼԵԽՈՆ

Գիտէք ինչ, պարոններ... Եկէք ուղղակի քշենք գնանք մեր գիւղը, հէնց իսկոյն: Համաձայն էք:

ՀԵՂԻՆԻ

Հիանալի է:

ԼԵԽՈՆ, Մարդու հոգ:

Ի դէպ, տիկին, ձեզ վրայ մի փոքրիկ պարաք էլ կայ. յիշում էք... Կը ճաշենք այնտեղ, կ'ուրախսնանք և երեկոյեան դարձեալ կը վերադառնանք միասին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես համաձայն եմ:

ՀԵՂԻՆԻ, Հրաշալի:

Հրաշալի է, հրաշալի:

ԼԵԽՈՆ, Արանջնուն:

Իսկ դու ինչ կ'ասես... Կարող ես գործու վերջացնել և հասնել մեզ:

ԱՐՏԱՃԱՎ

Կ'աշխատեմ:

Լւսնը վէրցնում է իր բերութ ծրագը:

ՀԵՂԻՆԵ

Աշխատեցէք, եղբայրս, ձեզ հետ միասին մենք
աւելի ուրախ կը լինինք... Իսկ մենք, ես ու Լևո-
նըս, այժմ ամեն բան կը պատրաստենք և Աստուած
բարի ճանապարհ տայ: (Գրեւլ Մարտորին:) Ի՞նչքան
ուրախ եմ... ի՞նչքան երջանիկ եմ ես, իմ անդին
Մարդարիս... (Լեռնին, որ խօսում էր Արտաշէսի հետո)
Գնանք, Լևոն:

ԼԵԽՈՆ

Մինչև աշխարհի ծայրը, եթէ կամենաս:

ՀԵՂԻՆԵ

Ո՛չ, ոչ, մինչև հետևեալ սենեակը առայժմ:
ԼԵԽՈՆ

Աղաւնեակս...

Հեղինէն շախ ի՞նչէ դառն հայ ի՞նչէ և առանց և աշխատից հրա-
շերում է Լևոնին ասուց անցնէլ, իո՞ւ սո համբուրում է հարս-
նացուի շեռչը և ի՞նսթանուսի դուրս են գնում:

ՏԵՍՎԻԼ Ժ

ՄԱՐԴԱՐԻՏ, ԱՐՏԱՋԷՍ

ԱՐՏԱՋԷՍ

Երջանիկ գոյգ:

ՄԱՐԴԱՐԻՏ

Եցո՞ւ, ես հաւատում եմ, որ չեղինէս երբէք զղա-
լու տեղիք չի ունենալ:

ԱՐՏԱՋԷՍ

Անկասկած... Լևոնը թեթևամիտ մարդ չէ:

ՄԱՐԴԱՐԻՏ

Եցո՞ւ, ճանաչում եմ: (Փոքր լոռ-լեռից յերայ վեցանում է
Արդութիւն գրած լուսնիւ և իրեն դնում սեղանի վրայ:) Ես դեռ
կս չեմ կարողանում ուշքի գալ, թէ ի՞նչպէս կատա-
րուեցաւ այս ամենը:

ԱՐՏԱՋԷՍ

Ներողութիւն եմ խնդրում, ափկին, որ ձեր ներ-
կացութեամբ ես չկարողացայ զսպել ինձ:

ՄԱՐԴԱՐԻՏ

Ի՞նչ էք ասում, պ. Արտաշէս, գուք ինձ օգնու-
թեան հասաք ամենադժուար րոպէին... Ինչ արած՝
բաղդս այնպէս բերեց, որ ես այս օրին հասայ...
Իրաւունքներից զուրկ, անունից զուրկ, ազատութիւ-
նից զուրկ... (Աշեւը ուբեռ է:) Ներեցէք, պ. Արտա-
շէս, ներեցէք իմ արտասուբները:

ԱՐՏԱՋԷՍ

Հանգստացէք, տիկին, աղաչում եմ ձեզ, հանգըս-
տացէք, Զեր դրութիւնն աննկարագրելի ցաւ է պատ-
ճառում ինձ, ձեր արտասուբները այրում են սիրտս:

ՄԱՐԴԱՐԻՏ

Գիտեմ, պ. Արտաշէս, գիտեմ թէ որչափ կարեկից
էք ինձ:

ԱՐՏԱՋԷՍ, ՊԵՆԻ ՎԵՐ ՀԵՆԱՊՐԵ

Կարեկից եմ, և միմիայն կարեկից... Ո՛չ, տիկին, ոչ,
աւելի խորին զգացմունք է ալէկոծում իմ սիրտը:
Հաւատացէք, տիկին, ես պատրաստ եմ յանձն առնել
ամեն տեսակ զոհաբերութիւն, ամեն տեսակ տան-
ջանք, միայն թէ կարողանամ թեթևացնել ձեր
դրութիւնը, բարեփոխել ձեր վիճակը:

ՄԱՐԳԱՐԻՏ, անցնելու վեր էնուլով:
Բարեկամս... (Բանելով չեռչը:) Իմ անդին, իմ հաւատարիմ բարեկամս...

ԱՐՏԱՋԻՍ, մերով լսուած:

Աշխ, Մարգարիտս, իմ մանկութեան Մարգարիտս...
Արեգակնառիկ համբուրում է չեռչը:

ՄԱՐԳԱՐԻՏ, ճեմալետմբ աղադելով չեռչը:

Խնայիր ինձ, Արտաշէս...

ԱՐՏԱՋԻՍ, շարուածովով:

Այսուհետև միայն մահը կարող է բաժանել ինձ
քեզանից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բարեկամս... Արտաշէս... Նստիր, խնդրում եմ:
ԱՐՏԱՋԻՍ, բորբոքուած և անբուած Մարգարիտի չեռչը բառած:

Լսիր, լսիր, Մարգարիտս, աղացում եմ քեզ, լսիր
ինձ... Թոնց տուր պապանձուած լեզուս բանալ, թոնց
տուր ասել քեզ այն, ինչ որ այսքան տարի չեմ հա-
մարձակուել արտասանելու... Թոնց տուր ինձ ասել, որ
ես քեզ սիրում եմ, սիրում եմ այն օրերից, երբ դեռ
երեխսայ միասին խաղում էինք, միասին զուարձա-
նում... Ո՞հ, Մարգարիտ, իմ անդին Մարգարիտս,
ես քեզ սիրում եմ հոգոյս բոլոր զօրութիւնով, սի-
րում եմ այնքան, որքան բնութիւնը մարդուս ոյժ
է տուել սիրելու... Աստուած քեզ ինձ համար էր
ստեղծել, մարդիկ լսեցին ինձանից...

ՄԱՐԳԱՐԻՏ, մետիւնով:

Արտաշէս, Արտաշէս, դու ինձ տարար բոլորվին
մի ուրիշ աշխարհ... Կարծես թէ այս ամենը ցնորք
է, լուսազարդ մի ցնորք... Այս, դու ինձ սիրում ես...

Վաղուց է որ ես զգում եմ այդ սէրբ, վաղուց է որ
հասկանում եմ ես դրան... հաւատած ինձ, Արտաշէս,
որ նոյն անսահման սիրով ես ևս քեզ եմ սիրում
և ամբողջ աշխարհում ես ամենաերջանիկ կինը
կը լինէի, եթէ կարողանացի քեզ պատկանել յաւի-
տեան...

ԱՐՏԱՋԻՍ, հրանտած:

Մարգարիտս... Ուրեմն բոլորը կորած չէ ինձ հա-
մար... Ուրեմն դեռ ևս երջանկութեան ցոյս կայ ինձ
համար...

ՄԱՐԳԱՐԻՏ, մէրուսի:

Ո՞հ, որքան ապաբաղդ եմ ես... (Անցնելով մէ ունէ
այլ) Ո՞րքան ապաբաղդ...

ԱՐՏԱՋԻՍ, հօպէնունով:

Մարգարիտս...

ՄԱՐԳԱՐԻՏ

Աշխ, Արտաշէս, խորին անդունդը բաժանում է
մեզ միմեանցից... Մեր մէջ կանգնած է մի դարեւոր
պարիսափ, որը քանդելու համար գուցէ մեր ամբողջ
կեանքը բաւական լինի:

ԱՐՏԱՋԻՍ

Ոչինչ, ոչինչ արգելք մեզ չի կարող բաժանել այ-
սուհետեւ. մենք սիրում ենք միմեանց:

ՄԱՐԳԱՐԻՏ

Դեռ երեխսայ՝ ես քեզ սիրում էի, չհասկանալով
այդ սէրբ... Ծնողներս այնպէս արին, որ ես մի
անարժան մարդու կին դարձայ... Զատ աշխատեցի,
շատ տանջանքներ կրեցի, շատ պատերազմեցի ինքս
ինձ հետ, որ սիրեմ նրան, բաց չկարողացաց... Նա
12

իր վարձունքով սիրում յաւիտեան կտրեց իրանից... Այժմ մենք բաժանուած ենք, ես նրանից ազատուել եմ, նա իրաւունք չունի արգելք դնել իմ երջանկութեանը, որովհետեւ ինքն ապրում է, ինչպէս կամենում է... Բայց հասարակութիւնը իր պահանջներն ունի, իր սահմանած կարգ ու կանոնը, որի առաջ ես պարտաւոր եմ խոնարհուիլ... Ես երջանիկ կը լինէի միայն քո անունը կրելով, Արտաշէս, միայն օրինաւոր ամուսինդ լինելով:

ԱՐՏԱՃԵՍ

Երկնային հրեշտակս, ես հասկանում եմ քո զգացմունքը, քո արդարացի պահանջը... Այդ մասին ես հէնց այսօրուանից կ'աշխատեն, դու միամիտ եղիր. ես մի բոլիչ անգամ չեմ հանգստանալ, մինչև ազատութիւնդ ձեռք չբերեմ... Բայց մինչև այդ երջանիկ օրը, մինչև որ մեր ամուսնութեան իրաւունքն ստանանք, մինչև որ կարողանանք մեր միութեան ծէսը կատարել մարդկանց առաջ, միթէ մենք արդէն ամուսիններ չենք Աստուծոյ առաջ... Մենք սիրում ենք միմեանց, մեր երջանկութիւնը միայն քեզանից է կախուած, իմ աննման Մարգարիտ... Տուրինձ այդ երջանկութիւնը, աղաչում եմ քեզ, Մարգարիտ, մենք յախտեան երջանիկ կը լինինք... Դու գիտես, որ յաջիտեան կը սիրեմ քեզ, և այս սէրը միայն մահը կարող է դադարեցնել... (Լուսելին) Մարգարիտս...

ՄԱՐԳԱՐԻՏ

Հաւատացիր, Արտաշէս, ես ևս պակաս չեմ սիրում քեզ, որովհետեւ երբ կամենաս, երբ հարկաւոր լինի,

կեանքս կը դոհեմ քեզ, քեզ համար, քոն երջանկութեան համար... Բայց պատիւս, Արտաշէս, երբէք, երբէք չեմ զոհիլ...

ԱՐՏԱՃԵՍ, ՅՈՒՂԱՌԻՇԱԾ:

Օ՛, հրեշտակս... Ո՛րքան վեհ ես դու այս վայրկեանիս, ո՞րքան պաշտելի...

ՄԱՐԳԱՐԻՏ

Երկուսս էլ թշուառ ենք, Արտաշէս... Երկուսս էլ պիտի տանջուինք... (Փոքր լաւաբանից յետոյ հոգեսունը Արդարական և Յեղական) Գնա, հոգիս, գնա, աշխատիր որ ազատութիւնս ձեռք բերես, այն ժամանակ ես կը գրկեմ քեզ յաւիտեան:

ԱՐՏԱՃԵՍ

Մարգարիտ, մինչեւ օրս քո սիրով եմ ապրել, մինչեւ օրս դու ես եղել միշտ ինձ առաջնորդող փայուն աստղը... Այժմ երգվում եմ քեզ մեր սուրբ սիրով, երգվում եմ քո արևով, Մարգարիտ, որ կեանքիս միակ նպատակն այսուհետեւ քո ազատութիւնը կը լինի...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այն, Արտաշէս, մեր երջանկութեան միակ ճանապարհն այդ է:

ԱՐՏԱՃԵՍ

Դու հանգիստ եղիր, հոգիս, ես ամենայն միջոց գործ կը գնեմ... Մնաս բարեաւ, ես գնում եմ... (Առաջաւ և յետէլ) Ես գնում եմ, պահապան հրեշտակս, և կը վերադառնամ քեզ մօտ միմիայն այն ժամանակ, երբ ազատութիւնդ ձեռք բերած կը լինիմ... Թո՛ղ տուր ինձ միայն համբուրել քո անարատ ճակատը,

և այս համբոցը թող առաջինն ու վերջինը լինել
մինչեւ մեր պատկման օրը... (Մաքուրեռը Քըստը Խանուցե-
ցնում է:) Մնաս բարեաւ... (Համբուրում է մակուրը) Այժմ
մահ կամ ազատութիւն...

Դարձ և գնում:

(ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՅՎԻ:

Այս, մահ կամ ազատութիւն...

Թայինուը ոտնում է աշխերին: Զախ իռաջ ռորդի ռորդի Շռու-
նու Գուլեն՝ Հեղինեն Քւերուու ու մերարքան յետին, Լեռնը
Ճանապարհեւ Գորենի Պայուսածով: Տեսնելով Մաքուրի Ռըս-
լիւնը, Նրանք աղջում են: Պարին:

ՎԵՐԱ

Կոմի

20 MAY 2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0552046

—
B. G.